

**ՀՀ ԳԱԱ Մ. ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒ ԹՅԱՆ  
ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՀՈԿՐԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՏՅՈՄ ԴԱՆԻԵԼԻ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒ ԹՅԱՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒ ԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒ ԹՅԱՆ  
ԿԱՏԱՐԵԼ ԱԳՈՐԾՈՒ ՄԸ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒ ԹՅՈՒՆ

Ը.00.02 - «Տնտեսություն, նրա ոլորտներին տնտեսագիտությունը և  
կառավարումը» մասնագիտությունը տնտեսագիտություն  
թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Գիտական ղեկավար՝  
տնտեսագիտություն  
դոկտոր, պրոֆեսոր  
Ս.Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2016

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒ ԹՅՈՒՆ**

ԳԼՈՒԽ 1. ԱԳՐԱՐԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆՅՐԱԺԵԾՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ.....	9
1.1. Ագրարային ոլորտի պետական աջակցության անհրաժեշտությունը .....	9
1.2. Ագրարային ոլորտի պետական աջակցության համակարգը .....	18
1.3. Ագրարային ոլորտի պետական աջակցության միջազգային փորձի ուսուցումնասիրությունը .....	31
ԳԼՈՒԽ 2. ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՎԻՃԱԿԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ .....	44
2.1. ՀՀ տնտեսության ներդրումային միջավայրը .....	44
2.2. Պետական աջակցության ծրագրերը և ֆինանսավորման ծավալները .....	55
2.3. Ագրարային ոլորտում արտաքին ներդրումների խթանման համակարգը .....	73
ԳԼՈՒԽ 3. ՀՀ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼ ԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .....	87
3.1. Արտահանման կողմնորոշում ունեցող արտադրանքների արտադրության զարգացման պետական աջակցություն .....	87
3.2. ՀՀ ագրարային ոլորտում ներդրումային միջավայրի բարելավման ֆինանսավարկային մեխանիզմների կատարելագործում .....	100
3.3. Ագրարային ոլորտում նորամուծական գործունեության խթանում .....	111
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	121
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ .....	125
ՀԱՎԵԼ ՎԱՃՆԵՐ .....	134

## ՆԵՐԱՃՈՒ ԹՅՈՒՆ

**Աստիճակաբարձություն**

**թեմայի**

**արդիականությունը:**

Գյուղատնտեսությունը հանդիսանում է ՀՀ տնտեսության հիմնական ճյուղերից մեկը և նրա ֆինանսավորման համակարգը կարևորագույն դեր է խաղում հասարակության զարգացման պետական քաղաքականության գործում: Եվ չնայած ՀՆԱ-ում գյուղատնտեսական համախառն արտադրանքի մասնաբաժնի կրճատման միտմանը, այն հանդիսանում է պարենամթերքի հիմնական աղբյուրը և մշտապես պետական աջակցության կարիք ունի: Սակայն ագրարային բարեփոխումների ընթացքում կատարված բացթողումները հանգեցրին ճգնաժամի առաջացմանը, արտադրության ծավալների նվազմանը, գյուղատնտեսական ապրանքարտադրողների կենսամակարդակի անկմանը, գյուղական տարածքներում բացասական դեմոգրաֆիական հետևանքների առաջացմանը:

Ագրարային ոլորտի ներկայիս բարդ դրությունը պայմանավորված է արտադրության անկմամբ, շուկայական վերափոխումների ընթացքում գիտականորեն հիմնավորված հայեցակարգի և իրավական բազայի, ինչպես նաև ընդլայնված վերարտադրության համար բարենպաստ տնտեսական պայմաններ ստեղծող ֆինանսավարկային մեխանիզմի բացակայությամբ, ինչն էլ հանգեցրեց գոյություն ունեցող համակարգի քայքայմանը: Առաջացող հակասությունները շուկան գործնականում ինքնուրույն հաղթահարել չի կարող, քանի որ ագրարային ոլորտում վերջինիս ինքնակարգավորման հնարավորությունները սահմանափակ են: Հետևաբար, ոլորտի պետական կարգավորումը օբյեկտիվ անհրաժեշտություն է:

Ներկայումս պետության կողմից իրականացվող ծրագրերը դեռևս բավարար չափով արդյունավետ չեն և հիմքեր չեն ստեղծում ոլորտի կայուն զարգացման համար: Ընդ որում, խոսքը վերաբերում է ոչ թե պետական հատկացումների չափերին, այլ պետական ագրարային քաղաքականության իրականացման ամբողջական համակարգի ստեղծմանը, որը կնպաստի ոլորտում մասնավոր ներդրումների ներհոսքին:

Պետական կարգավորումն իրականացվում է օրենսդրական, հարկային, վարկային ձևերով: Հարկ է նշել, որ ներկայումս, երբ ագրարային ոլորտում գործող կազմակերպությունները նյութական և ֆինանսական ռեսուրսների խիստ կարիք ունեն, պետական միջոցների սղության պայմաններում առավել արդիական է համարվում ֆինանսավորման վարկային ձևը: Դա բացատրվում է նրանով, որ օրենսդրական կարգավորումը ուղղակի ազդեցություն է չի ունենում գյուղատնտեսության ռեսուրսային ներուժի վրա: Հարկային կարգավորումը այդքան էլ արդյունավետ չէ, քանի որ արդեն իսկ ագրարային ոլորտի համար սահմանված են զգալի արտոնություններ: Իսկ պետական միջոցների սղության պատճառով սուբսիդավորման հնարավորությունները սահմանափակ են: Ուստի, դիտարկելով ագրարային ոլորտի կազմակերպությունների ներդրումային գործունեության պետական աջակցության մեթոդների համակարգը, կարևորում ենք վերադարձել իրենց սկզբունքով ֆինանսավորումը, որը կնպաստի ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործմանը:

Հետևաբար, անհրաժեշտություն է առաջանում ձևավորել ագրարային ոլորտում տնտեսական հարաբերությունների և պետական աջակցության ինստիտուտների նոր համակարգ, որը կլինի ճկուն և առավել ազուլյնս կհամապատասխանի նրա պահանջներին:

**Թեմայի ուսումնասիրվածության աստիճանը:** Ագրարային ոլորտի պետական կարգավորման հիմնախնդիրները մշտապես եղել են թե՛ հայրենի և թե՛ արտասահմանյան տնտեսագետների ու շարժարկային կենտրոնում: Ընդ որում, դրանք առանձնակի կարևորություն են ձեռքբերեցին անցումային շրջանում, երբ սկսեց գյուղատնտեսական արտադրության նոր մոդելի ձևավորման գործընթացը: Սակայն այս հիմնախնդրի գիտական ուսումնասիրվածության աստիճանը սպառնիչ անվանել չի կարելի: Պետության տնտեսական դերի, ագրարային ոլորտի պետական աջակցության քաղաքականության, ֆինանսական ենթակառուցվածքների զարգացման հիմնահարցերը լրացուցիչ տեսակետ և մեթոդաբանական վերլուծության կարիք ունեն:

**Հետազոտության նպատակը և խնդիրները:** Ատենախոսության հիմնական նպատակը ՀՀ ագրարային ոլորտի կազմակերպության ներդրումային գործունեության տեսամեթոդաբանական հիմքերի և առանձնահատկությունների հետազոտման հիման վրաներդրումային գործունեության պետական աջակցության մեխանիզմների կատարելագործմանն ուղղված առաջարկությունների մշակումն է, որոնք կնպաստեն ոլորտի կայուն զարգացմանը:

Նշված նպատակին համապատասխան՝ աշխատանքի հիմքում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- հիմնավորել ագրարային ոլորտի պետական աջակցության անհրաժեշտությունը,
- ուսումնասիրել ագրարային ոլորտի պետական ֆինանսական աջակցության միջազգային փորձը և դասակարգել գոյություն ունեցող աջակցության մեթոդները,
- հետազոտել ՀՀ տնտեսության ներդրումային միջավայրը, բացահայտել վերջինիս վրա ազդող գործոնները,
- բացահայտել ՀՀ ագրարային ոլորտում իրականացվող պետական ֆինանսական աջակցության ծրագրերի թերությունները, կատարել դրանց կատարելագործման առաջարկություններ,
- մշակել ոլորտում օտարերկրյա ներդրումների խթանման գործունե համակարգ,
- ուսումնասիրել գյուղատնտեսական արտադրանքի արտահանման ներկա վիճակը և կատարել առաջարկություններ, որոնք կնպաստեն արտահանման ծավալների ավելացմանը,
- վերլուծել ագրարային ոլորտում պետական ֆինանսավարկային քաղաքականության ներկա վիճակը, հիմնավորել նրա կատարելագործման անհրաժեշտությունը և գնահատել լրացուցիչ ֆինանսական ռեսուրսների ներգրավման հնարավորությունը,

- մշակել ագրարային ոլորտում նորամուծական գործունեության պետական աջակցության հիմնական ուղղությունները:

**Յետազոտության օբյեկտը և առարկան:** Յետազոտության օբյեկտը ՀՀ ագրարային ոլորտի կազմակերպություններն են, ներդրումային գործունեության աջակցությանը մասնակցող պետական ինստիտուտները և առևտրային բանկերը: Յետազոտության առարկան ՀՀ տնտեսության ագրարային ոլորտի կազմակերպությունների ներդրումային գործունեության պետական աջակցության մեխանիզմների գնահատման և կատարելագործման հիմնահարցերն են:

**Յետազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը:** Յետազոտությունում առաջադրված խնդիրների լուծման համար տեսական հիմք են հանդիսացել տնտեսագիտության դասական և ժամանակակից տեսությունների հիմնադրույթները, զարգացած և անցումային երկրների տնտեսական քաղաքականությանը վերաբերող հայ և օտարերկրյա հետազոտողների ուսումնասիրությունները, միջազգային կազմակերպությունների և փորձագետների վերլուծությունները, մեթոդական ու ռազմավարական մշակումները:

Յետազոտությունում կիրառվել են տեսական և տրամաբանական, վիճակագրական և համեմատական վերլուծության տարբեր մոտեցումներ և մեթոդներ:

Յետազոտության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ իրավական դաշտում գործող օրենքները, կառավարության որոշումները, գյուղատնտեսության նախարարության ծրագրերը, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության և այլ միջազգային վիճակագրական ծառայությունների տվյալները, հեղինակավոր կազմակերպությունների հրատարակած հաշվետվությունները, զեկոլյցները, պաշտոնական տեղեկագրերը:

**Յետազոտության գիտական նորույթը:** Աշխատանքում իրականացված ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա ստացված արդյունքներից որպես գիտական նորույթ, հատկապես, կարևորվում են հետևյալները՝

- հիմնավորվել է մասնագիտացված ներդրումային գործակալությունների ստեղծման գաղափարը և ներկայացվել է դրանց զարգացմանը նպաստող միջոցառումների համակարգը,
- բացահայտվել են ՀՀ ագրարային ոլորտում իրականացվող պետական աջակցության ծրագրերի թերություններն ու բացթողումները, մշակվել են դրանց կատարելագործման ուղիներ,
- մշակվել են նորամուծական գործունեության պետական աջակցության հիմնական ուղղությունները՝ գիտատեխնիկական հետազոտությունների ֆինանսավորում, ֆինանսական արտոնությունների տրամադրում, նորամուծական նախագծերի հավաստագրում և պետական երաշխիքների տրամադրում:

**Ատենախոսության տեսական ու կիրառական նշանակությունը:**

Ատենախոսության շրջանակներում կատարված ուսումնասիրությունների, քանակական վերլուծությունների արդյունքները, կատարված եզրակացությունները և առաջարկությունները կարող են օգտագործվել ՀՀ կառավարության, մասնավորապես՝ գյուղատնտեսության և էկոնոմիկայի նախարարությունների կողմից ագրարային ոլորտի կազմակերպչությունների ներդրումային գործունեության պետական աջակցության քաղաքականության մշակման գործընթացում:

**Ատենախոսության արդյունքների փորձարկումն ու հրապարակումները:** Աշխատության հիմնական դրույթները, կատարված հետազոտությունների արդյունքներն ու առաջարկությունները ներկայացվել ու քննարկվել են ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան Տնտեսագիտության ինստիտուտում, իսկ արդյունքները հրապարակվել են հեղինակի չորս գիտական հոդվածներում:

**Աշխատանքի կառուցվածքը:** Աշխատանքը բաղկացած է ներածական մասից, 3 գլուխներից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից: Աշխատությունը շարադրված է 121 էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության

ցանկը, պարունակում է 6 գծապատկեր, 14 աղյուսակ, 89 անուն գրականություն ցանկ, 13 համացանցային կայք և 3 հավելված:



## ԳԼՈՒԽ 1.

### ԱԳՐԱՐԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒ ԹՅԱՆ ԱՆՐԱԺԵՇՏՈՒ ԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

#### 1.1. Ագրարային ոլորտի պետական աջակցության անհրաժեշտությունը

Տնտեսական զարգացման արդի պայմաններում ուժեղանում է պետության՝ որպես սկզբունքորեն կարևորագույն գործոնի դերը տնտեսական աճի և երկրի սոցիալական կայունության ապահովման գործում: Ագրարային ոլորտն իր առանձնահատկություններին պատճառով չի կարող արդյունավետ կերպով գործել առանց պետական աջակցության և կարգավորման: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ գյուղատնտեսությունը կախված է բնական գործոններից և ունի խիստ արտահայտված սեզոնային բնույթ: Միևնույն ժամանակ ագրարային արտադրությունը կարևոր նշանակություն ունի երկրի պարենային անվտանգության ապահովման տեսանկյունից:

Տնտեսագիտության տեսությունից հայտնի են բազմաթիվ գործոններ, որոնք պայմանավորում են գյուղատնտեսության պետական աջակցության անհրաժեշտությունը: Դրանք կարելի է դասակարգել հետևյալ կերպ.

1. հողակլիմայական գործոններ,
2. պարենային անվտանգության ապահովման անհրաժեշտությունը,
3. շուկայական տնտեսությանը բնորոշ անորոշությունը,
4. այսպես կոչված «Ֆերմերային հիմնախնդիրը»<sup>1</sup>,
5. գյուղական տարածքների զարգացումը:

1. Պետության տնտեսական դերի վերաբերյալ տեսությունը մինչ օրս բնական ռեսուրսների օգտագործման և շրջակա միջավայրի պահպանության պետական կարգավորման միջոցառումները դասում է պետության հիմնական գործառնությունների շարքին: Առայսօր գյուղատնտեսությունը

<sup>1</sup> Թրեյսի Մ. «Сельское хозяйство и продовольствие в экономике развитых стран: введение в теорию, практику и политику», пер. с англ.. Экономическая школа, 1995. с. 402

հանդիսանում է շրջակա միջավայրի հիմնական մարդածին աղտոտիչներից մեկը: Մարդու ակտիվ տնտեսական գործունեությանը հանգեցնում է գյուղատնտեսական արտադրության տեխնոլոգիական գործընթացների մեջ օգտագործվող հողային, ջրային և կենսաբանական ռեսուրսների վերարտադրողական կարողությունների զգալի կորուստների: Ագրոքիմիկատների օգտագործման բարձր մակարդակը, թափոնները, մելիորատիվ միջոցառումները զգալիորեն վատթարացնում են գյուղատնտեսական հողերի էկոլոգիական դրությունը: Գյուղատնտեսության ոլորտում մարդու տնտեսական գործունեության բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի, բնական ռեսուրսների վրա պետությանը հիմք է տալիս կիրառել ագրարային ոլորտի կարգավորման միջոցառումների մի ամբողջական համակարգ (գյուղատնտեսական և բնապահպանական գոտիավորում, հողային ռեսուրսների մշտադիտարկում և ռացիոնալ օգտագործման վերահսկողություն, բերրիության վերականգնման ծրագրեր և այլն):

Մյուս կողմից, գյուղատնտեսությունը հանդիսանում է բնական գործոններից մեծ կախվածություն ունեցող ճյուղ, ինչը զգալիորեն բարձրացնում է ոլորտի ռիսկայնությունը: Ռիսկայնության նվազեցման համար պետությանը աջակցում է գյուղատնտեսական ապահովագրության ձևավորման և զարգացման գործընթացին՝ մասնակիորեն սուբսիդավորելով գյուղատնտեսական ապրանքարտադրողների ապահովագրական ծախսերը:

2. Գյուղատնտեսության պետական աջակցության անհրաժեշտությունը պայմանավորող պարենային անվտանգության գործոնները կապված են սննդամթերքով երկրի ինքնաբավության մակարդակի հետ, որը որոշվում է հիմնական գյուղատնտեսական արտադրանքներով ապահովվածության գործակիցներով (աղյուսակ 1.1.1):

Աղյուսակ 1.1.1

Հիմնական գյուղատնտեսական մթերքներով  
ապահովվածություն մակարդակը ՀՀ-ում (2011-2015թթ.)<sup>2</sup>

h/h	Ցուցանիշ	2011	2012	2013	2014	2015
1	2	3	4	5	6	7
Միս և մսամթերք, հազ. տ.						
1.1	Ամբողջական պահանջարկ	139.2	136.5	141.1	150.0	152.2
1.2	Առաջարկ	72.3	74.7	84.1	93.9	97.7

Աղյուսակ 1.1.1-ի շարունակությունը

1	2	3	4	5	6	7
1.3	Ինքնաբավություն մակարդակը, %	51.9	54.7	59.6	62.6	64.2
Այդ թվում՝ Տավարի միս						
1.1.1	Ամբողջական պահանջարկ	61.9	59.1	62.6	67.9	69.8
1.2.1	Առաջարկ	48.5	48.2	54.0	59.7	61.8
1.3.1	Ինքնաբավություն մակարդակը, %	78.4	81.6	86.2	87.9	88.5
Խոզի միս						
1.1.2	Ամբողջական պահանջարկ	21.9	25.1	27.7	30.4	31.5
1.2.2	Առաջարկ	9.5	9.6	12.8	16.5	17.8
1.3.2	Ինքնաբավություն մակարդակը, %	43.3	38.3	46.3	54.2	56.1
Թռչնամիս						
1.1.3	Ամբողջական պահանջարկ	47.0	43.8	41.8	42.5	41.5
1.2.3	Առաջարկ	5.9	8.4	8.3	8.5	8.7
1.3.3	Ինքնաբավություն մակարդակը, %	12.2	19.1	19.8	20	21.0
Ոչ խարի միս						
1.1.4	Ամբողջական պահանջարկ	8.4	8.5	9.0	9.2	9.4
1.2.4	Առաջարկ	8.4	8.5	9.0	9.2	9.4
1.3.4	Ինքնաբավություն	100	100	100	100	100

<sup>2</sup> Աղյուսակը կազմված է ՀՀ ԱՎԾ «Պարենային ապահովություն և աղքատություն» 2013-2015թթ. հաշվետվությունների հիման վրա

	մակարդակը, %					
Կաթ, հազ. տ.						
2.1	Ամբողջական պահանջարկ	807.6	812.8	850.7	938.2	948.9
2.2	Առաջարկ	669.5	675.4	723.1	790.0	803.7
2.3	Ինքնաբավու թյան մակարդակը, %	82.9	83.1	85.0	84.2	84.7
Շաքարավազ, հազ. տ.						
3.1	Ամբողջական պահանջարկ	99.6	91.3	84.2	100.4	74.1
3.2	Առաջարկ	95.6	85.0	78.0	93.5	68.2
3.3	Ինքնաբավու թյան մակարդակը, %	96.0	93.1	92.6	93.1	92.0
Բուսական յուղ, հազ. տ.						

Աղյուսակ 1.1.1-ի շարունակությունը

1	2	3	4	5	6	7
4.1	Ամբողջական պահանջարկ	27.0	31.6	33.4	33.9	47.9
4.2	Առաջարկ	0.7	2.9	5.0	4.5	5.6
4.3	Ինքնաբավու թյան մակարդակը, %	2.8	9.1	15.1	13.2	11.7
Ձուլ, մլն. հատ						
5.1	Ամբողջական պահանջարկ	673.1	661.4	638.8	660.3	677.6
5.2	Առաջարկ	633.6	658.1	615.2	641.8	674.2
5.3	Ինքնաբավու թյան մակարդակը, %	94.1	99.5	96.3	97.2	99.5
Կարտոֆիլ, հազ. տ.						
6.1	Ամբողջական պահանջարկ	958.7	1129.9	1227.1	1316.1	1328.1
6.2	Առաջարկ	941.4	1118.6	1257.8	1330.6	1346.7
6.3	Ինքնաբավու թյան մակարդակը, %	98.2	99.0	102.5	101.1	101.4
Բանջարեղեն, հազ. տ.						
7.1	Ամբողջական պահանջարկ	1362.3	1486.6	1541.9	1657.1	1698.4
7.2	Առաջարկ	1337.8	1476.2	1534.2	1642.2	1691.6
7.3	Ինքնաբավու թյան	98.2	99.3	99.5	99.1	99.6

	մակարդակը, %					
	Մի րգ, հազ.տ.					
8.1	Ամբողջական պահանջարկ	323.1	431.2	448.4	404.9	489.3
8.2	Առաջարկ	290.8	414.4	446.6	379.8	458.4
8.3	Ինքնաբավու թյան մակարդակը, %	90.0	96.1	99.6	93.8	93.6

Փորձը ցույց է տալիս, որ պարենամթերքի ցածր ինքնաբավու թյան մակարդակի պայմաններում պետությունը արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում կարող է անկարող գտնվել բնակչությանը անհրաժեշտ պարենամթերքով ապահովելու հարցում: Առյուսակ 1.1.1-ի տվյալներից երևում է, որ 2011-2015թթ. ՅՅ-ում ինքնաբավու թյան բարձր մակարդակ է ապահովվել կարտոֆիլի, բանջարեղենի, մրգի, ձվի, ոչխարի մսի ուղղությամբ, միջինից բարձր ինքնաբավու թյան մակարդակ գոյություն ունի կաթի-կաթնամթերքի, տավարի մսի համար, իսկ թռչնամսի և խոզի մսի ինքնաբավու թյան մակարդակը շարունակում է ցածր մնալ: Որոշ մթերքների ցածր ինքնաբավու թյունը հանգեցնում է ներկրման ծավալների աճին: Առաջ է գալիս պարենային անվտանգության հիմնախնդիրը, որը ենթադրում է պետական կարգավորման անհրաժեշտություն:

3. Ագրարային ոլորտի պետական աջակցությունը պայմանավորող հաջորդ գործոնը շուկայական տնտեսությանը բնորոշ անորոշությունն է: Անորոշության առկայությունը ստիպում է շուկայի մասնակիցներին դիմել դրանվազման ուղիներ փնտրելուն: Անորոշությունը նվազեցնելու հիմնական ուղիներից մեկը շուկայի սուբյեկտների կողմից շուկան բնութագրող հիմնական փոփոխականների (գին, պահանջարկ, առաջարկ, սպասումներ և այլն) նկատմամբ վերահսկողության սահմանումն է: Տնտեսվարող սուբյեկտների կողմից նման շուկայական ռազմավարությունը ստիպում է պետությանը միջամտել շուկայական հարաբերություններին՝ հակամենաջնորհային և գնային կարգավորման միջոցով մեղմելու կամ կանխարգելելու անկատար մրցակցության բացասական հետևանքները: Պետական կարգավորման հիմնական

ուղղություններին և գնային կարգավորումը և պետական ինտերվենցիաների իրականացումը:

4. Ագրարային ոլորտի պետական աջակցության անհրաժեշտությունը հիմնավորող փաստարկներից մեկը այսպես կոչված «Ֆերմերային հիմնախնդիրն» է: Նրա էությունը կայանում է նրանում, որ գյուղատնտեսության և տնտեսության մյուս հատվածների միջև միջճյուղային փոխանակությունների ժամանակ խախտում է պարիտետության սկզբունքը: Այսինքն, գյուղատնտեսական արտադրանքի գները և եկամուտները աճում են ավելի դանդաղ տեմպերով, քան տնտեսության մյուս ճյուղերինը: Դա բացատրվում է գյուղատնտեսական արտադրանքի ցածր գնային առաձգականությամբ, առաջարկի և պահանջարկի կորերի տեղաշարժերով, գյուղատնտեսական ռեսուրսների հարաբերականորեն ցածր շարժունակությամբ: Գնային առաձգականության ցածր մակարդակը պայմանավորված է նրանով, որ բնակչության դրամական եկամուտների աճին զուգընթաց պարենամթերքի նկատմամբ պահանջարկը աճում է ավելի նվազ տեմպերով: Այս գործոնները հանգեցնում են նրան, որ արդյունաբերական արտադրանքի, գյուղատնտեսական աշխատանքների և ծառայությունների գների աճի տեմպը գերազանցում է գյուղատնտեսական արտադրանքի գների աճի տեմպին (աղյուսակ 1.1.2):

Աղյուսակ 1.1.2

Գների դինամիկան ՀՀ տնտեսության մեջ<sup>3</sup>

Ցուցանիշ	Տարի	Սպառողական գներ	Արդյունաբերողների արտադրանքի գներ	Գյուղմթերք արտադրողների իրացման գներ	Ծինարարության գներ	Բեռնափոխադրումների սակագներ
1	2	3	4	5	6	7
Գների	1998	0.9870	1.0820	0.8740	1.0670	0.9520
փոփոխություն	1999	1.0200	1.0380	0.9210	1.0460	1.0030

<sup>3</sup> Հաշվարկված է ՀՀ ԱՎԾ 2002, 2006, 2010, 2014 և 2015 թվականների վիճակագրական տարեգրքերի հիման վրա

ինդեքս (նախորդ տարվա համեմատ)	2000	1.0040	1.0040	1.0110	1.0100	1.0470
	2001	1.0290	0.9640	1.0690	1.0540	1.0190
	2002	1.0200	1.0090	0.9740	1.0130	1.0330
	2003	1.0860	1.2110	1.1410	1.0260	0.9670
	2004	1.0200	1.2530	1.1590	0.9930	0.9680
	2005	0.9980	0.9600	0.9890	1.1490	0.9490
	2006	1.0520	1.0060	1.0380	1.0710	1.1820
	2007	1.0660	1.0000	0.9660	1.0890	1.1540
	2008	1.0520	0.8770	1.1410	1.2700	1.0780
	2009	1.0650	1.3080	0.9400	1.0150	1.1280
	2010	1.0940	1.1570	1.3740	1.0720	1.1810
	2011	1.0470	1.0970	1.0750	0.9150	1.0620
	2012	1.0320	1.0860	0.9140	0.9960	0.9730
	2013	1.0560	1.0510	0.9670	1.0280	1.1490
	2014	1.0460	1.0840	1.0530	1.0330	1.0330
2015	1.0370	0.9920	0.805	1.0610	1.0120	
	1998	0.9870	1.0820	0.8740	1.0670	0.9520
	1999	1.0067	1.1231	0.8050	1.1161	0.9549
	2000	1.0108	1.1276	0.8138	1.1272	0.9997

Աղյուսակ 1.1.2-ի շարունակությունը

1	2	3	4	5	6	7
Գների աճը բազիսային տարվա նկատմամբ (1997թ.), անգամ	2001	1.0401	1.0870	0.8700	1.1881	1.0187
	2002	1.0609	1.0968	0.8473	1.2036	1.0523
	2003	1.1521	1.3282	0.9668	1.2349	1.0176
	2004	1.1752	1.6643	1.1205	1.2262	0.9851
	2005	1.1728	1.5977	1.1082	1.4089	0.9348
	2006	1.2338	1.6073	1.1503	1.5089	1.1050
	2007	1.3152	1.6073	1.1112	1.6432	1.2751
	2008	1.3836	1.4096	1.2679	2.0869	1.3746
	2009	1.4736	1.8437	1.1918	2.1182	1.5505
	2010	1.6121	2.1332	1.6376	2.2707	1.8312
	2011	1.6878	2.3401	1.7604	2.0777	1.9447
	2012	1.7418	2.5414	1.6090	2.0694	1.8922
	2013	1.8394	2.6710	1.5559	2.1274	2.1741
2014	1.9240	2.8953	1.6384	2.1976	2.2459	

	2015	1.9952	2.8722	1.3189	2.3316	2.2728
Գյ ու ղ մ թ եր ք ի գ ն եր ի դ ի ս պ ար ի տ ե տ ը (հ ամ ա պ ա տ ա ս խ ան ար տ ա դ ի ր ան ք ի գ ն եր ի ա ճ ի մ ա կ ար դ ա կ ի հ ար ա բ եր ու թ յ ու ն ը գյ ու ղ մ թ եր ք ի գ ն եր ի ա ճ ի մ ա կ ար դ ա կ ի ն	1998	1.1293	1.2380	1.0000	1.2208	1.0892
	1999	1.2507	1.3953	1.0000	1.3865	1.1862
	2000	1.2420	1.3856	1.0000	1.3851	1.2285
	2001	1.1955	1.2495	1.0000	1.3657	1.1710
	2002	1.2520	1.2944	1.0000	1.4204	1.2419
	2003	1.1917	1.3738	1.0000	1.2772	1.0525
	2004	1.0487	1.4852	1.0000	1.0943	0.8791
	2005	1.0583	1.4417	1.0000	1.2713	0.8435
	2006	1.0726	1.3972	1.0000	1.3118	0.9606
	2007	1.1836	1.4464	1.0000	1.4788	1.1475
	2008	1.0913	1.1117	1.0000	1.6460	1.0841
	2009	1.2364	1.5470	1.0000	1.7773	1.3010
2010	0.9844	1.3027	1.0000	1.3867	1.1182	
2011	0.9588	1.3293	1.0000	1.1803	1.1047	


Աղյ ու ս ա կ 1.1.2-ի շ ար ու ն ա կ ու թ յ ու ն ը

1	2	3	4	5	6	7
	2012	1.0826	1.5795	1.0000	1.2862	1.1760
	2013	1.1822	1.7167	1.0000	1.3673	1.3974
	2014	1.1743	1.7672	1.0000	1.3413	1.3708
	2015	1.5128	2.1777	1.0000	1.7679	1.7233

Ի ն չ ա թ ս եր ն ու մ է աղյ ու ս ա կ 1.1.2-ի տվյալներից 1997-2015թթ. ընթացքում սպառողական ապրանքների գների աճը կազմել է 1.99 անգամ, արդյունաբերական արտադրանքինը՝ 2.87 անգամ, շինարարությանը՝ 2.33 անգամ, իսկ բեռնափոխադրումներինը՝ 2.27 անգամ: Մինչդեռ գյ ու ղ մ թ եր ք ի իրացման գները աճել են ընդամենը 1.32 անգամ:

Այլ կերպասած, սպառողական ապրանքների գները գյ ու ղ մ թ եր ք ի գների համեմատ աճել են 1.51 անգամ ավելի արագ, արդյունաբերական արտադրանքինը՝ 2.18 անգամ, շինարարության գները՝ 1.77 անգամ, իսկ բեռնափոխադրումների սակագները՝ 1.72 անգամ (գրաֆիկ 1.1.1)





Գրաֆիկ 1.1.1 Գյուղմթերքի գների դիսպարիտետը ՀՀ-ում

Նման բացասական գնային մեխանիզմը հանգեցնում է գյուղացիական տնտեսության ներքին վնասաբերության մակարդակի բարձրացմանը: Սա դրդում է պետությանը միջոցառումներ փոխանակելու նկատմամբ իրականացնել գյուղմթերքի գների պարիտետության կարգավորում:

5. Պետական աջակցության անհրաժեշտությունը պայմանավորող մյուս գործոնը գյուղի պահպանման և սոցիալական զարգացման անհրաժեշտությունն է: Լեզու և մշակույթը, հոգևոր արժեքները ձևավորվել և զարգացել են հողագործների շրջանում: Հազարավոր տարիների ընթացքում գյուղական ապրելակերպը պահպանել և սերունդներին է փոխանցել ազգի բարոյական կերպարը: Սակայն գյուղատնտեսությունում եկամտաբերության ցածր մակարդակը հանգեցնում է ոլորտում զբաղվածության կրճատմանը, գյուղական բնակչության և գյուղական բնակավայրերի նվազմանը: Ազգային հոգևոր արժեքների, ինքնության պահպանման նպատակով շատ երկրների կառավարություններ իրականացնում են ագրարային ոլորտի աջակցության ծրագրեր՝ հաշվի առնելով մշակույթի և հոգևոր-բարոյական արժեքների պահպանության անհրաժեշտությունը:

## 1.2. Ագրարայ ին ու որտի պետական աջակցություն համակարգը

Փորձը ցույց է տալիս, որ գյուղատնտեսությունը՝ պայմանավորված իր առանձնահատկություններով, այն է՝ կախվածություն բնակչի մայական պայմաններից, ռիսկայնություն բարձր մակարդակ, բարձր կապիտալատարություն, պարենային շուկայի գործառնություն առանձնահատկություններ, պետական միջամտության մշտական կարիք ունի: Պետական կարգավորումը, հիմնվելով պետական մարմինների իրավական, տնտեսական, սոցիալ-գաղափարախոսական, կրթական և այլ գործունեության վրա, պետք է աջակցի արդյունավետ գործող շուկայական մեխանիզմի ձևավորմանը, բարեփոխումների իրականացմանը<sup>4</sup>:

Տնտեսագիտական գրականության մեջ տնտեսագետները և պետական կառավարման ապարատի ներկայացուցիչները տարբեր կերպ են մեկնաբանում «պետական աջակցություն» հասկացությունը: Առավել հաճախ այն նույնացվում է «պետական կարգավորման համակարգ», «ֆինանսական աջակցություն», «պետական տնտեսական կարգավորում», «բյուջետային աջակցության համակարգ», «ագրարային պետական օգնություն» և այլ հասկացությունների հետ<sup>5</sup>:

Կոզիրը «պետական աջակցություն» հասկացությունը մեկնաբանում է որպես հասարակական հարաբերություններին կարգավորման բարդ տնտեսա-իրավական մեխանիզմ, որի միջոցով պետության կողմից գյուղատնտեսական ապրանքարտադրողներին տրամադրվում է ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ նյութական, ֆինանսական և խորհրդատվական օգնություն<sup>6</sup>:

Ըստ Կուլդելյայի գյուղատնտեսական ապրանքարտադրողներին աջակցությունը պետության և ոչ պետական կառույցների նախատառև ղղված գործողություններն են՝ ուղղված գյուղատնտեսության կայունացմանը և գյուղատնտեսական

<sup>4</sup> Скрынник Е. Основные направления развития сельского хозяйства России. / Экономика сельского хозяйства России. 2010. N 7. с. 31.

<sup>5</sup> Снигирева Г. Д. Формирование механизма регулирования агропромышленного комплекса / Современные проблемы науки и образования. – N 5. 2013.

<sup>6</sup> Козырь М.И. Государственное регулирование сельского хозяйства и агропромышленного комплекса в Российской Федерации. / Аграрное и земельное право. 2008. N 9. с. 4

ապրանքարտադրողներին փոփոխվող շուկայական պայմաններին հարմարվելու ապահովմանը գնագոյացման կամ եկամուտների կարգավորման միջոցով, որն իրականացվում է սուբսիդավորման, դոտացիաների տրամադրման, ռեսուրսափնայող տեխնոլոգիաների խթանման, ենթակառուցվածքների զարգացմանը ուղղված ներդրումների իրականացման, գյուղական բնակչության զբաղվածության բարձրացման միջոցով:

Ըստ Ուրսովի պետական աջակցությունը պետական կարգավորման անբաժանելի մասն է: Այս աջակցության մեխանիզմները տարբեր մակարդակներում պետք է փոխվազնեն միմյանց և նպաստեն շուկայի ձևավորմանը և բնականոն գործունեությանը<sup>7</sup>: Չի կարելի չհամաձայնվել հեղինակի հետ կապված տարբեր մակարդակներում գյուղատնտեսական ապրանքարտադրողների աջակցության անհրաժեշտության հետ, սակայն մենք համարում ենք, որ պետական աջակցությունն իրենից պետք է ներկայացնի տարբեր լծակների և անհատույց կամ արտոնյալ ֆինանսավորման գործիքների ամբողջությամբ:

Տնտեսվարման վարչահրամայական համակարգից շուկայականին անցում կատարելուն գուգահեռ փոխվեցին նաև տնտեսական հարաբերությունների մասնակիցների վրա ներգործության սկզբունքները, մեթոդներն ու ձևերը: Այս պնդումը վերաբերում է նաև ագրարային ոլորտին: Սակայն հարկ է նշել, որ որոշ սկզբունքներ շուկայական պայմաններում մնացել են անփոփոխ, փոփոխվել է միայն նրանց էությունն ու բովանդակությունը<sup>8</sup>: Յետևաբար, ագրարային քաղաքականության նպատակներն իրագործելու համար, գյուղատնտեսական արտադրության պետական աջակցությունն իրականացնելիս պետությունը պետք է առաջնորդվի որոշակի սկզբունքներով: Չարգացման ժամանակակից փուլում արդիական են հետևյալ սկզբունքները՝

<sup>7</sup> Урсов В. Ф. Государственное регулирование и саморегулирование в системе организационно-экономического механизма АПК регионального уровня. / Экономика сельскохозяйственных и перерабатывающих предприятий. 2001. N 5. с. 20

<sup>8</sup> Котов Р.М. Государственная поддержка сельского хозяйства на региональном уровне : монография – Кемерово: ИИО Кемеровского ГСХИ, 2012.– с. 25.

- Ագրարային պրոտեկցիոնիզմի սկզբունք: Այս սկզբունքը ենթադրում է գյուղատնտեսության պաշտպանություն արտաքին և ներքին տնտեսական հարաբերություններում: Ընդ որում, շուկայական հարաբերությունների պայմաններում այս սկզբունքը ձեռք է բերում առավել մեծ նշանակություն:
- Ինդիկատիվ կարգավորման մեթոդների կիրառում: Գյուղատնտեսության ոլորտում պետության քաղաքականությունը պետք է հիմնվի տնտեսական գործունեությանը չմիջամտելու սկզբունքի վրա: Միևնույն ժամանակ պետք է ուժեղանա պետության՝ որպես տնտեսական գործընթացների կարգավորիչի և գյուղական ենթակառուցվածքների կատարելագործման շարժիչ ուժի դերը<sup>9</sup>:
- Ծրագրանպատակային պլանավորման սկզբունք: Այս սկզբունքի իրագործումը հանդիսանում է միջոցների արդյունավետ օգտագործման վրա ազդող էական գործոն, որը հնարավորություն է տալիս խուսափել ավելորդ բյուջետային ծախսերից առանձին որոշումների իրականացման ընթացքում: Բացի այդ, նպատակային պլանավորումը հնարավորություն է տալիս որոշել պարենամթերքի նկատմամբ պետության կարիքներն ու ֆինանսավորման ծավալները, իսկ գյուղատնտեսական ապրանքարտադրողներին՝ զգալիորեն նվազեցնել շուկայի կոնյուկտուրայի հետևանքով առկա ռիսկերը:
- Պետական աջակցության երաշխավորվածության սկզբունք: Պետությունը պետք է երաշխավորի աջակցությունը գիտատեխնիկական ձեռքբերումների ներդրման, ներդրումային գործունեության, սոցիալական և այլ ծրագրերի իրականացման գործընթացներին: Երաշխավորված պետական աջակցությունը ագրարային ոլորտի կազմակերպությունների դիսամիկ զարգացման հզոր խթան է հանդիսանում:
- Պետական ներգործության սոցիալական հետևանքների հաշվառման սկզբունք: Ագրարային ոլորտում պետության

<sup>9</sup> Савченко Е. Государственная поддержка АПК. Достижение науки и техники АПК. 2001. - № 1. - с. 6.

քաղաքականությունը չպետք է հակասի երկրի սոցիալական ռազմավարությանը: Ցանկացած միջամտություն պետք է իրականացվի հաշվի առնելով գյուղի վրահնարավոր սոցիալական հետևանքները:

- Գերազանցապես պետական կարգավորման տնտեսական մեթոդների կիրառման սկզբունք:

Նախքան գյուղատնտեսության պետական աջակցության ուղղությունների և ձևերի բնութագրումը, անհրաժեշտ է քննարկել տնտեսության և, մասնավորապես՝ գյուղատնտեսության պետական կարգավորման մեթոդներն ու գործոնները:

Գոյություն ունեն ագրարային ոլորտի վրահներգործության բազմաթիվ մեթոդներ, որոնք կարելի է դասակարգել երեք խմբերի՝ վարչական (ուղղակի), տնտեսական (անուղղակի) և ինստիտուցիոնալ:

Վարչական մեթոդների էությունը կայանում է նրանում, որ վերջիններս իրենցից ներկայացնում են պետության կողմից տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ սահմանված պարտադիր պահանջների և հրամանների ամբողջություն:

Տնտեսական մեթոդները ենթադրում են պետության կողմից ապրանքարտադրողների շահերի վրահներգործություն, նրանց գործունեության համար նպաստավոր կամ անբարենպաստ պայմանների ստեղծում:

Շուկայական տնտեսություն ունեցող զարգացած երկրների փորձը ցույց է տալիս, որ պետությունը ձգտում է իրականացնել իր տնտեսական կարգավորման գործառույթները բացառապես տնտեսական մեթոդների հիման վրա: Դրանով վերջիններս սկզբունքայնորեն տարբերվում են վարչահրամայական տնտեսություն ունեցող երկրներից, որտեղ գլխավորապես կիրառվում են կարգավորման վարչական մեթոդներ:

Վարչական մեթոդների թվին են դասվում՝

- Տնտեսական զարգացման ռազմավարական նպատակների սահմանումը: Նման կարգավորման գործիքներ կարող են հանդիսանալ ինդիկատիվ պլանները, նպատակային տարածքային ծրագրերը:

- Պետական գնումների համակարգը: Որպես նմանատիպ գործիքներ են հանդես գալիս պետական գնումները, առանձին ապրանքատեսակների պատվերները և մատակարարման պայմանագրերը, աշխատանքների իրականացումն ու ծառայությունների մատուցումը:
- Տեխնոլոգիաների և արտադրանքի հավաստագրման և որակի նկատմամբ նորմատիվ պահանջներ: Այստեղ կարգավորումն իրականացվում է պետական ստանդարտների (ГОУС) հրապարակման, որակի հավաստագրերի տրամադրման միջոցով:
- Իրավական և վարչական սահմանափակումներ և որոշակի ապրանքատեսակների թողարկման արգելքներ՝ քվոտավորում, առանձին մշակաբույսերի ցանքերի սահմանափակում:
- Ապրանքների արտահանման և ներմուծման լիցենզավորում:

Պետական կարգավորման վարչական մեթոդները հիմնվում են պետական իշխանության ուժի վրա:

Տնտեսական կարգավորման մեթոդները սովորաբար հիմնվում են դրամավարկային լծակների վրա և ներգործում են տնտեսվարող սուբյեկտների տնտեսական շահերի վրա<sup>10</sup>: Դրանց վերաբերում են՝

- Չարկային կարգավորում: Նման կարգավորման գործիքներ են հանդիսանում հարկադրման դրույքաչափերը և հարկային արտոնությունների համակարգը:
- Գնային կարգավորում: Այն իրականացվում է նպատակային և երաշխավորված գների սահմանման, ինչպես նաև ինտերվենցիոն գնումների և ապրանքային ինտերվենցիաների իրականացման միջոցով:

Նպատակային գները կիրառվում են արդյունաբերական և գյուղատնտեսական ապրանքների գների հավասար հարաբերակցության (պարիտետության) պահպանման, ինչպես նաև հարկերի գանձման, վարկերի դիմաց տոկոսադրույքների և այլ վճարումների գծով ծախսերի ծածկումն ապահովելու համար: Նպատակային գները հիմք են հանդիսանում գյուղատնտեսության

<sup>10</sup> Кошкарев И.А. Необходимость и пути устранения ценовых диспропорций в зернопродуктовом под-комплексе. Экономика сельскохозяйственных и перерабатывающих предприятий. 2007. N 2. с 21.

ոլորտին տրամադրվող դոտացիաների և փոխհատուցումների ծավալների հաշվարկման համար:

Երաշխավորված գները հաշվարկվում են նպատակային գների հիման վրա և հաստատվում են պետական իշխանության մարմինների կողմից: Երաշխավորված գները գյուղատնտեսական ապրանքատարողների համար ապահովում են ընդլայնված վերարտադրություն և իրականացնելու համար անհրաժեշտ եկամուտների նվազագույն մակարդակ:

Ինտերվենցիոն գնումներն իրականացվում են այն ժամանակ, երբ ապրանքների շուկայական գները իջնում են սահմանված որոշակի մակարդակից կամ պահանջարկի կրճատման պատճառով \$երմերները չեն կարողանում իրացնել իրենց արտադրանքը:

Ապրանքային ինտերվենցիաները իրականացվում են գյուղատնտեսական ապրանքների դեֆիցիտի կամ սահմանված առավելագույն մակարդակից գների բարձրացման դեպքերում<sup>11</sup>:

- Բյուջետային կարգավորում, որի գործիքներն են հանդիսանում սուբսիդիաները, սուբվենցիաները և դոտացիաները, ինչպես նաև բյուջետային վարկերը:
- Դրամավարկային կարգավորում, որի գործիքներն են վարկային տոկոսադրույքները, ներդրումային վարկավորման հատուկ պայմանները, արտարժույթի փոխարժեքը և արտարժույթի փոխարկման պայմանները:
- Մաքսային կարգավորում, որն իրականացվում է ապրանքների ներմուծման և արտահանման մաքսատուրքերի սահմանման միջոցով:

Շուկայական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց ընդլայնվում են նաև տնտեսության կարգավորման անուղղակի մեթոդների կիրառման ոլորտները՝ սահմանափակելով ուղղակի միջամտության մեթոդների կիրառումը: Կարելի է առանձնացնել մի քանի ոլորտ, որտեղ վարչական մեթոդները բավականին արդյունավետ են, իսկ երբեմն նույնիսկ ունեն բացահայտ առավելություն

<sup>11</sup> Евдокимова Т.Г. Теория и практика управления ценами. Санкт-Петербург. 2004. Издательский дом «Нева». с. 23

տնտեսական հարաբերությունների կարգավորման մյուս մեթոդների նկատմամբ:

Այդ ոլորտներին են վերաբերում՝

1. Հակամենաշնորհային կարգավորում: Անուղղակի մեթոդներով մենաշնորհի դեմ պայքարը խիստ անարդյունավետ է և այստեղ թույլատրելի է նաև գների պետական կարգավորումը: Ագրարային արտադրության ոլորտում առավել տարածված է մոնոպսոնիան, երբ որոշակի գյուղական տարածքում բազմաթիվ գյուղատնտեսական ապրանքարտադրողներին բաժին է ընկնում ընդամենը մեկ վերամշակող (հացի գործարան, մսի կոմբինատ և այլն): Դրանով իսկ ստեղծվում են զգալի արգելքներ շուկայական մեխանիզմների իրագործման համար: Այս դեպքում պետական ներգործության վարչական մեթոդները դառնում են տնտեսության կարգավորման հիմնական գործիքներ:
2. Շուկայական գործընթացների կողմնակի ազդեցություններ: Այս ոլորտում տնտեսական կարգավորիչները բավարարչեն, իսկ երբեմն ընդհանրապես անարդյունավետ են: Բերքատվության բարձրացման, քառհի ավելացման նպատակով ֆերմերները կարող են օգտագործել արգելված թունաքիմիկատներ, կերային հավելումներ: Այստեղ պետության վարչական կարգավորման մեթոդները դառնում են առաջնահերթ էկոլոգիական անվտանգության ապահովման հարցում:

Հարկ է նշել, որ ագրարային ոլորտի կարգավորման բնագավառում վարչական մեթոդների կիրառումը օբյեկտիվ անհրաժեշտություն է՝ պայմանավորված գյուղատնտեսության առանձնահատկություններով: Այն հանդիսանում է ագրարային քաղաքականության անբաժանելի մասը: Գյուղատնտեսության ոլորտում առանց վարչական կարգավորման մեթոդների օգտագործման անհնար է մի շարք կարևոր խնդիրների լուծումը և ագրարային քաղաքականության նպատակների իրագործումը: Մյուս կողմից, վարչական մեթոդներն անհրաժեշտ է կիրառել այնտեղ,



որտեղ կա դրա օբյեկտիվ անհրաժեշտությունը: Հակառակ դեպքում այն կարող է ազդարային ոլորտում տնտեսական գործընթացների խաթարման, արտադրության արդյունավետության անկման և մրցակցության կրճատման պատճառ դառնալ:

Պետական ներգործության տնտեսական և վարչական մեթոդներին գուգահեռ անհրաժեշտ է առանձնացնել և դիտարկել գյուղատնտեսության կարգավորման ինստիտուցիոնալ մեթոդները:

Ինստիտուտները մարդկանց կողմից մշակված պաշտոնական (սահմանադրություն, օրենքներ, վարչական ակտեր, իրավական նորմեր և այլն) սահմանափակումներ են, ինչպես նաև հարկադրման գործոններ (դատարաններ, ոստիկանություն և այլն), որոնք կանոնակարգում են դրանց փոխներգործությունը<sup>12</sup>:

Ինստիտուցիոնալ ներգործության մեթոդների շարքին կարելի է դասել .

1. Տնտեսության իրավական կարգավորում՝ սեփականության իրավունքի և սեփականության ձևերի, պայմանագրերի կնքման պայմանների, ձեռնարկությունների գործունեությանը վերաբերող նորմատիվ ակտերի սահմանում<sup>13</sup>:
2. Գյուղատնտեսական կազմակերպությունների կառուցվածքի և կազմակերպարարական ձևերի փոփոխություն: Ազդարային ոլորտում ինստիտուցիոնալ փոփոխությունները հանգեցրին բազմակացու թաձևության ձևավորմանը, որոնք հիմնականում բնութագրվում են երեք խումբ կազմակերպատնտեսական կառուցվածքներով: Դրանք սեփականության պետական, մասնավոր և խառը ձևերով ձեռնարկություններն են:
3. Ազդարային ոլորտում քաղաքացիական հասարակության ինստիտուտներ: Բազմաթիվ երկրներում ազդարային ոլորտի հիմնախնդիրները լուծվել են կամավոր միություններում \$երմերների համախմբման միջոցով: Մի

<sup>12</sup> Норт Д. Институты, институциональные изменения и функционирование экономики. М.: Начала, 1997, с. 6

<sup>13</sup> Гриценко Г.М. Опыт государственной поддержки сельхозтоваропроизводителей в аграрном регионе (на примере Алтайского края) / Экономика, труд, управление в сельском хозяйстве. 2010. - N 2. с. 29

կողմից, նմանատիպ կամավոր միութայություններ են հանդիսանում առևտրային կազմակերպությունները՝ գյուղատնտեսական կոոպերատիվները, որոնք անհատ ֆերմերներին հնարավորություն են ընձեռում իրացնել արտադրանքը, իրականացնել արտադրվող հումքի վերամշակում, օգտվել թանկարժեք տեխնիկայից: Մյուս կողմից, ֆերմերների շահերը ներկայացվում են նաև ոչ առևտրային կազմակերպություններում:

Ֆերմերների առևտրային, հասարակական և քաղաքական կազմակերպությունները ագրարային ոլորտում ինքնակազմակերպված ինստիտուտների օրինակներ են: Արդյունավետ գործող նմանատիպ ինստիտուտների համակարգը հանդիսանում է ժամանակակից գյուղատնտեսության զարգացման պարտադիր նախապայման<sup>14</sup>:

Հարկ է նշել տնտեսական գործընթացների վրա պետական ներգործության մեկ տեսակ ևս՝ ագրարային բարեփոխումներ: Ագրարային բարեփոխումներն իրենցից ներկայացնում են գյուղատնտեսության ոլորտում տնտեսական հարաբերությունների արմատական վերափոխման միջոցառումների համակարգ<sup>15</sup>:

Բարեփոխումները, որպես կարգավորման մեթոդ, ըստ էության հանդիսանում են յուրահատուկ երևույթ, որը նախնառաջ ուղղված է ներգործության ձևերի և մեթոդների կատարելագործմանը, ինստիտուտների փոխարինմանը: Պետությունը դիմում է այս մեթոդին, երբ գոյություն ունեցող տնտեսվարման համակարգը չի բավարարում նոր պայմաններին կամ թույլ չի տալիս հասնել անհրաժեշտ արդյունքի որևէ ոլորտում: Այսպիսով, բարեփոխումների իրականացումը տնտեսությունն արագ ցանկալի վիճակի բերելու մեթոդ է, երբ պետությունն ընդունակ է ավելի արագ և արդյունավետ լուծել տնտեսական հիմնախնդիրները, քան տնտեսվարող սուբյեկտները կամ շուկայական մեխանիզմը:

<sup>14</sup> Донченко А.С. Государственная поддержка сельскохозяйственного производства на региональном уровне: Метод, рекомендации. СибНИИЭСХ. Новосибирск, 2009. - 85 с.

<sup>15</sup> Нечитайло А. А. Особенности российской экономики в переходный период. – Самара: Изд-во СГАУ. 2010. – с. 38

Ագրարային ոլորտում բարեփոխումների հիմնական ուղղություններ կարող են լինել .

- ագրոարդյունաբերական համալիրի կայունացման միջոցառումների մշակում և իրականացում,
- գյուղատնտեսական և արդյունաբերական արտադրանքի գների անհամամասնության վերացում,
- հողային բարեփոխումներ,
- ագրարային տնտեսության գնային, հարկային, վարկային, բյուջետային, մաքսային և այլ կարգավորիչների կիրառում,
- շուկայական ենթակառուցվածքների ձևավորում,
- գյուղատնտեսությունում կառավարման համակարգի և մեթոդների վերակազմակերպում,
- գյուղի սոցիալական վերափոխումներ,
- կարգերի պատրաստում և այլն:

Այսպիսով, գյուղատնտեսության պետական կարգավորումը պետք է իրականացվի ինչպես վարչական, այնպես էլ տնտեսական և ինստիտուցիոնալ մեթոդներով:

Գյուղատնտեսության ոլորտում պետական աջակցության ձևերն ունեն որոշակի առանձնահարկություններ: Ժամանակակից տնտեսագիտական գրականության մեջ պետական աջակցության ձևերը դասակարգված են հետևյալ հիմնական խմբերի մեջ<sup>16</sup>.

1. Գյուղատնտեսական ապրանքարտադրողների եկամուտների աջակցություն, որը ներառում է հետևյալ պետական վճարները`
  - տարերային աղետների հետևանքով առաջացած վնասների փոխհատուցում,
  - արտադրության վերակազմակերպման (ցանքատարածությունների կրճատում, կենդանիների հարկադիր սպանդ և այլն) հետևանքով առաջացած վնասների փոխհատուցում,

---

<sup>16</sup> Котов Р.М. Сравнительная характеристика систем государственного регулирования и поддержки сельского хозяйства в зарубежных странах. Сборник научных трудов НГТУ; Новосибир. гос. техн. ун-т. Новосибирск, 2007. - Вып. 3(49). - с. 115

- մշակվող ցանքատարածությունների և կենդանիների գլխաքանակի միավորի հաշվով տրվող վճարներ:
- 2. Պարենային շուկայի վրաներգործություն, որը ներառում է՝
  - գյուղատնտեսական արտադրանքի գնային աջակցություն,
  - քվոտաների և սակագների սահմանում,
  - արտադրանքի արտահանման և ներմուծման մաքսատուրքերի սահմանում:
- 3. Ծախսերի փոխհատուցում՝
  - արտադրության միջոցների ձեռքբերման սուբսիդավորում,
  - պարարտանյութերի, թունաքիմիկատների, կերերի, քսանյութերի, վառելիքի, պահեստամասերի ձեռքբերման սուբսիդավորում,
  - վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում:
- 4. Շուկայի զարգացմանը աջակցություն, որը ներառում է պետական միջոցների հատկացում՝
  - շուկայական ծրագրերի մշակմանն ու իրականացմանը,
  - ապրանքների պահպանման, տրանսպորտային փոխադրումների ծախսերի սուբսիդավորում:
- 5. Արտադրական ենթակառուցվածքների զարգացման աջակցություն, որը ենթադրում է երկարաժամկետ բնույթ կրող միջոցառումների պետական ֆինանսավորում՝
  - արտադրական տարածքների շինարարության սուբսիդավորում,
  - հողաբարելավման սուբսիդավորում,
  - գյուղատնտեսական կոոպերատիվների կազմավորման աջակցություն:
- 6. Բյուջետային ծառայությունների ձևով իրականացվող աջակցություն: Բյուջետային ծառայություններին են վերաբերում՝
  - ագրարային ոլորտի բոլոր մակարդակներում կառավարչական ապարատի ֆինանսավորում,
  - բյուջետային ծառայություններ մատուցող գերատեսչությունների գործունեության ֆինանսավորում,
  - վերահսկող մարմինների ֆինանսավորում,

- ագրարային շուկաների մոնիթորինգի, տեղեկատվական ծառայությունների ֆինանսավորում,
- հողային կադաստրի վարման, հողօգտագործման վերահսկողությունն իրականացնող մարմինների ֆինանսավորում<sup>17</sup>:

Պետական աջակցության այս կամ այն մեթոդի ընտրությունը պետք է համապատասխանի բյուջետային միջոցների առավել արդյունավետ օգտագործման պայմանին:

Ագրարային ոլորտի պետական աջակցությունը և, ընդհանրապես, կարգավորումն իրականացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել պետության մասնակցությունը միջազգային կազմակերպություններին, քանի որ այդ ոլորտում բացի ներքին կանոններից, գործում են նաև միջազգային կանոնները: Սա հատկապես արդիական է՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության մասնակցությունը Առևտրի համաշխարհային կազմակերպությանը (ԱՀԿ), որին անդամակցող երկրները որոշակի պարտավորություններ են ստանձնում:

Ըստ Առևտրի համաշխարհային կազմակերպության չափանիշների՝ գյուղատնտեսության ոլորտում սուբսիդավորումը տարանջատվում է կանաչ, դեղին, կապույտ գամբյուղների, որոնք ապահովում են հետևյալ պահանջները՝

- «Կանաչ գամբյուղ»՝ այս խմբի մեջ ընդգրկված են այն սուբսիդիաները, որոնք առևտրի բնագավառում շեղումներ չեն առաջացնում, իսկ եթե դա տեղի է ունենում, ապա նվազագույն չափով: Այս գամբյուղի շրջանակներում ներառվող ծրագրերի թվին են պատկանում շրջակա միջավայրի պահպանման, վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարի, ենթակառուցվածքների զարգացման, կրթության, մասնագետների ուսուցման, հետազոտությունների, խորհրդատվության մատուցման, տեսչական ծառայությունների, եկամուտների ապահովագրման, մարքեթինգի ծառայությունների, տարածաշրջանային օգնու-

<sup>17</sup> Луговнина С. М. Направления государственного регулирования инвестиционной деятельности в АПК России / Вестник Казанского технологического университета. 2006. – N 6. С. 129

թյան ծրագրերի հետ կապված վճարումները, ինչպես նաև համեմատաբար վատ բնակլիմայական, էկոլոգիական և տնտեսական պայմաններում գտնվող տարածաշրջաններին աջակցությունը, տարերային աղետների դեպքում ցուցաբերվող օգնությունը և երկրի ներսում պարենային օգնության տրամադրումը:

- «Դեղին զամբյուղ»՝ այս խմբի մեջ են մտնում տեղական արտադրողներին տրվող այն սուբսիդիաները, որոնք վերաբերում են գյուղատնտեսական արտադրանքների և նյութատեխնիկական միջոցների ձեռքբերման գների կարգավորման համար պետական աջակցությանը: «Դեղին զամբյուղի» միջոցառումներն ունեն գյուղատնտեսական ապրանքների միջազգային առևտրի մրցակցային պայմանների խաթարման հետևանքներ, և Առևտրի համաշխարհային կազմակերպությունը պահանջում է դրանց կտրուկ սահմանափակում:
- «Կապույտ զամբյուղին» դասվող միջոցառումները նույնպես ուղղակի պետական աջակցության ձևեր են, սակայն ավելի թույլ ազդեցություն ունեն միջազգային առևտրում մրցակցային պայմանների խաթարման վրա: Ուստի, այն մասով, որը նպատակաուղղված է առանձին արտադրատեսակների հաստատագրված չափաքանակներին չգերազանցող արտադրության կարգավորմանը, չի սահմանափակվում: Իսկ այն մասով, որն ուղղորդվում է գյուղատնտեսական գործունեության իրականացնողների եկամուտների ավելացմանը, ենթարկվում է որոշակի սահմանափակումների<sup>18</sup>:

ԱՅԿ-ի պահանջների հետ կապված պետական ագրարային քաղաքականության կարևոր ուղղություն է դառնում պետական կարգավորման համակարգի կատարելագործումը, ագրարային ոլորտի ֆինանսավորման բավարարման արդյակ ապահովելու համար:

<sup>18</sup> ՀՀ կառավարության N 2310-Ն որոշումը գյուղատնտեսության սուբսիդավորման ուղղությունների և մեխանիզմների մասին հայեցակարգը հաստատելու մասին

### **1.3. Ագրարայ ին ու որտի պետական աջակցություն միջազգային փորձի ու սուբսիդիաների ու նրա**

Այսօր ագրարայ ին ու որտի պետական աջակցության արդյունավետ ձևի որոնման գիտական հիմնախնդիրը պահանջում է միջազգային փորձի ու սուբսիդիաների ու նրա՝ ՀՀ-ում տեղայնացման հնարավորությունների գնահատում: Տնտեսապես զարգացած երկրների մեծ մասն իրականացնում է խթանող ագրարային քաղաքականություն, որը ներառում է գյուղմթերք արտադրողներին զանազան դոտացիաների, սուբսիդիաների, արտոնությունների և այլ փոխհատուցումների տրամադրում: Առանձին երկրներում այդ փոխհատուցման չափը կարող է հասնել մինչև գյուղատնտեսական արտադրանքի արժեքի 70%-ին: Գյուղմթերք արտադրողներին առավելագույն աջակցություն են ցուցաբերում անբարենպաստ բնակլիմայական և աշխարհագրական պայմաններ ունեցող երկրները<sup>19</sup>:

Ագրարայ ին ու որտի պետական աջակցությունն իրականացվում է կարգավորման ուղղակի և անուղղակի մեթոդներով:

Չարգացած երկրներում կարելի է առանձնացնել պետական ֆինանսական աջակցության հետևյալ ուղղակի մեթոդները՝ ուղղակի պետական փոխհատուցումներ, տարերային աղետների հետևանքով կրած կորուստների փոխհատուցում, արտադրության վերականգնման հետ կապված կորուստների դիմաց տրվող վճարներ (ցանքատարածությունների կրճատման, անասունների հարկադիր սպանդի դիմաց տրվող վճարներ և այլն), միավոր տարածության կամ անասնազլխաքանակի դիմաց տրվող վճարներ, արտադրության միջոցների գնման ֆինանսավորում (օրինակ՝ պարարտանյութերի, թունաքիմիկատների և կերերի ձեռքբերման սուբսիդավորում), նպատակային և գիտահետազոտական ծրագրերի ֆինանսավորում:

Պետական աջակցության անուղղակի մեթոդների շարքին են դասվում գյուղատնտեսական արտադրանքի շուկայում գնային կարգավորումը, արտոնյալ ֆինանսավարկային աջակցությունը, արտոնյալ հարկադրման, սահմանաչափերի և արտահանման ու

<sup>19</sup> Հովհաննիսյան Ա. Ագրարային ու որտի պետական աջակցության մեթոդները զարգացած երկրներում և դրանց կիրառման հնարավորությունները ՀՀ-ում - «Ագրոգիտություն», գիտական ամսագիր N9-10, 2015թ. էջ 349

ներմուծման մաքսատուրքերի համակարգը, գյուղատնտեսական ապահովագրությունը<sup>20</sup>:

ԵՄ-ում ագրարային ոլորտի պետական կարգավորումն իրականացվում է Միասնական ագրարային քաղաքականության (ՄԱՔ, CAP – Common Agricultural Policy) շրջանակներում, որն իրենից ներկայացնում է գյուղատնտեսական սուբսիդիաների և այլ ծրագրերի համակարգ: ՄԱՔ-ի նպատակներն են՝

- գյուղատնտեսական արտադրողականության բարձրացումը,
- ԵՄ Ֆերմերների բարեկեցության ապահովումը,
- պարենային անվտանգությունն ապահովումը,
- բնական ռեսուրսների կառավարումը,
- գյուղական տարածքների պահպանությունը<sup>21</sup>:

Եթե սկզբնական շրջանում Միասնական ագրարային քաղաքականության նպատակը պարենի բավարար քանակությամբ արտադրության ապահովումն էր, ապա 1984թ.-ին այն բախվեց մեկ այլ խնդրի՝ դրագերարտադրության հետ: ՄԱՔ-ը դարձավ սեփական հաշվողական գոհը: Ֆերմաների արտադրողականությունը այնքան բարձրացավ, որ նրանք սկսեցին արտադրել պահանջվածից ավել գյուղմթերք: Որոշակի միջոցառումներ ձեռնարկվեցին արտադրության մակարդակը շուկայական պահանջարկին համապատասխանեցնելու համար<sup>22</sup>:

1992թ. ՄԱՔ-ը շուկայական աջակցությունից անցում կատարեց արտադրողների աջակցությանը: Գնային աջակցության ծավալները կրճատվեցին և նրան փոխարինելու եկավ ֆերմերներին ուղղակի աջակցությունը: 2003թ. բարեփոխումները վերացրեցին կապը սուբսիդիաների և արտադրության միջև: Ֆերմերները սկսեցին ստանալ վճարումներ բնապահպանական և սննդի անվտանգության ստանդարտների պահպանման համար<sup>23</sup>:

Սկզբնական շրջանում ՄԱՔ-ը իրականացվում էր Գյուղատնտեսության առաջնորդման և երաշխավորման եվրոպական

<sup>20</sup> Кучин С.А. Мировой опыт финансовой поддержки аграрного сектора экономики и возможность его адаптации в России / Управление экономическими системами (электронный журнал). – 2012. – 8(44)

<sup>21</sup> The EU explained: Agriculture, European Union, 2014, p. 3

<sup>22</sup> The Common Agricultural Policy – A story to be continued Luxembourg: Publications Office of the European Union, 2012. p. 7

<sup>23</sup> Gay S.H. Recent evolution of the EU Common Agricultural Policy (CAP): state of play and environmental potential. – MEACAP, 2005. p. 22



հիմնադրամի կողմից (EAGGF – European Agricultural Guidance and Guarantee Fund): Հիմնադրամի երաշխավորման հատվածը ֆինանսավորում էր շուկայի կարգավորման հետ կապված ծախսերը, որոնք ներառում էին գնային ինտերվենցիաները, արտադրությանն ուղղվող օժանդակությունները և հավելվածարները, ապրանքների պահպանման հետ կապված ծախսերի փոխատուցումները: Առաջնորդման հատվածն իրականացնում էր գյուղական տարածքների զարգացման հետ կապված ծախսերի ֆինանսավորումը:

2007թ.-ին Գյուղատնտեսությանն առաջնորդման և երաշխավորման եվրոպական հիմնադրամին փոխարինելու եկան Գյուղատնտեսության երաշխավորման եվրոպական հիմնադրամը (EAGF – European Agricultural Guarantee Fund) և Գյուղական տարածքների զարգացման եվրոպական գյուղատնտեսական հիմնադրամը (EAFRD – European Agricultural Fund for Rural Development)<sup>24</sup>: Եվրոպայում գյուղատնտեսության ֆինանսավորումն իրականացվում է ԵՄ բյուջեից՝ կազմելով նրա ծախսերի զգալի մասը: Սակայն, հարկ է նշել, որ նրա մասնաբաժինը աստիճանաբար կրճատվում է: Այսպես, եթե գյուղատնտեսության աջակցությունը 1984թ.-ին կազմել է ԵՄ բյուջեի ծախսերի 72%-ը, ապա 2011թ.-ին այդ ցուցանիշը իջել է մինչև 43%՝ կազմելով 58 մլրդ եվրո<sup>25</sup>: Համեմատության համար նշենք, որ 2011թ.-ին ՀՀ գյուղատնտեսությանն ուղղված միջոցները կազմել են պետական բյուջեի ծախսերի ընդամենը 0.55%-ը<sup>26</sup>:

Գյուղատնտեսությանն ուղղվող հսկայական բյուջետային միջոցները ստիպում են ԵՄ-ին անընդհատ վերանայել Միասնական ագրարային քաղաքականությունը: Այսպես, 2013թ. բարեփոխումների արդյունքում նախատեսվում է 2014-2020թթ. ընթացքում աստիճանաբար կրճատել գյուղատնտեսությանն աջակցությանն ուղղվող ֆինանսական ռեսուրսների մասնաբաժինը ԵՄ բյուջեի մեջ: Միևնույն ժամանակ նախատեսվում է ՄԱԲ-ը դարձնել ավելի արդյունավետ, նպատակաուղղված և ճկուն: Միության անդամ երկրները հնարավորություն են ստանում առավել ճկուն կերպով

<sup>24</sup> [stats.oecd.org/glossary/detail.asp?ID=864](http://stats.oecd.org/glossary/detail.asp?ID=864)

<sup>25</sup> [www.europa.eu/rapid/press-release\\_MEMO-13-631\\_en.htm](http://www.europa.eu/rapid/press-release_MEMO-13-631_en.htm)

<sup>26</sup> ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվություն

Ֆինանսավորել և իրականացնել գյուղատնտեսության աջակցության այս կամ այն ծրագրերը<sup>27</sup>:

Չնայած նրան, որ ԵՄ-ում գյուղատնտեսության կարգավորումն իրականացվում է Միասնական ագրարային քաղաքականության միջոցով, այնուամենայնիվ, անդամ երկրներում գյուղատնտեսության աջակցությունն ունի որոշակի առանձնահատկություններ:

Գերմանիայում ագրոպարենային համակարգի պետական աջակցությունն իրականացվում է արտոնյալ վարկավորման, դոտացիաների, սուբսիդիաների և ուղղակի վճարների միջոցով: Դոտացիաների մեջ մտնում են՝

- վճարներ պատրաստի արտադրանքի համար, ընդ որում գյուղատնտեսության արտադրության ծավալները սահմանափակված են որոշակի չափաքանակով՝ շուկայի գերիազեցումը կանխելու նպատակով,

- ներդրումների (օրինակ, հիմնական միջոցների ձեռքբերման, բարձր մթերատվություն ունեցող անասունների և սերմերի գնման), վարկերի տոկոսավճարների, քսանյութերի գնման դիմաց տրվող փոխհատուցումներ,

- գյուղատնտեսական շրջանառությունից դուրս բերվող հողերի, ինչպես նաև Էկոլոգիական միջոցառումների դիմաց փոխհատուցումներ<sup>28</sup>:

Մեծ Բրիտանիայում գյուղատնտեսության աջակցության համար գործում է Գյուղատնտեսական հիպոթեքային կորպորացիան, որը արտոնյալ պայմաններով (տոկոսադրույքը սկսած 3.5%-ից) վարկեր է տրամադրում հողերի և Ֆերմաների ձեռքբերման, շինությունների և ենթակառուցվածքների կառարելագործման, գործունեության վերակազմակերպման համար<sup>29</sup>: Իսկ Ֆրանսիայում կենտրոնական է «Կրեդիտ Ագրիկոլ» բանկի դերը գյուղատնտեսության վարկավորման գործում: Վարկավորման մեխանիզմը հիմնված է սուբսիդավորման վրա, երբ պետությունը

<sup>27</sup> Overview of CAP Reform 2014-2020 / Agricultural Policy Perspectives Brief N5. – 2013. p. 5

<sup>28</sup> German Agriculture Facts and Figures. – Berlin. 2010. p. 20-24

<sup>29</sup> Down to earth: straightforward finance for farms and rural businesses. – 2015. p. 2

փոխհատուցում է վարկի անվանական և արտոնյալ տոկոսադրույքների տարբերությունը:

Ֆինլանդիայում ագրարային աջակցության քաղաքականությունը հիմնված է ինչպես ԵՄ Միասնական ագրարային քաղաքականության կողմից սահմանված սխեմաների, այնպես էլ համատեղ ֆինանսավորվող, անբարենպաստ տարածքների և շրջակա միջավայրի պահպանման դիմաց տրվող վճարների վրա: Ֆինլանդիայի յուրահատկությունը կայանում է նրանում, որ երկիրը բաժանված է աջակցության 7 գոտիների և յուրաքանչյուրին տրամադրվող աջակցության ծավալները տարբեր են: Վաթսուներկուերորդ աստիճանի հյուսիսային լայնություններից վեր գտնվող տնտեսությունների համար պետությունը տրամադրում է ավելի մեծ սուբսիդիաներ՝ մեկ հեկտարի կամ մեկ անձի հաշվով<sup>30</sup>: Լեռնային շրջաններում այդ ցուցանիշը կարող է կազմել մինչև 450 եվրո մեկ հեկտարի հաշվով, մինչդեռ այլ վայրերում այդ աջակցության չափը կազմում է 150-250 եվրո<sup>31</sup>:

ԱՄՆ-ում պետական կարգավորման և աջակցության հիմնական գործիքներ են հանդիսանում ուղղակի և հակացիկլային վճարումները, ինչպես նաև բուսաբուծական հիմնական մթերքների գների պաշտպանության միջոցառումները, որոնք իրականացվում են ԱՄՆ գյուղատնտեսության նախարարության ենթակայության տակ գտնվող Ապրանքավարկային կորպորացիայի (Commodity Credit Corporation) կողմից՝ գյուղատնտեսական արտադրանքի գրավի դիմաց տրվող վարկերի միջոցով<sup>32</sup>:

Ընդհանուր առմամբ ԱՄՆ-ում գյուղատնտեսական արտադրանքի գնային կարգավորումն իրականացվում է երկու տեսակի գների միջոցով՝

- նպաստակային, որոնք տարածվում են առավել կարևոր գյուղատնտեսական արտադրանքի տեսակների (ցորեն, եգիպտացորեն, սոյա, բամբակ, բրինձ) վրա: Այս գներն արտադրողներին ապահովում են ընդլայնված վերարտադրության ինքնաֆինանսավորման համար

<sup>30</sup> Bjarnason M., The Political Economy of Joining the European Union. Iceland's Position at the Beginning of the 21st Century, Reykjavik, 2010, p. 177

<sup>31</sup> Niemi J., Ahlstedt J., Finnish Agriculture and Rural Industries, Helsinki, 2014. p. 51

<sup>32</sup> Алексеева С.А. Отечественный и зарубежный опыт финансовой поддержки сельского хозяйства / Вестник Финансового университета. – N 3, 2010. с. 35

անհրաժեշտ եկամուտների նվազագույն մակարդակ: Նպատակային ինքնավելի ցածր գներով արտադրանքի իրացման դեպքում արտադրողը ստանում է փոխատուցում տարբերության չափով: Ընդ որում, փոխատուցում տրամադրվում է հակացիկլային ծրագրում ցուցակագրված \$երմերներին և դրա գումարը չի կարող գերազանցել կառավարության կողմից սահմանված սահմանաչափը: Այսպես, 2002-2009թթ. ցորենի նպատակային գինը սահմանվել է 3.92 դոլար մեկ բուշելի համար, իսկ 2010-2012թթ.-ին՝ 4.17 դոլար<sup>33</sup>: Օրինակ, եթե \$երմերը 2010թ.-ին ցորենն իրացրել է 3.9 դոլարով, ապա իրացրած յուրաքանչյուր բուշելի համար ստացել է 0.27 դոլար փոխատուցում:

- գրավադրման գներ, որով գյուղմթերք արտադրողները Ապրանքավարկային կորպորացիային որպես գրավ են հանձնում իրենց արտադրանքը այն դեպքում, երբ շուկայական գներն ավելի ցածր են լինում գրավադրման գներից: Շուկայական գների բարձրացման դեպքում \$երմերները կարող են ետ գնել արտադրանքը և վաճառել շուկայում: Եթե 9 ամսվա ընթացքում գրավադրված արտադրանքը ետ չի գնվում, այն անցնում է Ապրանքավարկային կորպորացիայի սեփականությանը, իսկ արտադրողը ստանում է դրամական փոխատուցում գրավադրման գնի չափով՝ հանած պահպանության ծախսերը: Ըստ էության, գրավադրման գինն իրենից ներկայացնում է գյուղատնտեսական արտադրանքի երաշխավորված նվազագույն գին, որը արտադրողին հնարավորություն է ընձեռում ստանալ եկամուտ գրավադրման և շուկայական գների տարբերության չափով: Արտադրանքի գրավադրման ծավալների որևէ սահմանափակում գոյություն չունի:

ԱՄՆ-ում առանձին ապրանքատեսակների համար կարող են սահմանվել աջակցության առանձնահատուկ մոտեցումներ: Այսպես, շաքարեղեգի և շաքարի ճակնդեղի արտադրողներն ավանդաբար պաշտպանվում են ներմուծման սահմանաչափերի սահմանման միջոցով, իսկ կաթի արտադրության աջակցությունն իրականացվում է կառավարության կողմից կարագի, չոր կաթի և պանրի նվազագույն

<sup>33</sup> Farm Commodity Programs in the 2008 Farm Bill, 2008. p. 11

շուկայական գների սահմանման միջոցով՝ ներմուծման սահմանաչափերի գուժակցմամբ:

Պետական կարգավորման կարևորագույն բաղադրիչ է հանդիսանում ագրարային ոլորտի ֆինանսավարկային աջակցությունը: Այդ նպատակով ստեղծվել են մի շարք կազմակերպություններ, որոնցից կարևորագույնը Ֆերմերային վարկերի համակարգն է (Farm Credit System), որն իրենից ներկայացնում է վարկատու կազմակերպությունների և մասնագիտացված հիմնարկների ցանց: Այս համակարգի նպատակը մրցունակ տոկոսադրույքներով գյուղատնտեսական նշանակության կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ վարկերի տրամադրումն ու ապահովագրական ծառայությունների մատուցումն է<sup>34</sup>:

Ագրարային ոլորտում զգալի հաջողության հասած երկիր է հանդիսանում Իսրայելը: Վերջինիս տարածությունը կազմում է ընդամենը 21 հազար ք. կմ., ինչը համադրելի է 33 տարածքի հետ: Ընդ որում, երկրի տարածության 60%-ը անապատ է, և մշտապես առկա է ջրային ռեսուրսների անբավարարություն: Գյուղատնտեսական արտադրանք արտադրողներից յուրաքանչյուրն ընդունակ է պարենով ապահովել ու 95 բնակչի: Համեմատության համար նշենք, որ ԱՄՆ-ում այդ ցուցանիշը կազմում է 1:79, Ռուսաստանում՝ 1:14.7, Չինաստանում՝ 1:3.6, իսկ Հայաստանում՝ 1:2.8<sup>35</sup>:

Իսրայելում բանջարեղենի, մրգի և ծաղիկների զգալի մասը աճեցվում է ջերմոցային տնտեսություններում: Եթե բաց գրունտում լույսի բերքատվությունը կազմում է 60-80 տ/հա, ապա համակարգիչների միջոցով կարգավորվող կլիմա ունեցող ջերմատներում՝ 500 տ/հա: Բարձր է նաև գյուղատնտեսական կենդանիների մատվությունն ու կաթնատվությունը: Անասնաբուծության ճյուղն ապահովում է մսամթերքի պահանջարկի 80%-ը, իսկ 1 կովի տարեկան կաթնատվությունը կազմում է 12 հազար լիտր: Նման բարձր բերքատվություն և մթերատվություն ունենալու շնորհիվ, երկիրը ոչ միայն ապահովում է ներքին

<sup>34</sup> Черняков Б.А. Калифорнийская модель аграрного сектора США. М.:Изд-во ЭРД, ВИАПИ им. А.А. Никонова, 2007. 396 с.

<sup>35</sup> [www.kazakhemb.org.il/?CategoryID=228&ArticleID=1239](http://www.kazakhemb.org.il/?CategoryID=228&ArticleID=1239)

պահանջարկը, այլ նաև գյուղատնտեսական արտադրանք է արտահանում Եվրոպա, Ասիա, Աֆրիկա և ԱՄՆ: Իսրայելը զգալի ձեռքբերումներ ունի նաև ոռոգման ասպարեզում: Այստեղ հիմնականում կիրառվում է ոռոգման կաթիլային եղանակը, ինչը հնարավորություն է ընձեռում կրճատել ջրի կորուստները 20%-ով, իսկ ոռոգման ավտոմատիզացված համակարգերի դեպքում էլ ավելի է մեծանում ջրի տնտեսումը: Կաթիլային ոռոգման տեխնոլոգիան համարվում է Իսրայելի կարևորագույն ձեռքբերումներից մեկը<sup>36</sup>:

Իսրայելում կարևորվում է ագրարային խորհրդատվության դերը, որն իրականացվում է գյուղատնտեսության նախարարության կողմից: Յուրաքանչյուր գյուղատնտեսական ասպարեզ արտադրող տարեկան 100 ժամ խորհրդատվական ծառայությունն ստանալու իրավունք ունի, որի ծախսերի 70%-ը հոգում է պետությունը, իսկ 30%-ը՝ ֆերմերները: Կիրառվում են խորհրդատվության բազմաթիվ մեթոդներ՝ անհատական խորհրդատվություններ, մեկօրյա սեմինարներ, դասընթացներ, սեզոնային հանդիպումներ, հեռախոսային խորհրդակցություններ, համակարգչային վերլուծություններ և այլն:

Իսրայելի գյուղատնտեսության զարգացման բարձր մակարդակը պայմանավորված է ֆերմերների և պետության կողմից ֆինանսավորվող գիտնականների համագործակցությամբ, գյուղատնտեսության բոլոր բնագավառներում կատարելագործված մեթոդների մշակմամբ և ներդրմամբ, ինչպես նաև տեխնիկական նորամուծությունների, ժամանակակից ոռոգման համակարգի և նորագույն ագրոտեխնիկական սարքավորումների կիրառմամբ: Գյուղատնտեսությունն Իսրայելում գլխավորապես հիմնվում է գիտական հետազոտությունների վրա: Մրցակցությունը, անբարենպաստ կլիմայական պայմանները, ջրային ռեսուրսների կրճատումը և որակի վատթարացումը, տեխնոլոգիական բազայի թարմացման անհրաժեշտությունը առաջնային են դարձնում գիտական հետազոտությունների դերը: Հրեագիտնականները մշակում են բույսերի հիբրիդային նոր սորտեր, որոնք դիմացկուն են հիվանդությունների, անբարենպաստ կլիմայական պայմանների

<sup>36</sup> Забутый А. Сельское хозяйство Израиля. Hannoversches Jahrbuch Band 3: Ганновер. 2012. с. 21

Նկատմամբ և ունեն բարձր բերքատվություն: Հետազոտությունները 70-75%-ը իրականացվում է գյուղատնտեսության նախարարության առընթեր Գյուղատնտեսական հետազոտությունների վարչության կողմից: Գյուղատնտեսական հետազոտություններ իրականացվում են նաև երկրի համալսարաններում: Ընդ որում, հետազոտությունների ֆինանսավորումն իրականացվում է հիմնականում հասարակական կազմակերպությունների կողմից, իսկ հետազոտությունների արդյունքները հրատարակվում են հանրամատչելի հրատարակչություններում: Պետական բյուջեից ազրարային ոլորտին վերաբերող հետազոտությունների իրականացմանը տարեկան ուղղվում է 50 մլն. դոլար:

Ներկայումս ազրարային ոլորտի պետական աջակցությունն Իսրայելում իրականացվում է հետևյալ ուղղություններով՝

- արտադրության գործընթացի և արտադրված արտադրանքի որակի նկատմամբ վերահսկողություն,
- առանձին գյուղատնտեսական արտադրատեսակների արտադրության կարգավորում ֆինանսավորման պայմանների փոփոխության միջոցով,
- շուկայի պահանջներից ելնելով՝ թիրախային սուբսիդավորման իրականացում,
- հարկային արտոնությունների տրամադրում,
- գյուղատնտեսական ուղղվածություն ունեցող ուսումնական հաստատությունների պահպանում,
- արտահանման խթանում սուբսիդիաների տրամադրման և գովազդի միջոցով,
- պետական ներդրումների իրականացում գիտական հետազոտությունների ոլորտ:

Գյուղատնտեսական մթերքների խոշորագույն արտադրողներից է հանդիսանում Հնդկաստանը: Գյուղատնտեսությանը բաժին է ընկնում ՀՆԱ-ի 25%-ը, և այն հանդիսանում է Հնդկաստանի տնտեսության առանցքային ճյուղերից մեկը, որն ապահովում է պարենային անվտանգության բավարար

մակարդակ, և միևնույն ժամանակ ստեղծում է հումքային բազա արդյունաբերության համար: Արտահանման կառուցվածքում գյուղատնտեսական արտադրանքի մասնաբաժինը կազմում է 13%: Ինչպես Հայաստանի, այնպես էլ Հնդկաստանի գյուղատնտեսությանը բնորոշ է հողերի մեծ կտրտվածությունը, ոռոգման համակարգի անկատարությունը, գյուղական բնակչության աղքատությունը<sup>37</sup>:

Գյուղատնտեսության վարկավորման համար 1982թ.-ին ստեղծվել է Գյուղատնտեսության և գյուղական տարածքների զարգացման ազգային բանկը: Բանկի համար ֆինանսավորման աղբյուր են հանդիսանում երկարաժամկետ գյուղատնտեսական վարկերի ազգային հիմնադրամը, ինչպես նաև նրա կողմից թողարկվող պարտատոմսերը, Հնդկաստանի Պահուստային բանկի փոխառությունները, կառավարության կողմից հավանության արժանացած այլ կազմակերպությունների պարտատոմսերը, ինչպես նաև օտարերկրյա աղբյուրներից ստացված միջոցները: Բանկի գլխավոր գործառույթը առևտրային բանկերի, Հնդկաստանի Պահուստային բանկի, կոոպերատիվ բանկերի, հիպոթեքային բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների կողմից գյուղացիական տնտեսություններին և վերամշակող արդյունաբերությանը տրամադրված վարկերի վերաֆինանսավորումն է: Բացի այդ, բանկը իրականացնում է գյուղատնտեսության և գյուղական տարածքների զարգացման գործառույթներ՝ այլ կազմակերպությունների գործունեության համակարգման միջոցով, և հիմք է ստեղծում ագրարային ոլորտում հետազոտությունների իրականացման համար: Բանկն իրականացնում է նաև վերահսկող և կարգավորող գործառույթներ<sup>38</sup>:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում գյուղատնտեսության ֆինանսավորման ոլորտում Պերուի փորձի ուսումնասիրությունը: Պերուում ձևավորված Գյուղատնտեսության զարգացման բանկի (BAP – Banco Agrario del Peru) գործունեության նպատակը բամբակ, շաքարավազ և բրինձ արտադրողներին վարկերով ապահովումն է: 1970-80-ական թվականներին բանկի մասնաճյուղերի և աշխատակիցների թվաքա-

<sup>37</sup> [www.agroekonomika.ru/problemy-selskogo-khozyaistva-indii](http://www.agroekonomika.ru/problemy-selskogo-khozyaistva-indii)

<sup>38</sup> [www.lawinrussia.ru/node/112027](http://www.lawinrussia.ru/node/112027)



նակը զգալիորեն ընդլայնվեց՝ նպաստելով գյուղատնտեսության վարկավորման թե՛ ծավալների և թե՛ ուղղությունների ընդլայնմանը: Սակայն անձնակազմի թվաքանակի աճը հանգեցրեց վարչական ծախսերի ավելացմանը, որը ինֆլյացիայի բարձր տեմպերի համադրմամբ, բերեց տոկոսադրույքների աճին: Պերուի կառավարությունը պարտադրեց BAP-ին առավել անբարենպաստ տարածաշրջանների ֆերմերներին վարկեր տրամադրել 0% տոկոսադրույքով՝ խոստանալով, որ կփոխհատուցի այդ տոկոսադրույքը, սակայն այդ խոստումը այդպես էլ չկատարվեց:

Իր գործունեության ընթացքում BAP-ը զգալի արդյունքներ է ձեռքբերում՝ ընդլայնելով ֆերմերների վարկային սպասարկումը 4%-ից մինչև 25%: 1980-ական թվականների վերջին BAP-ը վարկեր էր տրամադրում այն ֆերմերներին, որոնք մշակում էին իրենց հողակտորների առավազն կեսը: BAP-ի վարկավորման ծավալների աճը հանգեցրեց առևտրային բանկերի դուրսմղմանը: Եթե 1950-ական թվականներին BAP-ը տրամադրում էր ամբողջ գյուղատնտեսական վարկերի մեկ երրորդը, իսկ մնացածը ապահովվում էր առևտրային բանկերի կողմից, ապա արդեն 1970-ական թվականներին BAP-ի մասնաբաժինը աճեց մինչև 90%: Միևնույն ժամանակ վարկերի ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքում նվազեց բանկային ավանդների դերը, և էապես աճեց դոնորների և կենտրոնական բանկի դերը: Դա պայմանավորված էր նրանով, որ արտաքին ֆինանսական ռեսուրսներն ավելի էժան էին, քան բնակչության դեպոզիտները:

Չետագայում BAP-ը բախվեց մի շարք ներքին և արտաքին խնդիրների: Արտաքին խնդիրները BAP-ի վերահսկողությունից դուրս էին: Դրանք էին՝ անկայուն մակրոտնտեսական միջավայրը, անբարենպաստ ֆինանսական քաղաքականությունը (տոկոսադրույքների առավելագույն սահմանաչափի առկայություն, որը սահմանափակում էր ֆինանսական պրոդուկտների արժեքի սահմանումը ծախսերին և ռիսկին համապատասխան), քաղաքական դիրեկտիվներ (երբեմն վարկերի հաստատման և վերաֆինանսավորման որոշումները կայացվում էին բանկից դուրս): Ներքին խնդիրներից էին ավանդների պակասը, կախվածությունը արտաքին

Ֆինանսավորումից, ոչ բանկային մշակույթը և բարձր վարչական և գործարքային ծախսերը:

Սակայն Գյուղատնտեսության նախարարության հետ սերտ կապերը հանգեցրին նրան, որ BAP-ը սկսեց վարձակալել ոչ թե բանկային, այլ գյուղատնտեսական կրթություն և ևնեցող անձանց: Հաջողությունը չափվում էր տրամադրված վարկերի ծավալով, մշակաբույսերի ցանքատարածություններով, ներդրումների ծավալով: Միևնույն ժամանակ գրեթե ուշադրություն չէր դարձվում գործարքային և վարչական ծախսերին ծառայությունների որակին և ֆինանսական նորամուծություններին: Որոշ դեպքերում բանկը ստիպված էր ցածր տոկոսադրույք սահմանել այն վարկերի համար, որոնք ունեին առավելագույն վարչական ծախսեր: Արդյունքում BAP-ը փլուզվեց՝ ստեղծելով հսկայական բաց ֆերմերներին ծառայությունների մատուցման ոլորտում<sup>39</sup>:

Գնահատելով միջազգային փորձի դրական կողմերը, կարող ենք եզրակացնել, որ զարգացած շուկայական տնտեսություն և ևնեցող երկրներում գյուղատնտեսության ֆինանսական աջակցության համակարգը բավականին բարդ մեխանիզմ է, որն իր մեջ ներառում է ֆերմերների եկամուտների, ագրարային արտադրության կառուցվածքի, ֆինանսավարկային համակարգի վրա ազդող գործիքների ամբողջություն: Հայաստանի պարագայում աջակցության այս կամ այն մեթոդը ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաև բյուջետային միջոցների սղությունը, որի պատճառով զարգացած երկրներում օգտագործվող միջարք մեթոդներ պարզապես կիրառելի չեն: Մասնավորապես, խոսքը վերաբերում է ԵՄ-ում կիրառվող ուղղակի պետական ֆինանսական աջակցության մեթոդներին (միավոր ցանքատարածության կամ անասնազլխաբանակի դիմաց տրվող վճարներ, գյուղատնտեսության ոլորտում ներգրավված մեկ անձի հաշվով տրվող վճարներ, բնապահպանական վճարներ), որոնք պահանջում են հսկայական բյուջետային հատկացումների իրականացում: Մինչդեռ ԱՄՆ-ի փորձը, որտեղ հիմնականում կիրառվում են անուղղակի աջակցության մեթոդներ, կարող է դրական լինել ՀՀ-ում հնարավոր կիրառման տեսանկյունից:

<sup>39</sup> Coffey E. Agricultural Finance: Getting the Policies Right.: Food and Agriculture Organization of the United Nations (FAO), 1998, p. 5-6

Հնդկաստանի և Պերուի փորձի ուսումնասիրությունը ցույց էն տալիս է, որ անհրաժեշտ է ՀՀ-ում ևս ձևավորել գյուղատնտեսության ոլորտի վարկավորմամբ զբաղվող մասնագիտացված կառույց: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է միջոցառումներ ձեռնարկել տվյալ կառույցին էժան ֆինանսական ռեսուրսներով ապահովելու համար, որը հնարավորություն կընձեռի նվազեցնել տրամադրվող վարկերի տկոսադրույթները: Իսկ Իսրայելի՝ ագրարային ոլորտում ձևավորված փորձի ուսումնասիրությունը վկայում է գիտական հետազոտությունների և նորամուծությունների չափազանց կարևոր դերի մասին: ՀՀ-ում ևս պետական աջակցությունը պետք է ուղղված լինի ոլորտում գիտական հետազոտությունների իրականացմանը և նորամուծությունների կիրառման միջոցով արդյունավետության բարձրացմանը:

ՀՀ-ում հեռանկարային է ագրարային ոլորտի պետական կարգավորման և աջակցության հետևյալ գործիքների և լծակների կիրառումը՝

- գնային կարգավորում,
- առանձին արտադրատեսակների ներմուծման սահմանաչափերի կիրառում,
- ագրոպարենային համակարգի ենթակառուցվածքների, այդ թվում՝ շինարարական աշխատանքների, ոռոգման համակարգերի կատարելագործման ծրագրերի ֆինանսավորում,
- ապահովագրական համակարգի ներդրում:

## ԳԼՈՒԽ 2.

### ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՎԻՃԱԿԸ ԵՎ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

#### 2.1. ՀՀ տնտեսության ներդրումային միջավայրը

ՀՀ ներդրումային ոլորտում պետական քաղաքականության հիմնական խնդիրներն են՝ ներդրումային միջավայրի բարելավումը, օրենսդրական դաշտի կատարելագործումը և տնտեսության մեջ ներդրումների, այդ թվում՝ օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ) խթանումը: Ներդրումային քաղաքականության արդյունավետ իրականացմամբ է մեծապես պայմանավորված երկրի տնտեսական զարգացման հետագա ընթացքը: ՀՀ տնտեսությունում իրականացվող ներդրումների աճի ապահովումը հնարավորություն է կտա լուծել մի շարք կարևորագույն խնդիրներ, ինչպիսիք են՝ աշխատատեղերի ստեղծումը, շուկայական տնտեսությանը հատուկ նոտ-հատների ներգրավումը, նոր շուկաների բացահայտումը, նրանց հասանելիությունը, այդ շուկաներ մուտք գործելու հնարավորությունները և այլն:

Ներդրումային միջավայրը տնտեսական, քաղաքական, սոցիալական, իրավական և տեխնոլոգիական պայմանների ամբողջությունն է, որոնք բնութագրում են տվյալ երկրում կամ տարածաշրջանում ներդրումներ կատարելու հնարավորությունը<sup>40</sup>:

Ներդրումային միջավայրի վրա ազդող գործոններն են՝

- երկրի տնտեսության ընդհանուր դրությունը և զարգացման դինամիկան,
- սոցիալ-քաղաքական համակարգի կայունությունը,
- շուկայական հարաբերությունների և ենթակառուցվածքների զարգացվածության աստիճանը,
- պետության տնտեսական (\$ինանսական, հարկային, մաքսային) քաղաքականությունը,

<sup>40</sup> Максимова В.Ф. Реальные инвестиции / Московская финансово-промышленная академия. М.: МФПА, 2005. с. 13

- ներդրումային գործունեության իրավական բազայի կատարելությունը,
- օտարերկրյա կապիտալի ներգրավման պայմանները<sup>41</sup>:

ՀՀ շուկայական տնտեսության անցմանը զուգահեռ փոխվել է նաև ներդրումների ֆինանսավորման կառուցվածքը: Խորհրդային Միության տարիներին ներդրումներն իրականացվում էին գլխավորապես կենտրոնացված միջոցների հաշվին: Տնտեսվարման շուկայական մեխանիզմին անցման և պետության կարգավորիչ դերի փոփոխության պայմաններում մասնավոր ներդրումների բաժինը սկսեց աճել:

2011-2015թթ. ընթացքում հիմնական միջոցների գործարկման և կապիտալ ներդրումների ֆինանսավորման ծավալները դրսևորել են տատանողական դինամիկա՝ հիմնականում ունենալով նվազման միտում: Եթե 2011թ.-ին հիմնական միջոցների գործարկմանն ուղղվել է 215 մլրդ. դրամ, ապա 2015թ.-ին այն կազմել է 157 մլրդ. դրամ, այսինքն ներդրումները նվազել են շուրջ 27%-ով: Կապիտալ ներդրումները նույնպես նվազել են: 2015թ.-ին անկումը կազմել է մոտ 5%: Ուսումնասիրվող տարիներին կապիտալ ներդրումների ընդհանուր ծավալում ամենամեծ մասնաբաժին ունեցել են կազմակերպությունները: Այս ցուցանիշը տատանվել է 42-49%-ի սահմաններում: Ֆինանսավորման հաջորդ խոշոր աղբյուրն են հանդիսացել բնակչության միջոցները, որոնց բաժին է ընկել կապիտալ ներդրումների 16-29%-ը: Ընդ որում, 2013-2015թթ. ընթացքում հիմնական միջոցների գործարկման ծախսերի մեջ ամենամեծ մասնաբաժին ունեցել է բնակչությանը (50-58%): Կարող ենք եզրակացնել, որ ընդհանուր առմամբ, մասնավոր հատվածի՝ կազմակերպությունների և բնակչության կատարած ներդրումների մասնաբաժինն ունի աճման միտում, ինչը շուկայական տնտեսության զարգացման վկայականն է: Ինչ վերաբերում է պետական բյուջեից ֆինանսավորվող կապիտալ ներդրումներին, ապա այն նշանակալի կրճատվել է՝ 2011թ.-ի 17.6%-ից մինչև 13.6% 2015թ.-ին: Ագրարային ոլորտում կատարված ներդրումները նույնպես

<sup>41</sup> Հովհաննիսյան Ա. «ՀՀ ագրարային ոլորտի ներդրումային միջավայրի բարելավման ուղիները» - «Ագրոգիտություն», գիտական ամսագիր N1-2, 2016 էջ 11

դրսևորել են տատանողական դինամիկա՝ ունենալով անկման միտում: Գերակա հռչակված այս ոլորտում կատարված կապիտալ ներդրումների մասնաբաժինը տատանվել է ընդամենը 1.5-6.5%-ի սահմաններում (տե՛ս հավելվածներ 1, 2):

Ներդրումային միջավայրի վրա ազդող կարևորագույն գործոններից մեկը քաղաքական կայունությունն է: Հնարավոր ներդրումների ներգրավման տեսանկյունից քաղաքական անկայունությունը խրախուսող երևույթ է: Այս առումով ՀՀ-ը համարվում է բարձր ռիսկային երկիր: ՀՀ ռիսկային ներդրումային երկիր լինելը հիմնականում պայմանավորված է արտաքին քաղաքականության անկայունությամբ, որը դրսևորվում է Լեռնային Ղարաբաղի շարունակվող հակամարտության հետևանքով իր չորս սահմաններից երկուսի (Թուրքիայի և Ադրբեյջանի) հետ փակ լինելով:

Հայաստանի Հանրապետության ներդրումային միջավայրը կարելի է բնութագրել նաև միջազգային կազմակերպությունների կողմից հաշվարկվող ցուցանիշների միջոցով: Համաշխարհային տնտեսական ֆորումի (ՀՏՖ) կողմից ներկայացվող Համաշխարհային մրցունակության զեկուլյցն իր վերլուծության ներքում ամփոփում և համեմատվող երկրներին դասակարգում է Համաշխարհային մրցունակության ցուցչի (ՀԱՄ) միջոցով: ՀԱՄ ցուցիչը, հաշվարկվելով մրցունակության 12 հենասյունների հիման վրա, երկրների մրցունակության ամփոփ գնահատական է տալիս<sup>42</sup>: Վարկանիշերի հաշվարկման հիմքում ընկած են վիճակագրական տվյալներ և ընկերությունների ղեկավարների հարցման արդյունքները: Ընկերությունների ղեկավարների հարցումը տարեկան կտրվածքով իրականացվում է ՄՀԶ-ում ներառված երկրներում՝ ՀՏՖ-ի և Համաշխարհային մրցունակության ցանցի գործընկեր կազմակերպությունների կողմից: Համաձայն Մրցունակության 2015-2016թթ. համաշխարհային զեկուլյցի, Հայաստանը 4.01 միավորով 140 երկրների շարքում զբաղեցնում է 82-րդ տեղը<sup>43</sup>: ԱՊՀ տարածաշրջանի երկրների խմբում զգալի առաջընթաց են արձանագրել Տաջիկստանը

<sup>42</sup> [www.armef.com/hy/news/meknabanutyun/hayastany-3-ketov-barelavel-e-mrcunakutyuny/](http://www.armef.com/hy/news/meknabanutyun/hayastany-3-ketov-barelavel-e-mrcunakutyuny/)

<sup>43</sup> Schwab K. "The Global Competitiveness Report 2015-2016", World Economic Forum. 2015.

(11 կետով), Ռուսաստանը (8 կետով) և Ղազախստանը (8 կետով): Հայաստանի գրանցել է առաջընթաց 3 կետով (աղյուսակ 2.1.1):

2015-2016թթ. գեկույցում Հայաստանի առաջընթացը գլխավորապես պայմանավորված է եղել ապրանքների շուկայի արդյունավետության և աշխատուժի շուկայի արդյունավետության ցուցանիշների բարելավմամբ, որոնց գծով ՀՀ դիրքը բարձրացել է համապատասխանաբար 14 և 16 կետով (աղյուսակ 2.1.2):

ԱՊՅ երկրների վարկանիշները ըստ մրցու նակու թյան համաշխարհային ցուցչի<sup>44</sup>

Երկիրը	2014-2015թթ. 144 երկրների շարքում	2015-2016թթ. 140 երկրների շարքում	Փոփոխությունը
Ադրբեջան	38	40	-2
Ղազախստան	50	42	+8
Ռուսաստան	53	45	+8
Վրաստան	69	66	+3
Ուկրաինա	76	79	-3
Մոլդովա	82	84	-2
Հայաստան	85	82	+3
Տաջիկստան	91	80	+11
Ղրղըզստան	108	102	+6

Մրցու նակու թյան համաշխարհային ցուցչի ՀՀ հենասյուների փոփոխությունը<sup>45</sup>

ՀԱՄ հենասյուները	2014-2015թթ. 144 երկրների շարքում	2015-2016թթ. 140 երկրների շարքում	Փոփոխությունը
Ինստիտուտներ	72	76	-4
Ենթակառուցվածքներ	78	82	-4
Մակրոտնտեսական միջավայր/կայունություն	77	72	5
Առողջապահություն և տարրական կրթություն	99	95	4
Բարձրագույն կրթություն և վերապատրաստում	75	72	3
Ապրանքների շուկայի արդյունավետություն	64	50	14
Աշխատուժի շուկայի արդյունավետություն	74	58	16

<sup>44</sup> Աղյուսակը կազմվել է Մրցու նակու թյան համաշխարհային գեկույցի տվյալների հիման վրա

<sup>45</sup> Տե՛ս՝ նույն տեղում



Ֆինանսական շուկայի գարգացվածություն	97	94	3
Տեխնոլոգիական պատրաստվածություն	71	75	-4
Շուկայի չափ	118	116	2
Գործարարության կատարել ագործվածություն	93	97	-4
Նորարարություն	104	107	-3

Ամփոփելով, կարելի է նշել, որ ՀՀ-ը բավականին լավ արդյունքներ ունի արդյունավետության բարձրացման ուղղված ներդրումների համար կարևոր մի շարք ասպարեզներում, սակայն խոցելի է այլ ոլորտներում: Ուժեղ կողմերից են տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաներից օգտվելու պատրաստականությունը, աշխատաշուկայի ճկունությունը, աշխատանքի արտադրողականությունը և աշխատուժի արժեքը: Այդուհանդերձ, Հայաստանի ընդհանուր ենթակառուցվածքների որակը, կրթական բարձր մակարդակ ունեցող մարդկանց երկրում պահելու կարողությունը, տեղացի մատակարարների առկայությունը և որակը, ինչպես նաև բիզնեսի ընդհանուր կատարելությունը և նորարարությունները համեմատաբար ցածր մակարդակի վրան:

Ներդրումային միջավայրի վերաբերյալ կարելի է պատկերացում կազմել նաև միջազգային մեկ այլ տեղեկատվական աղբյուրի՝ Համաշխարհային բանկի կողմից հրատարակվող «Գործարարության մեջ գբաղվելը» զեկույցի հիման վրա: Չեկույցը գնահատում է գործարար միջավայրի վրա ուղղակիորեն ազդող կարգավորումները՝ հնարավորություն տալով համեմատել և դասակարգել հետազոտվող երկրները ըստ 10 ցուցանիշների՝ ընկերությունների հիմնում, շինարարական թույլ տվությունների ստացում, սեփականության գրանցում, վարկերի ստացում, էլեկտրականության միացում, ներդրողների պաշտպանություն, հարկերի վճարում, արտաքին առևտուր, պայմանագրերի կիրարկում, սնանկության ճանաչում:

«Գործարարությունը» գեկոլյցում 33 դիրքը ըստ  
 ոլորտների<sup>46</sup>

Ցուցանիշը	2016թ. դիրքը	2015թ. դիրքը	Փոփոխությունը
1	2	3	4
Ընկերությունների հիմնում	5	3	-2
Շինարարական թույլ տվությունների ստացում	62	72	+10
Էլեկտրականության միացում	99	96	-3
Սեփականության գրանցում	14	14	0
Վարկերի ստացում	42	36	-6

Աղյուսակ 2.1.3-ի շարունակությունը

1	2	3	4
Ներդրողների պաշտպանություն	49	46	-3
Չարկերի վճարում	41	41	0
Արտաքին առևտուր	29	58	+29
Պայմանագրերի կիրարկում	28	36	+8
Մնանկության ճանաչում	71	69	-2

Համաձայն գեկոլյցի, մեծ առաջընթաց է գրանցվել արտաքին առևտրի ոլորտում (աղյուսակ 2.1.3): Դա հիմնականում պայմանավորված է եղել Հայաստանի՝ Եվրասիական տնտեսական միությանն անդամակցությամբ, որի արդյունքում կրճատվել է Ռուսաստանի Դաշնության հետ առևտրի փաստաթղթային և սահմանային ընթացակարգերի ժամանակն ու ծախսերը: Մասնավորապես,

<sup>46</sup> [www.doingbusiness.org/data/exploreeconomies/armenia](http://www.doingbusiness.org/data/exploreeconomies/armenia)

արտահանման ժամանակը 16 օրից կրճատվել է մինչև 5 ժամ, ներմուծմանը՝ 18 օրից մինչև 5 ժամ: Կրճատվել է նաև արտահանման և ներմուծման համար անհրաժեշտ փաստաթղթերի թիվը՝ արտահանման 5-ից դառնալով 4, իսկ ներմուծմանը՝ 8-ից 4:

Հաջորդ խոշոր առաջընթացը գրանցվել է շինարարության թույլ տվող ռեների ոլորտում: Այս ցուցիչի մասով, համաձայն զեկույցի, գործընթացների թիվը կրճատվել է 1-ով, ծախսը՝ 175 հազ. դրամով: Պայմանագրերի կիրարկման ոլորտում առաջընթացը պայմանավորված է ՀՀ դատական օրենսգրքում կատարված փոփոխություններով, որոնց շնորհիվ դատավորների նշանակումը կատարվում է ավտոմատացված համակարգի միջոցով՝ պատահակա- նությամբ սկզբունքի հիման վրա:

ՀՀ ներդրումային միջավայրի վրա բացասաբար անդրադարձող գործոններից մեկը կոռուպցիայի բարձր մակարդակն է: Թեև ՀՀ կառավարությունը վերջին տարիներին մի շարք բարեփոխումներ է ձեռնարկել, այնուամենայնիվ, կոռուպցիան շարունակում է խնդիր մնալ, հատկապես ներդրողների համար այնպիսի ոլորտներում, ինչպիսին է դատական համակարգը<sup>47</sup>: 2015թ.-ի տվյալներով 168 երկրների շարքում Հայաստանը կոռուպցիայի մակարդակով զբաղեցնում է 95-րդ տեղը, ինչը մտահոգիչ ցուցանիշ է<sup>48</sup>: Կոռուպցիան հիմք է հանդիսանում մեկ այլ երևույթի՝ ստվերային տնտեսության ձևավորման համար, որն իր բացասական ազդեցությունն է թողնում երկրի ներդրումային միջավայրի գրավչության վրա<sup>49</sup>: Ստվերային տնտեսությունը ՀՀ-ում բնութագրվում է պետական տարբեր կառույցների և բարձրաստիճան պաշտոնյաների՝ որոշ տնտեսվարող սուբյեկտների հովանավորչությամբ:

Ագրարային ոլորտի ներդրումային միջավայրի բարելավման միջոցառումների մշակման համար կատարել ենք ագրարային ոլորտի

<sup>47</sup> «Ներդրումային բարեփոխումների քարտեզ», Վերլուծական հաշվետվություն և Էկոնոմիկայի նախարարության համար. – Երևան, 2015. Էջ 45

<sup>48</sup> [www.transparency.org](http://www.transparency.org)

<sup>49</sup> Շիրինյան Հ. Ներդրումային միջավայրի բարելավման նախադրյալները Հայաստանի Հանրապետությունում / «Ֆինանսներ և Էկոնոմիկա» հանդես. N 7, 2011, էջ 19

Ներդրումային միջավայրի ՈԲԾՍ վերլուծությունն (աղյուսակ 2.1.4):

Աղյուսակ 2.1.4

Ագրարային ոլորտի ներդրումային միջավայրի ՈԲԾՍ  
վերլուծությունը

1	2
<p><b>Ուժեղ կողմերը</b></p> <ul style="list-style-type: none"> <li>- Սկսնակ գործարարների համար խոչընդոտները քիչ են</li> <li>- Գյուղատնտեսությունը հռչակված է գերակա ճյուղ</li> <li>- Հողի մասնավորեցման հնարավորություն</li> <li>- Գյուղատնտեսության համար բարենպաստ հարկային միջավայր</li> <li>- Արտահանման մաքսատուրքերի բացակայություն</li> <li>- Միջազգային տնտեսական կազմակերպությունների կողմից վարկային ծրագրերի իրականացում</li> <li>- Ներդրումների պաշտպանություն</li> <li>- ԱՊՀ շուկաներում հայկական արտադրանքի ևլ համբավ</li> </ul>	<p><b>Թույլ կողմերը</b></p> <ul style="list-style-type: none"> <li>- Փակ սահմաններ հարևան երկրներից երկուսի հետ</li> <li>- Հարկային վարչարարության ցածր մակարդակ</li> <li>- Ստվերային տնտեսության առկայություն</li> <li>- Կոռուպցիոն ռիսկերի առկայություն</li> <li>- Գյուղատնտեսական հաշվառման համակարգի բացակայություն</li> <li>- Պետական աջակցության ծրագրերի թափանցիկության ցածր մակարդակ</li> <li>- Ֆինանսական ռեսուրսները մատչելի չեն</li> <li>- Գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրության համակարգի բացակայություն</li> <li>- Ժամանակակից ենթակառուցվածքների բացակայություն</li> </ul>

Աղյուսակ 2.1.5-ի շարունակությունը

1	2
---	---

<b>Չնարավորությունները</b>	<b>Սպառնալիքները</b>
- ԵՏՄ շուկադուրագալու հնարավորություն	- Ներքին շուկայի սահմանափակություն
- Օտարերկրյա ներդրողների ներգրավում	- Ռեսուրսների սակավություն
- ԵՏՄ երկրներից առանց մաքսատուրքի գյուղատնտեսական տեխնիկայի ներմուծման հնարավորություն	- Պետական աջակցության միջոցների ոչ արդյունավետ օգտագործում
- Չօգտագործվող հողային ռեսուրսների ներգրավման հնարավորություն	- ՌԴ-ում ճգնաժամի ազդեցությունը ՀՀ վրա
- Արտահանման շուկաների և ապրանքների բազմազանեցում	- Արտագաղթ գյուղական բնակավայրերից
- Ֆինանսական ռեսուրսների մատչելիություն բարելավում	- Գյուղատնտեսության ցածր մրցունակություն
- Ներդրումային օրենսդրական դաշտի բարելավում	- Կառավարության ռազմավարությունների և դրանց իրականացման գործընթացի որակը և հետևողականությունը
- Կոռապտացիայի զարգացում	- Նորարարությունների կատարելու անբավարար կարողություն

Պետք է նշել, որ «թույլ կողմերը» գլխավորապես առնչվում են պետական քաղաքականությանը, որը բավարար հիմք չի ձևավորում ագրարային ոլորտի ներդրումային միջավայրի բարելավման համար: Ուստի կառավարության մակարդակով անհրաժեշտ է.

- Սահմանել ագրարային ոլորտ ներդրումների ներգրավման հստակ ռազմավարություն: Ռազմավարությամբ պետք է սահմանվեն ներդրումային քաղաքականության և ներդրումների խթանման համար պատասխանատու գերատեսչությունների դերերն ու պարտականությունները: Պետք է սահմանվեն նաև ներդրումների գերակա ուղղությունները:
- Իրականացնել ներդրումների ներգրավման տեսանելի և ազդեցիկ քաղաքականություն: Այստեղ կարևորվում է Հայաստանի զարգացման հիմնադրամի դերը, որն ունի

իրավասությունների լայն շրջանակ կապված ներդրումային քաղաքականության իրականացման հետ: Խիստ կարևոր է ներդրումային արտոնությունների մասին իրազեկվածության բարձրացումը: Հավելյալ իրազեկվածությունն ու թափանցիկությունը կարող են օգտակար լինել ներդրողների համար գործունեության հավասար պայմաններ ապահովելու հարցում:

- **Ներդրողների պաշտպանություն:** Փորձը ցույց է տալիս, որ ներդրողների մոտ խնդիրները հիմնականում պայմանավորված են հարկային վարչարարության և մաքսային ընթացակարգերի հետ: Այս խնդիրները ի հայտ են գալիս կանոնակարգային թափանցիկության անբավարարության պատճառով, որը բացասական հետևանքների է բերում ներդրումների ներգրավման գործում: Այս խնդիրներից շատերի պատճառը ոչ թե անկատար օրենքներն ու կանոնակարգերն են, այլ դրանց ոչ պատշաճ իրականացումը: Ուստի, կարևոր է բարեփոխումների իրականացումը, որոնք ուղղված կլինեն օրենքի կատարման ապահովմանը և ներդրողների պաշտպանության երաշխիքների ձևավորմանը:

ՀՀ ագրարային ոլորտի ներդրումային միջավայրի բարելավման հնարավորությունների շրջանակում կարևորվում է գյուղատնտեսական կոոպերացիայի դերը: Ագրարային ոլորտում տնտեսվարող սուբյեկտների համատեղ գործունեությունը հիմք կհանդիսանա ներդրումների խթանման համար: Համաձայն պետական ռեգիստրի տվյալների այժմ հանրապետությունում գործում է շուրջ 271 գյուղատնտեսական կոոպերատիվ, որոնց գործունեության հիմնական ուղղություններն են հանդիսանում կաթի մթերումն ու հավաքագրումը, պողպատե ծոթ ունը, բանջարաբուծությունը, հացահատիկային մշակաբույսերի աճեցումը, մեղվաբուծությունը, գյուղատնտեսական տեխնիկայի միջոցով ծառայությունների մատուցումը, արոտավայրերի կառավարումը:

Անհատ գյուղացիական տնտեսությունների կոոպերացիան ի վիճակի է միավորելու նրանց միջոցները՝ իրենց խնդիրները

արդյունավետ լուծելու համար<sup>50</sup>: Նրանք կարող են կոոպերացվել ապրանքային արտադրության, իրացման, նյութատեխնիկական մատակարարման և նույնիսկ գյուղատնտեսական լիզինգի ապահովման բնագավառում, միևնույն ժամանակ պահպանելով իրենց անկախությունը և որոշումների կայացման ազատությունը:

Կոոպերատիվի առավելություններն են՝

- կոոպերացիայի անդամները հնարավորություն են ստանում իրենց գործունեությունն իրականացնելու համար անհրաժեշտ հումքը ձեռքբերել ավելի ցածր գնով, քանի որ կոոպերատիվի պարագայում դրանք կարելի է գնել մեծածախ գներով, որն էլ իր հերթին հիմք է հանդիսանում արտադրանքի ինքնարժեքի իջեցման համար,
- կոոպերացիան հնարավորություն է տալիս պարզեցնել արտադրված արտադրանքի իրացման գործընթացը,
- կոոպերացիայի կազմում աշխատանքային գործունեություն ծավալելու պայմաններում ավելանում է ֆինանսական ռեսուրսներից օգտվելու հնարավորությունը:

Այսպիսով, հաշվի առնելով կոոպերատիվների ընձեռած հնարավորությունները, կարող ենք նշել, որ պետական ագրարային քաղաքականությունը պետք է ուղղված լինի գյուղացիական տնտեսությունների խոշորացման գործընթացի կանոնակարգմանը, ինչը կհանգեցնի ոլորտի ներդրումային միջավայրի բարելավմանը:

## **2.2. Պետական աջակցության ծրագրերը և ֆինանսավորման ծավալները**

ՀՀ գյուղատնտեսության պետական աջակցությունը գլխավորապես իրականացվում է ՀՀ պետական բյուջեի և ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի միջոցների հաշվին: Աջակցությունը հիմնականում ուղղվում է գյուղատնտեսության կայունության ու կենսագործունեությունն ապահովող

<sup>50</sup> Բայադյան Ա. Ֆինանսական միջոցների կազմավորման, օգտագործման և բարելավման ուղիները ՀՀ ագրարային ոլորտում –Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016. Էջ 126

ոլորտներին: Աջակցության նպատակը գյուղատնտեսության ոլորտն ու մտնող սավարողների համար գործունեության բարենպաստ պայմանների ստեղծումն է, արտադրության մրցունակության բարձրացումը, ներդրումային միջավայրի բարելավումը: Աջակցությունը հիմնականում ուղղվում է գյուղատնտեսական մշակաբույսերի առաջնային սերմնաբուծությանը, բարձր վերարտադրության սերմերով ապահովվածության մակարդակի բարձրացմանը, գյուղատնտեսական մշակաբույսերի առավել վտանգավոր և կարանտին հիվանդությունների դեմ կենտրոնացված միջոցառումների իրականացմանը, գյուղատնտեսական կենդանիների տոհմային և մթերատու հատկանիշների բարելավմանը, տոհմային անասնաբուծության զարգացմանը, գյուղատնտեսական կենդանիների դեմ առավել վտանգավոր հակահամաճարակային միջոցառումների իրականացմանը և անասնաբուժական համակարգի կատարելագործմանը, վարկերի մատչելիությանը, գյուղատնտեսության մեջ օգտագործվող հիմնական ռեսուրսների մատչելիության բարձրացմանը և այլն:

Աղյուսակ 2.2.1

ՀՀ գյուղատնտեսության ոլորտի բյուջե տային ֆինանսավորումը<sup>51</sup>

h/h	Միջոցառման անվանումը	2011 փաստացի բյուջե (հազ. դր.)	2012 փաստացի բյուջե (հազ. դր.)	2013 փաստացի բյուջե (հազ. դր.)	2014 փաստացի բյուջե (հազ. դր.)	2015 հաստատված բյուջե (հազ. դր.)
1	Սերմերի որակի ստուգման ու պետական սրտափորձարկման միջոցառումներ	51,138	51,138	51,908	57,842	58,931
2	Գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորում	6,333	5,722	5,100	4,490	4,490
3	Բույսերի պաշտպանության միջոցառումներ	99,655	125,109	96,965	150,000	150,000
4	Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումներ	48,130	48,130	48,675	62,339	70,186
5	Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում	888,803	999,960	1,091,751	1,136,519	1,188,603
6	Գյուղական խորհրդատվական	293,145	293,145	297,202	346,453	395,760

<sup>51</sup> Աղյուսակը կազմվել է 2011-2014 թվականների բյուջեների կատարման վերաբերյալ հաշվետվությունների և 2015 թվականի բյուջեի նախագծի հիման վրա



	ծառայություններ					
7	Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտներում ծառայությունների մատուցում	134,250	122,100	123,483	128,369	134,112
8	Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տրկոսադրույքների սուբսիդավորում	0	578,000	634,459	872,480	1,163,014
9	Անտառպահպանական ծառայություններ	708,700	708,700	734,478	971,822	1,201,230

Աղյուսակ 2.2.1-ի շարունակությունը

10	Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին	1,420,061	596,887	550,000	550,000	0
11	Կառավարման ապարատի պահպանության ծախսեր	480,046	811,182	863,888	1,239,331	1,563,804
12	Այլ ծրագրեր	483,318	998,437	1,182,993	2,031,630	4,747,359
13	Վարկային միջոցներ	1,769,776	4,462,411	4,027,057	3,566,172	5,882,997
	<b>Ընդամենը</b>	6,383,354	9,800,920	9,707,958	11,117,448	16,560,486

Ինչպես երևում է աղյուսակ 2.2.1-ից գյուղատնտեսության բյուջետային ֆինանսավորումը վերջին տարիների ընթացքում աճման միտում է դրսևորել: 2015թ.-ին ագրարային ոլորտի ֆինանսավորման ծավալները 2011թ.-ի համեմատավելացել են շուրջ 2.5 անգամ: Սակայն հարկ է նշել, որ գյուղատնտեսության ոլորտում իրականացվող ոչ բուրգ ծրագրերի գծով է ֆինանսավորման ծավալների աճ արձանագրվել: Որոշ ծրագրերի ֆինանսավորումը չի փոփոխվել, իսկ որոշներինը անգամ նվազել է:

Այժմ անդրադառնանք աջակցության ծրագրերից յուրաքանչյուրին առանձին-առանձին:

«Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին» ծրագիրը սկսել է իրականացվել 2007թ.-ից: Ծրագրով նախատեսվում էր հանրապետության առավել ռիսկային տարածաշրջանների գյուղացիական տնտեսություններին հացահատիկային մշակաբույսերի (ալյուսակ և գարնանացան ցորենի ու գարուն՝ մինչև 7 հեկտարը ներառյալ) ցանքատարածությունների 1 հեկտարի հաշվով 35 հազ. դրամ սուբսիդիայի հատկացում: Առաջին տարվա ընթացքում ծրագրում ընդգրկվել է 846 շահառուներ, շուրջ 4800 հա հողատարածության մշակության համար հատկացվել է 166.2 մլն. դրամ: 2008թ.-ին ծրագրի ծավալներն ընդլայնվել են: Նույն պայմաններով 28065 շահառուներ 49855 հա հողատարածության մշակության համար ստացել են 1.6 մլրդ. դրամի աջակցություն:

2009թ.-ին աջակցության ծավալը մնացել է միևնույն մակարդակի վրա<sup>52</sup>:

2007-2009 թթ. այս ծրագիրը նկատելիորեն նպաստել է սուբսիդավորվող գյուղական համայնքների տնտեսական գործունեության ակտիվացմանը: Սակայն 2010թ. առանց լուրջ փաստարկների նպատակահարմար չի համարվել շարունակել այս ծրագիրը, որի հետևանքով փոխվել է դրա ուղղվածությունը և մոտ 3 անգամ կրճատվել \$ֆինանսավորումը: 2010թ.-ից այս ծրագիրն ուղղվել է սերմնարտադրության զարգացմանը: ՌԴ-ց ներկրվել է էլիտային աշնանացան ցորեն, իսկ տեղական սերմարտադրողներից գնվել է առաջին վերարտադրության սերմացու: Ուկրաինայի Հանրապետությունից ներկրվել են գարնանացան գարու և եգիպտացորենի սերմեր: Այս ծրագրի իրականացմանը 2011թ.-ին ուղղվել է 1.4 մլրդ. դրամ: 2012թ.-ին նախորդ տարվա համեմատ այս ծրագրի \$ֆինանսավորման ծավալները կրճատվել են 58%-ով կամ 823.2 մլն դրամով՝ պայմանավորված սերմերի ներկրման ծավալների նվազմամբ<sup>53</sup>: Հանրապետություն է ներկրվել աշնանացան ցորենի 640 տոննա էլիտային վերարտադրության սերմացու, որը հատկացվել է հանրապետության մարզերի 7 և ավելի հեկտար ունեցող 166 շահառուների: Ներկրվել է նաև 20 տոննա սուպերէլիտային վերարտադրության սերմացու, որը, հանրապետությունում էլիտային սերմացուների արտադրությունը խթանելու նպատակով, հատկացվել է ցորենի սերմնաբուծության և սերմարտադրությունում ընդգրկված 12 տնտեսավարող սուբյեկտների: Նշվածից բացի, հացահատիկի արտադրությամբ զբաղված տնտեսավարողներին է տրամադրվել 2741 տոննա առաջին վերարտադրության աշնանացան ցորենի սերմացու: 2013-2014թթ.-ին ծրագրի \$ֆինանսավորման ծավալները մնացել են գրեթե միևնույն մակարդակի վրա:

<sup>52</sup> Ավետիսյան Ս. «Հայաստանի գյուղատնտեսությունը և ագրովերամշակումը», Եր.: «Լիմոն» հրատ., 2010, էջ 223-224

<sup>53</sup> ՀՀ կառավարության 6 փետրվարի 2014 թվականի N 151-Ն որոշումը ՀՀ հողօգտագործողներին 2014 թվականի գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով դիզելային վառելանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագիրը հաստատելու, ՀՀ կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի N 1414-Ն որոշման մեջ լրացում կատարելու, ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը գումար հատկացնելու և ՀՀ կառավարության 2013 թվականի օգոստոսի 29-ի N 935-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

Ինչպես վկայում են Ազգային վիճակագրական ծառայության հրապարակած տվյալները, այս ծրագրի իրականացման արդյունքում ցորենի համախառն բերքն աստիճանական աճ է արձանագրել: Այսպես, եթե 2010թ.-ին համախառն բերքը կազմել է 183.5 հազ. տոննա, ապա 2014թ.-ին այն կազմել է 338.2 հազ. տոննա<sup>54</sup>:

«Հայաստանի Հանրապետության հողօգտագործողներին մատչելի գնով ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության» ծրագրով իրականացվում է ՀՀ մարզերի հողօգտագործողներին մատչելի գներով պարարտանյութերի տրամադրում: Ծրագրի շրջանակներում 2012թ. գարնանը հողօգտագործողներին շուկայականից զգալիորեն ցածր գնով (մեկ պարկը 6000 դրամ, ներառյալ փոխադրման ծախսերը) հատկացվել է 25 հազ. տոննա ազոտական պարարտանյութ: Նշված ռեսուրսների իրացման գնի և շուկայական գնի տարբերությունը սուբսիդավորել է ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից: Ծրագիրը շարունակվել է նաև 2012 թվականի աշնանը, որի համար հատկացվել է 5.7 հազ. տոննա ազոտական պարարտանյութ<sup>55</sup>:

2013 թ. ծրագիրը շարունակվել է: Ծրագրի շրջանակներում գարնան գյուղատնտեսական աշխատանքների համար համայնքներում հողօգտագործողներին է հատկացվել է 30.4 հազ. տոննա ազոտական պարարտանյութ՝ 1 պարկը 6000 դրամով<sup>56</sup>: Ծրագիրը, նույն պայմաններով, շարունակվել է նաև 2013 թվականի աշնանը: Հանրապետության մարզերին հատկացվել է 7.5 հազ. տոննա ազոտական պարարտանյութ:

Ծրագրի շրջանակներում 2014թ. ձեռք է բերվել 33822 տոննա ազոտական, 2645 տոննա ֆոսֆորական և 1619 տոննա կալիումական պարարտանյութեր: Ընդ որում, ֆոսֆորական և կալիումական պարար-

<sup>54</sup> «Պարենային ապահովություն և աղքատություն» 2013-2015 թվականների հաշվետվություններ, ՀՀ ԱՎԾ

<sup>55</sup> ՀՀ կառավարության 22 դեկտեմբերի 2011 թվականի N 1802-Ն որոշումը ՀՀ հողօգտագործողներին մատչելի գներով ազոտական պարարտանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագիրը հաստատելու, ՀՀ պետական բյուջեում վերաբաշխում, ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N 1748-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և գումար հատկացնելու մասին

<sup>56</sup> ՀՀ կառավարության 24 հունվարի 2013 թվականի N 82-Ն որոշումը ՀՀ հողօգտագործողներին 2013 թվականի գարնան գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով ազոտական պարարտանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագիրը հաստատելու մասին

տանյուրերը ներկրվել են առաջին անգամ: Պարարտանյուրերը վաճառվել են շուկայականից 40-50 %-ով ցածր գներով: Ծրագրի իրականացմանն է ուղղվել 1829.7 մլն դրամ սուբսիդիա: 2014թ. ընթացքում մարզերում իրացվել է շուրջ 31770 տոննա ազոտական, 1174 տոննա ֆոսֆորական, 592 տոննա կալիումական պարարտանյուրեր<sup>57</sup>:

Ծրագիրը շարունակվել է նաև 2015 թվականին: ՀՀ կառավարության 2015թ. փետրվարի 5-ի N 96-Ն որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում ձեռք է բերվել շուրջ 33.3 հազ. տոննա ազոտական պարարտանյուր, որը տրամադրվել է ՀՀ մարզերի հողօգտագործողներին և կազմակերպություններին մատչելի պայմաններով՝ 50 կգ քաշով 1 պարկը 6000 դրամ արժեքով: 2015 թվականի ընթացքում իրականացվել է նաև 2014թ. աշնանը չբաշխված շուրջ 2 հազ. տոննա պարարտանյուրի բաշխումը: Նույն ծրագրի շրջանակներում ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը «Հրաշք այգի» ՍՊԸ-ի միջոցով ձեռք է բերել 1759.6 տոննա ֆոսֆորական և 564.8 տոննա կալիումական պարարտանյուր, որը նույնպես մատչելի պայմաններով՝ 50 կգ քաշով 1 պարկը 7000-ական դրամ արժեքով տրամադրվել է ՀՀ մարզերի հողօգտագործողներին և կազմակերպություններին<sup>58</sup>:

Ծրագրերի իրականացման ընթացքում ամբողջությամբ բավարարվել է ՀՀ մարզերի հայտերի պահանջարկը: Վերջինս էականորեն նպաստել է գյուղատնտեսական մշակաբույսերի մշակության ագրոտեխնիկական միջոցառումների իրականացման գործընթացի բարելավմանը:

«Հայաստանի Հանրապետության հողօգտագործողներին գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով դիզելային վառելանյուրի ձեռքբերման նպատակով պետական

<sup>57</sup> ՀՀ կառավարության 6 փետրվարի 2014 թվականի N 150-Ն որոշումը ՀՀ հողօգտագործողներին 2014 թվականի գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյուրերի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագիրը հաստատելու մասին

<sup>58</sup> ՀՀ կառավարության որոշումը ՀՀ հողօգտագործողներին 2015 թվականի գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյուրերի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագիրը հաստատելու, ՀՀ 2015 թվականի պետական բյուջեում վերաբաշխում և ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1515-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

աջակցության» ծրագրի նպատակն է ՀՀ մարզերի հողօգտագործողներին աջակցություն ցուցաբերել մատչելի գնով դիզելային վառելանյութի ձեռքբերման հարցում, նպաստել հողերի արդյունավետ օգտագործմանը, գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալների ավելացման միջոցով գյուղացիական տնտեսության ներքին եկամուտների բարձրացմանը:

2012թ. ծրագրի շրջանակներում գարնանը հողօգտագործողներին շուկայականից զգալիորեն ցածր գնով (ներառյալ փոխադրման ծախսերը) հատկացվել է 11.3 մլն լիտր դիզելային վառելանյութ (1 լիտրը 350 դրամով): Նշված ռեսուրսի իրացման գնի և շուկայական գնի տարբերությունը սուբսիդավորել է ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից: Ծրագիրը շարունակվել է նաև 2012 թվականի աշնանը, որի համար հատկացվել է 10.3 մլն լիտր դիզելային վառելանյութ<sup>59</sup>:

2013 թվականին ծրագրերի շրջանակում գարնան գյուղատնտեսական աշխատանքների համար համայնքներում հողօգտագործողներին է հատկացվել է 12.1 մլն լիտր դիզելային վառելանյութ՝ 1 լիտրը 350 դրամ արժեքով<sup>60</sup>: Ծրագիրը նույն պայմաններով շարունակվել է նաև հաշվետու տարվա աշնանը: Հանրապետության մարզերին հատկացվել է 3.3 մլն լիտր դիզելային վառելանյութ:

2014 թվականին ծրագրի շրջանակներում հանրապետության հողօգտագործողներին գյուղական համայնքներում նախատեսվել է հատկացնել 17 մլն. 640 հազար լիտր դիզելային վառելանյութ, 1 լիտրը 350 դրամ՝ շուկայականից 25-26 %-ով ցածր գնով, ներառյալ տեղափոխման ծախսերը: Ծրագրի իրականացմանն է ուղղվել 1260 մլն դրամ սուբսիդիա: Հաշվետու տարվա ընթացքում մարզերում իրացվել է 11.1 մլն լիտր դիզելային վառելանյութ<sup>61</sup>:

<sup>59</sup> ՀՀ կառավարության 2 փետրվարի 2012 թվականի N 75-Ն որոշումը ՀՀ հողօգտագործողներին մատչելի գներով դիզելային վառելանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագիրը հաստատելու և ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը գումար հատկացնելու մասին

<sup>60</sup> ՀՀ կառավարության 7 փետրվարի 2013 թվականի N 84-Ն որոշումը ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը գումար հատկացնելու մասին

<sup>61</sup> ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվություն

Ծրագիրը շարունակվել է նաև 2015 թվականին: Դիզելային վառելանյութի 1 լիտրի արժեքը կազմել է 405 դրամ, սուբսիդիան՝ 55 դրամ, հողօգտագործողներին տրամադրվել է 350 դրամ արժեքով:

Գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով դիզելային վառելիքի տրամադրման ծրագրերի իրականացումը 2012-2015թթ. նպատակ էն գյուղատնտեսական մշակաբույսերի մշակութային և բերքահավաքի աշխատանքները սահմանված ժամկետներում և ագրոտեխնիկական պահանջներին համապատասխան իրականացմանը:

Գյուղատնտեսության \$ինանսավորման բարելավման նպատակով 2011թ. ձեռնարկվեց «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորման» ծրագիրը: Ծրագրով նախատեսվում էր իրականացնել 33 թիրախային տարածաշրջանների համայնքներում գյուղատնտեսության համար առաջնահերթ համարվող ոլորտներում զբաղված \$իզիկական և իրավաբանական անձանց տրամադրվող վարկերի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորում: Ըստ ծրագրի, տոկոսադրույքի սուբսիդավորումը պետք է իրականացվեր 4 տոկոսային կետին համարժեք մասով, իսկ հանրապետության առավել կարիքավոր համայնքների վարկառուների համար՝ 6 տոկոսային կետին համարժեք մասով<sup>62</sup>: 2015թ.-ից սկսած սուբսիդավորումն իրականացվում է 6 տոկոսին համարժեք մասով, և արդյունքում՝ տնտեսվարողը վարկը ստանում է փաստացի 8% տոկոսադրույքով: Վարկերը տրամադրվում են 33 դրամով և մինչև 2 տարի մարման ժամկետով: Յուրաքանչյուր գյուղացիական տնտեսությանը տրամադրվող վարկի մայր գումարը կազմում է 3 մլն. դրամ: Մայր գումարի և տոկոսների վճարման համար արտոնյալ ժամկետը վարկի տրամադրման պահից սահմանված է առնվազն վեց ամիս (վարկի տոկոսների վճարման պարտականությունը վարկառուի մոտ առաջանում է վարկի տրամադրման պահից սկսած վեց ամիս հետո)<sup>63</sup>:

<sup>62</sup> 33 կառավարության 31 մարտի 2011 թվականի N 349-Ն որոշումը 33 կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N 1748-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և 33 2011 թվականի պետական բյուջեից 33 գյուղատնտեսության նախարարությանը գումար հատկացնելու մասին

<sup>63</sup> www.minagro.am

2011թ.-ին այս ծրագրի իրականացմանը կառավարության պահուստային ֆոնդից հատկացվել է 250 մլն. դրամ: 2012-ին ֆինանսավորումն ավելացել է 2.3 անգամ և կազմել 578 մլն. դրամ, ընդ որում ֆինանսավորումն իրականացվել է պետական բյուջեից: 2013թ.-ին նախորդ տարվա համեմատ ծրագրի ֆինանսավորման ծախսերն աճել են 9.8%-ով՝ կազմելով 634.5 մլն. դրամ: 2014թ.-ին այս ծրագրի իրականացմանը պետական բյուջեից հատկացվել է 872.5 մլն. դրամ, ինչը նախորդ տարվա համեմատ 37.5%-ով ավել է եղել: 2015թ.-ին նախատեսվել է 1163 մլն. դրամի հատկացում այս ծրագրի իրականացմանը:

Հարկ է նշել, որ պետական աջակցության շրջանակներում վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորմանն ուղղված միջոցները կազմում են առևտրային բանկերի կողմից գյուղատնտեսությանը տրամադրված վարկերի գումարի 1%-ից էլ պակասը: Այսպես, եթե 2015թ.-ին գյուղատնտեսությանը տրամադրված վարկերը կազմել են 137.7 մլրդ. դրամ, ապա սուբսիդավորման գումարը կազմել է 1.16 մլրդ դրամ: Սապայմանավորված է պետական միջոցների սղույթով:

Վերջին տարիներին կանոնավոր կերպով իրականացվել են նաև աջակցության այլ ծրագրեր, այդ թվում՝ սերմերի որակի ստուգման և պետական սորտափորձարկման, գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորման, պատվաստման, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտներում ծառայությունների մատուցման միջոցառումներ, որոնց ֆինանսավորման ծավալները մնացել են գրեթե միևնույն մակարդակի վրա: Նման քաղաքականությունն, ըստ էության, ավելի շատ ուղղված է գյուղատնտեսության ոլորտում իրավիճակի պահպանմանը և ոչ թե զարգացմանը՝ բազմաթիվ նոր ծրագրերի իրականացման միջոցով, որոնք կնպաստեն երկարաժամկետառումով ոլորտի զարգացմանը:

ՀՀ գյուղատնտեսության ոլորտում իրականացվում են նաև արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային վարկային և դրամաշնորհային միջոցներով ծրագրեր: Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվում է «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության ծրագիրը», որի նպատակն է աջակցել անասնապահական ուղղվածություն ունեցող



համայնքներին արոտագտագործման և անասնապահական առավել մրցունակ և կայուն համակարգերի ստեղծման հարցում: Այս ծրագիրն ունի 4 հիմնական բաղադրիչ՝ «Համայնքների արոտավայրերի/անասնապահության կառավարման համակարգ», «Գյուղատնտեսական աջակցող ծառայությունների հզորացում», «Մրցակցային դրամաշնորհների ծրագիր» և «Ծրագրի իրականացում, մոնիթորինգ և գնահատում»: Առաջին բաղադրիչի նպատակն է ընտրված անասնապահական ուղղվածություն ունեցող բարձր և եռնային և սահմանամերձ համայնքներում իրականացնել արոտագտագործման և կերարտադրության վրա հիմնված անասնապահական մթերքի արտադրության արդյունավետ և կայուն համակարգ, որը կկառավարվի համայնքներում ստեղծվող արոտագտագործողների միավորումների կողմից: Ծրագրով նախատեսված միջոցառումներն են պայքարը արոտների գերարածեցման դեմ, վարելահողերի օգտագործման արդյունավետության բարձրացումը, կենդանիների կերակրման և տոհմային աշխատանքների բարելավումը, մթերատվության բարձրացումը: Ծրագրի երկրորդ բաղադրիչի նպատակը \$երմերներին մատուցվող խորհրդատվական ծառայությունների բարելավումն է: Երրորդ բաղադրիչի նպատակն է բարձրացնել արտադրվող գյուղատնտեսական արտադրանքի որակը, կատարելագործել գյուղական բիզնեսի կառավարումը, նպաստել ոլորտում կոոպերացիայի զարգացմանը, աջակցել գյուղատնտեսական մթերքի իրացման խնդրի լուծմանը: Չորրորդ բաղադրիչի շրջանակներում \$ինանսավորումն ուղղված է ծրագրի կառավարմանը, անձնակազմի վերապատրաստմանը, ինչպես նաև ծրագրի մոնիթորինգին և գնահատմանը<sup>64</sup>:

Ծրագրի իրականացման վրա 2011-2015թթ. ընթացքում ծախսվել է 6.8 մլրդ. դրամ, որից 5.8 մլրդ. դրամը վարկային միջոցների, իսկ մնացած 1 մլրդ. դրամը կառավարության համաֆինանսավորման հաշվին: Ծրագրի իրականացման տարիների ընթացքում 74 համայնքում կառուցվել են արոտավայրերի ջրարբիացման համակարգեր, կոոպերատիվներին տրամադրվել է 664 միավոր գյուղտնտեսական, իրականացվել են խորհրդատվական

<sup>64</sup> ՀՀ 2011-2014 թվականների պետական բյուջեների կատարման վերաբերյալ հաշվետվություններ

ծառայություններ, կառուցվել է 3 անասնաբուժական սպասարկման կենտրոն, ավելացել է խոշոր և մանր եղջերավոր կենդանիների կաթնատվություն ու քաշածը:

Հարկ է նշել, որ ՀՀ գյուղատնտեսության աջակցության միջոցառումների մեծ մասն ուղղվում է ոչ այնքան ոլորտի զարգացմանը, գյուղական բնակչության եկամուտների ավելացմանը, այլ տնտեսական աճի խթանմանը, ինչի մասին են վկայում վերջին տարիներին գյուղատնտեսական համախառն արտադրանքի աճի ցուցանիշները: Սակայն միշտ էլ, որ տնտեսական աճը վկայում է տնտեսական զարգացման մասին: Տնտեսական աճը կարճաժամկետ հատվածում համախառն արտադրանքի աճն է: Ծումպետերը իր «Տնտեսական զարգացման տեսություն» աշխատության մեջ տնտեսական աճը բնութագրում է որպես քանակական փոփոխություն՝ արտադրության ծավալների ավելացում և ժամանակի ընթացքում միևնույն ապրանքների և ծառայությունների սպառում: Մինչդեռ «տնտեսական զարգացում» հասկացությունը նա բնութագրում էր որպես դրական որակական փոփոխություններ, արտադրության, ապրանքների և ծառայությունների, կառավարման և տնտեսական գործունեության այլ ոլորտներում նորարարությունների կիրառում<sup>65</sup>: Այսինքն, տնտեսական զարգացումը ենթադրում է բարեկեցության, տնտեսության մրցունակության, աշխատանքի արտադրողականության և այլ որակական ցուցանիշների բարելավում: ՀՀ գյուղատնտեսության աջակցության ներկայիս համակարգը դեռևս էական պայմաններ չի ստեղծում տնտեսական զարգացման համար: Տպավորություն է ստեղծվում, որ գյուղատնտեսության ճյուղի արդյունավետության գնահատման հիմնական ցուցանիշը տնտեսական աճն է, մինչդեռ պետք է լուրջ ուշադրություն դարձնել գյուղական բնակչության եկամուտներին: Խնդիրն էլ ավելի է բարդացնում գյուղատնտեսական ապրանքարտադրողների եկամուտների և ծախսերի վերաբերյալ վիճակագրության բացակայության պատճառով: Փաստորեն կառավար-

<sup>65</sup> Шумпетер Й.А. «Теория экономического развития». М.: Прогресс, 1982. с. 129

րող մարմինն անգամ չի տիրապետում արտադրության արդյունավետության ցուցանիշներին<sup>66</sup>:

Պետական ծրագրերի մեծ մասը կրում են կարճաժամկետ բնույթ, որոնք չեն ապահովում տնտեսական զարգացում: Պետական աջակցության ծրագրերը պետք է ուղղված լինեն դեպի երկարաժամկետ ծրագրերի իրականացումը, որոնք կնպաստեն գյուղական ապրանքարտադրությանը զբաղվող բնակչության եկամուտների ավելացմանը:

Պետական աջակցության ծրագրերի մի մասն էլ շրջանցում է իրական շահառուին և տրամադրվում գյուղատնտեսությանը ծառայություններ մատուցող կազմակերպություններին (բույսերի պաշտպանության, հողաբարելավման, արոտների ջրարբիացման, գյուղատնտեսական կենդանիների պատվաստման, ոռոգման ջրի վարձավճարի մասնակի սուբսիդավորման, գյուղական տարածքների տնտեսական զարգացման), որոնք գործունեության արդյունավետությանը գնահատելու համար բավականաչափ թափանցիկություն չի ապահովվում: Մեր խորին համոզմամբ, պետական աջակցության ծրագրերը պետք է առավելագույնս հասցեական լինեն, ինչը հնարավորություն կտա արդյունավետ օգտագործել սուղ պետական միջոցները և խուսափել ավելորդ կառավարչական ծախսերից:

ՀՀ ագրարային ոլորտի պետական աջակցության ծրագրերի շրջանակում կարևորվում է Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի (ՀԳՏՏՀՀ – FREDA) դերը:

ՀԳՏՏՀՀ-ը հիմնադրվել է 2009թ-ին «Շուկայ ավարման հնարավորությունն Ֆերմերներին» ծրագրի՝ «Գյուղական ֆինանսավորում» բաղադրիչի շրջանակներում: «Շուկայ ավարման հնարավորությունն Ֆերմերներին» ծրագիրը ստեղծվել է Հայաստանի կառավարության և Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի (ԳԶՄՀ) համատեղ աջակցությամբ:

ՀԳՏՏՀՀ-ն առաջին ներդրումային հիմնադրամն է Հայաստանում, որը նորարարական ֆինանսական գործիքների

<sup>66</sup> Ավետիսյան Ս. ՀՀ ագրարային ոլորտի պետական կարգավորման արդի խնդիրները / Չափացման ժամանակակից մարտահրավերներ. ՀՊՏՀ 24-րդ գիտաժողովի նյութեր. – Եր.: «Տնտեսագետ», 2015. Էջ 6

միջոցով ներդրումներ է կատարում գյուղական ուղղվածություն ունեցող ՓՄՁ-ներում՝ միաժամանակ տրամադրելով նաև կառավարչական աջակցություն, որն էլ հնարավորություն է ընձեռում ՓՄՁ-ներին բարելավել իրենց մրցակցային դիրքերը և դրանով էլ խթանել գյուղական տարածքների արագ զարգացմանը<sup>67</sup>:

ՀԳՏՏՀ-ի գործունեության թիրախային խմբում ընդգրկվում են ՀՀ մարզերում գործունեություն ծավալող այն ձեռնարկությունները, որոնք զբաղվում կամ զբաղվելու են հետևյալ գործունեությամբ՝

- գյուղմթերքների վերամշակում և պահածոյացում,
- կաթնամթերքի արտադրություն,
- գինեգործություն,
- ձկնաբուծություն,
- ջերմոցային տնտեսություններ
- տոհմային կենդանիների բուծում,
- սառնարանային տնտեսություններ<sup>68</sup>:

ՀԳՏՏՀ-ն կատարում է ներդրումներ սեփական կապիտալում՝ սովորական և արտոնյալ բաժնետոմսերի գնման միջոցով, տնտեսապես կենսունակ և դրական զարգացման միտում ունեցող ձեռնարկություններում: ՀԳՏՏՀ-ն տրամադրում է նաև ստորադաս և ապահովված փոխառվողություններ: Ընդ որում, ստորադաս փոխառությունները տրամադրվում են միայն շրջանառու միջոցների համալրման համար:

Հարկ է նշել, որ ներդրումները արտոնյալ բաժնետոմսերի գնման և փոխառությունների տրամադրման միջոցով հնարավոր են միայն սովորական բաժնետոմսերում ներդրումների առկայության դեպքում<sup>69</sup>:

ՀԳՏՏՀ-ի կողմից ներդրումներն իրականացվում են որոշակի սահմանաչափով: Մասնավորապես, հիմնադրամի կողմից կատարված ներդրումը չի կարող գերազանցել ձեռնարկության սեփական

<sup>67</sup> [www.freda.am](http://www.freda.am)

<sup>68</sup> Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի (ՀԳՏՏՀ) գործունեության կանոնակարգ

<sup>69</sup> «Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի (ՀԳՏՏՀ) և ՀԳՏՏՀ ծրագրերի գնահատման» հաշվետվություն, «ԵՐԵՔ ԱՐ ՍՏՐԱՏԵԳԻԱ» ՍՊԸ – Երևան, 2014 էջ 25

կապիտալի 70%-ը և կապիտալի ու պարտավորությունների հանրագումարի 50%-ը: Սովորական բաժնետոմսերում ներդրումներն իրականացվում են կանոնադրական կապիտալի 25-45%-ի սահմաններում, ընդ որում նվազագույն ներդրումի չափը 20 մլն. դրամ է, իսկ առավելագույնը՝ 200 մլն. դրամ: Արտոնյալ բաժնետոմսերում կատարված ներդրումը չի կարող գերազանցել ձեռնարկության կանոնադրական կապիտալի 25%-ը, իսկ ներդրումների նվազագույն և առավելագույն սահմանաչափերը կազմում են համապատասխանաբար 20 մլն. և 100 մլն. դրամ:

Անհրաժեշտության դեպքում ՀԳՏՏԶՀ-ը տրամադրում է տեխնիկական աջակցություն և կազմակերպություններին, նրանց կողմից նախաձեռնած տեխնիկական, տեխնոլոգիական և այլ նորամուծությունների իրականացման կամ կազմակերպությունների գործունեությանը նպաստող տարաբնույթ միջոցառումներին մասնակցության օժանդակության հարցում:

Հիմնադրամի կողմից ֆինանսավորվող տեխնիկական աջակցությունը հիմնականում ներառում է՝

1. մինչ ներդրումային աջակցություն, մասնավորապես՝ ՀԳՏՏԶՀ-ի ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության տարածում, տարածքային և ոլորտային ներդրումային հետազոտություններ, ցուցահանդեսների կազմակերպում և միջազգային տոնավաճառներին և ցուցահանդեսներին մասնակցություն և այլն,
2. տեխնիկական աջակցություն ներդրումների փուլում, որն ուղղված է աջակցելու հիմնադրամին և հիմնադրամի հաճախորդ ընկերություններին՝ պառչած կերպով ներդրումային ուղղությունների ընտրությանը և ներդրումային ծրագրերի իրականացմանը: Տեխնիկական աջակցության հնարավոր ուղղությունները ներառում են մարքեթինգային ուսումնասիրություններ, տեխնոլոգիայի փոխանցում, պարենի անվտանգության միջազգային ստանդարտների ներդրում, կառավարման աջակցություն (ներառյալ՝ բյուջե տավորում, հաշվապահություն, աուդիտ, հարկային

խորհրդատվություն, բիզնեսի վերակազմավորում և կառուցվածքային փոփոխությունների իրականացում), բիզնեսի գործընթացի օպտիմիզացում և իրականացվող ներդրման մոնիթորինգ:

3. հետներդրումային աջակցություն, որի նպատակն է բարելավել հետներդրումային հնարավորությունները՝ փաստաթղթավորելով և տարածելով տեղեկատվություն ՀԳՏՏԶՀ-ի կողմից իրականացված ծրագրերի արդյունքների և քաղված դասերի վերաբերյալ,
4. ծրագրի կառավարման աջակցություն, որի նպատակն է բարելավել հիմնադրամի կարողությունները՝ գործունեության արդյունավետության ապահովման և բարձրորակ ծառայությունների մատուցման համար<sup>70</sup>:

ՀԳՏՏԶՀ գործընկեր ընկերությունները պետք է համապատասխանեն հետևյալ պահանջներին՝

- լինեն մասնավոր ընկերություններ,
- պատրաստ լինեն ձևավորելու թափանցիկ կորպորատիվ կառավարման մեխանիզմներ ու միջազգային լավագույն փորձին և Հայաստանի օրենքներին համապատասխան հաշվապահություն,
- համապատասխանեն ֆինանսական կայունության և զարգացման ազդեցության բազային չափանիշներին,
- ցույց տան իրենց հիմնական գործունեության լավ, իրատեսական աճի ներուժ,
- պատրաստ լինեն ընդունելու ՀԳՏՏԶՀ-ի տեխնիկական աջակցությունը՝ իրենց արժեզրթայի զարգացումը հեշտացնելու համար,
- Պատրաստ լինեն զարգացնելու իրենց գործընթացները և արտադրանքը՝ միջազգային ստանդարտներին համապատասխանեցնելու համար:

2015թ. դրությամբ ՀԳՏՏԶՀ-ի ընդհանուր ներդրումային արտֆելը կազմել է 1883.0 մլն. ՀՀ դրամ, որից 1375.0 մլն. դրամը

<sup>70</sup> «Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի (ՀԳՏՏԶՀ) և ՀԳՏՏԶՀ ծրագրերի գնահատման» հաշվետվություն, «ԵՐԵՔ ԱՐ ՍՏՐԱՏԵԳԻԱ» ՍՊԸ – Երևան, 2014. Էջ 44

Ներդրվել է ընկերությունների բաժնեհավաք կապիտալում, իսկ 508.0 մլն. դրամը՝ տրամադրվել որպես ստորադաս փոխառություն: Առյուսակ 2.2.2-ում ներկայացված են հիմնադրամի կողմից փաստացի ֆինանսավորված ներդրումային նախագծերը:

Առյուսակ 2.2.2

ՀԳՏՏԶՀ-ի կողմից ֆինանսավորված ներդրումային նախագծերը<sup>71</sup>

h/h	Ընկերություն	ՀԳՏՏԶՀ իրականացված ներդրում (մլն. դրամ)	ՀԳՏՏԶՀ տրամադրված փոխառություն (մլն. դրամ)	ՀԳՏՏԶՀ բաժնեմասը ընկերությունում (%)	Ներդրման տրամադրման ամսաթիվ	Ներդրման ժամկետ
1.	«Ակվառեխավտոմատիկա» ՓԲԸ	200.0	-	29,55	2010թ.	7 տարի
2.	«Փյունիկ ՏԹՖ» ՓԲԸ	200.0	-	27,01	2010թ.	5 տարի
3.	«Մեղրու պահածոների գործարան» ՓԲԸ	50.0	78.0	27.51	2011թ.	7 տարի
4.	«365 Գրուպ» ՓԲԸ	200.0	-	33.50	2011թ.	5 տարի
5.	«Ագրոլոգ» ՓԲԸ	20.0	-	41.57	2011թ.	6 տարի
6.	«Զիգթաուն» ՓԲԸ	115.0	-	33.26	2011թ.	6 տարի
7.	«Հարպրոդ» ՓԲԸ	200.0	-	28.91	2011թ.	7 տարի
8.	«Արալեռ» ՓԲԸ	90.0	160.0	44,27	2012թ.	5 տարի
9.	«Սիս Նատուրալ» ՓԲԸ	200.0	200.0	25+1	2012թ.	7 տարի
10.	«Արզնի մսամթերք» ՓԲԸ	100.0	70.0	43,62	2014թ.	7 տարի
Ընդամենը		1375.0	508.0	1883.0 մլն դրամ		

Սակայն հարկ է նշել, որ ՀԳՏՏԶՀ հիմնադրամի հետ համագործակցող գրեթե բոլոր ընկերություններն ունեն վճարումների ուշացումներ (տե՛ս հավելված 3), ինչը պայմանավորված է եղել միջարք հանգամանքներով, մասնավորապես՝

- հաճախորդ ընկերություններում ցածր է կառավարման արդյունավետությունը,

<sup>71</sup> Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի կատարած ներդրումների վերաբերյալ հաշվետվություն, Երևան, 2015

- ընկերությունները հիմնադրամը չեն ընդունում, որպես համասեփականատեր, փայտեր ու գործընկեր, այլ գուտ որպես ֆինանսավորող կառույց,
- արտահանման շուկաների մի մասի (մասնավորապես Ռուսաստանի Դաշնության և Ուկրաինայի Հանրապետության) վատ տնտեսական պայմանները ավելի են բարդացրել հիմնախնդիրները:

Այնուամենայնիվ, չնայած բավականին անբարենպաստ ֆինանսական արդյունքների, ծրագրերի զարգացման ազդեցությունը, տպավորիչ է: Մասնավորապես, հաճախորդ ընկերությունների կողմից Ֆերմերներից գնումների մակարդակի ավելացումը 2010-2013թթ. ընթացքում կազմել է 1601 մլն. դրամ, վաճառքների ավելացումը՝ 3486 մլն. դրամ, իսկ արտահանումների ավելացումը՝ 2608 մլն. դրամ:

Հաշվի առնելով ՀԳՏՏՀ հաճախորդ ընկերությունների կողմից հիմնադրամի առջև ստանձնած պարտավորությունների ոչ պատշաճ կատարումը, գտնում ենք, որ ՀԳՏՏՀ կողմից կիրառվող կարգերը պետք է ենթարկվեն հիմնավոր փոփոխության, կատարվեն լրացումներ և փոփոխություններ ներդրումների տրամադրման պայմաններում, կիրառվեն ֆինանսավորման նորամուծական մեթոդներ, մասնավորապես՝ մեզանին (միջանկյալ) և գրավով ապահովված ֆինանսավորում, ապա բարելավելով ընկերության կառավարման և հաշվետվությունների համակարգը, և ունենալով երկու հաջորդական տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտի եզրակացությունը, նոր տրամադրվի առանց գրավի ապահովման ներդրում:

Մեզանին ֆինանսավորումը ցանկալի է պարտքային ֆինանսավորման և սեփական կապիտալով ֆինանսավորման որոշակի խառնուրդ է: Մեզանին ֆինանսավորման դեպքում ներդրողը պարտքային սկզբունքով ֆինանսական միջոցներ է տրամադրում՝ միաժամանակ հնարավորություն ստանալով որոշակի պայմանների դեպքում ձեռքբերել փոխառուի բաժնետոմսերը:

Մեզանին ֆինանսավորումը ցանկալի է իրականացնել գրավադրման սկզբունքով, ինչը հնարավորություն կընձեռի



նվազեցնել հիմնադրամի ռիսկերը: Եթե ընկերությունը որոշակի ժամանակաշրջանից (3-5 տարի) հետո համապատասխանի բաժնեմասնակցային ներդրմանը, ապա հիմնադրամը պետք է ազատի գրավի առարկան և դառնա բաժնետեր: Հակառակ դեպքում կազմակերպությունը պետք է դուրս գա հիմնադրամից:

### **2.3. Ագրարային ոլորտում արտաքին ներդրումների խթանման համակարգը**

ՀՀ ագրարային ոլորտի ներդրումային միջավայրի բարելավման կարևորագույն նախադրյալներից մեկը օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈԲՆ) ներգրավման համար բարենպաստ պայմանների ստեղծումն է: Համաձայն «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքի՝ օտարերկրյա ներդրումը գույքի ցանկացած տեսակ է, այդ թվում՝ ֆինանսական միջոցներ և մտավոր արժեքներ, որն օտարերկրյա ներդրողի կողմից անմիջականորեն ներդրվում է ՀՀ տարածքում իրականացվող ձեռնարկատիրական և այլ գործունեության ոլորտում՝ շահույթի ստացման կամ այլ օգտակար արդյունքի հասնելու նպատակով<sup>72</sup>:

Արտաքին ներդրումների ներգրավման քաղաքականության նպատակը պետք է լինի ներդրողների համար այնպիսի միջավայրի ձևավորումը, որում նրանք կկարողանան իրականացնել իրենց գործունեությունը շահավետ և առանց ավելորդ ռիսկերի: Փորձը ցույց է տալիս, որ օտարերկրյա ներդրողների ներդրումային միջավայրի վրա ազդող կարևորագույն գործոններ են հանդիսանում՝

- կանխատեսելի և ոչ խտրական նորմատիվ-իրավական բազա և գործարարություն և իրականացնելու վարչական խոչընդոտների բացակայություն,
- կայուն մակրոտնտեսական միջավայր և միջազգային առևտրին մասնակցության հնարավորություն,

<sup>72</sup> ՀՀ օրենքը «Օտարերկրյա ներդրումների մասին» ընդունված 31.07.1994

- ռեսուրսների բավարարողություն և մատչելիություն, այդ թվում՝ համապատասխան ենթակառուցվածքների և մարդկային կապիտալի առկայություն:

Հայաստանի Հանրապետությունը ներդրումների նկատմամբ իրականացնում է «բաց դռների» քաղաքականություն, որն իր օրենսդրական ամրագրումն է ստացել 1994թ.-ին ընդունված «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքում, 2005 և 2015 թվականներին հաստատված «ՀՀ ներդրումային քաղաքականության» հայեցակարգերում և տնտեսական ոլորտը կարգավորող այն իրավական ակտերում, որոնք առնչվում են ներդրումներին:

ՀՀ-ում օտարերկրյա ներդրումների իրավական կարգավորումը գլխավորապես իրականացվում է «Օտարերկրյա ներդրումների մասին» օրենքով: Վերջինս բավականին բարենպաստ ներդրումային միջավայր է սահմանում օտարերկրյա ներդրողների համար: Օրենքով արժույթի փոխարկման որևէ սահմանափակում սահմանված չէ: Օտարերկրյա ներդրումից ստացվող շահույթը կարող է ազատորեն արտահանվել՝ համապատասխան հարկային և այլ պարտադիր վճարումներն իրականացնելուց հետո: Կազմակերպությունները կարող են ՀՀ-ում կամ արտերկրում արտարժույթով հաշիվներ ունենալ: Օտարերկրյա ներդրումը չի կարող պետականացվել, բռնագրավվել կամ օտարվել, բացառությամբ արտակարգ իրավիճակների հետ կապված բացառիկ դեպքերի՝ դատարանի վճռով և լրիվ փոխհատուցմամբ: ՀՀ պետական մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց կողմից օտարերկրյա ներդրողների վնասի պատճառման կամ օրենսդրությանը հակասող գործողությունների պարագայում, օտարերկրյա ներդրողներն ունեն նյութական և բարոյական վնասների փոխհատուցման իրավունք:

Բացի այդ, օրենքը սահմանում է նաև, որ օտարերկրյա ձեռնարկության կողմից իր կանոնադրական կապիտալի համալրման նպատակով ապրանքների ներմուծումն ազատվում է հարկերից: Օտարերկրյա ներդրումներով ձեռնարկություններն իրավունք ունեն առանց լիցենզիայի արտահանել սեփական արտադրության արտադրանքը և ներմուծել սեփական կարիքների համար արտադրանք:

Այ դու հանդերձ, հարկ է նշել, որ «Օտարերկրյա ներդրումների մասին» օրենքը բավականին հին է և որոշակի վերանայման կարիք ունի, քանի որ գործարար և ներդրումային միջավայր հասկացությունները զգալիորեն ընդլայնվել են և կրել բովանդակային փոփոխություններ: Իսկ օտարերկրյա ներդրումների ներգրավման վերաբերյալ ռազմավարություն գոյություն չունի:

ՀՀ տնտեսությունում, և մասնավորապես՝ գյուղատնտեսության ոլորտում, 2000-2014 թվականների ընթացքում կատարված օտարերկրյա ներդրումների հոսքերի ծավալները ներկայացված են աղյուսակ 2.3.1-ում:

Աղյուսակ 2.3.1

Օտարերկրյա ներդրումների հոսքերի ծավալը 2000-2015թթ.  
(մլն. դոլար)<sup>73</sup>

Տարեթիվը	Ներդրումներ ՀՀ տնտեսությունում		Ներդրումներ գյուղատնտեսությունում	
	Ընդամենը ներդրումներ	Ուղղակի ներդրումներ	Ընդամենը ներդրումներ	Ուղղակի ներդրումներ
1	2	3	4	5
2000	190.1	120.0	-	-
2001	122.5	75.9	0.2	0.2
2002	217.5	141.0	3.7	3.4
2003	230.0	153.5	-	-
2004	305.6	226.7	-	-
2005	431.2	275.3	0.06	-
2006	601.0	407.6	0.4	-
2007	845.4	582.3	-	-
2008	1257.6	1000.9	23.7	22.9
2009	935.5	732.1	7.9	6.7
2010	702.7	483.0	5.6	4.8
2011	816.3	631.4	3.7	2.8
2012	751.8	567.4	36.4	36.1
2013	597.4	271.2	8.4	7.1
2014	402.6	281.8	15.2	11.5
2015	258.8	147.4	26.2	26.2

<sup>73</sup> Աղյուսակը կազմվել է ՀՀ ԱՎԾ օտարերկրյա ներդրումների 2000-2015թթ. հաշվետվությունների հիման վրա

Ինչպես երևում է աղյուսակ 2.3.1-ից, 2000-2008թթ. Հայաստանում օտարերկրյա ներդրումների, այդ թվում՝ ուղղակի ներդրումների հոսքերի ծավալները աճել են: Մինչ ճգնաժամային շրջանում ներդրումների աճին հաջորդել է ներդրումների 33% անկումը 2009թ. ճգնաժամի ընթացքում, իսկ մինչև 2014թ.-ը դրսևորել անկայուն շարժընթաց: 2013թ.-ին ներդրումների անկումը բացատրվում է հեռահաղորդակցության ոլորտում ներդրումների կիսով չափ կրճատմամբ (օտարերկրյա ներդրումային ծրագրերի ավարտված պայմանավորված) և անշարժ գույքի շուկայի անկմամբ (պայմանավորված շինարարության դանդաղեցմամբ): Արտադրության և առաջնային ոլորտների մասնաբաժնում հստակ միտումներ չեն նկատվել. որոշ տարիների ընթացքում տեղի է ունեցել կապիտալի մեկանգամյա ներհոսք՝ կապված առանձին խոշոր ծրագրերի հետ: Դա 2011 թվականին տեղի ունեցավ հիմնային մետաղների արտադրության, իսկ 2012 թվականին՝ հանքարդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտներում: Արդյունաբերության ճյուղերի բաշխվածությանն առանձին անդրադառնալու դեպքում պետք է նշել, որ հեռահաղորդակցությունը 2010-2013թթ. ընթացքում ՕՈՒՆ ծանրակշիռ ներհոսք է արձանագրել, իսկ էլեկտրականության և գազի ոլորտը ՕՈՒՆ հոսք ունեցել է 2010-2011 և 2014 թվականներին<sup>74</sup>: Հետճգնաժամային ժամանակաշրջանում գյուղատնտեսության ոլորտում իրականացվող օտարերկրյա ներդրումների ծավալների աճին մեծապես նպաստել է ՀՀ կառավարության հակաճգնաժամային միջոցառումների ծրագրում ներառված «Գյուղական վայրերի զարգացման», «Ենթակառուցվածքների վերականգնման և զարգացման» ծրագրերի իրականացումը:

Հարկ է նշել, որ ընդհանուր ներդրումները ներառում են ուղղակի, պորտֆելային և այլ ներդրումներ (վարկերը և փոխառությունները, ապրանքների և ծառայությունների դիմաց վճարվելիք/ստացվելիք գումարները, ստացված/տրված կանխավճարները): Օտարերկրյա ուղղակի ներդրումը մի երկրի ռեզիդենտ(ներ)ի կողմից այլ երկրի ռեզիդենտ կազմակերպության

<sup>74</sup> «Ներդրումային բարեփոխումների քարտեզ», Վերլուծական հաշվետվություն և Էկոնոմիկայի նախարարության համար. – Երևան, 2015. Էջ 14

կապիտալ ու մ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի կամ բաժնեմասի 10% և ավելի ձեռքբերումն է:

Աղյ ու սակ 2.3.2

ՀՀ տնտեսության իրական հատվածում կատարված օտարերկրյա ներդրումների մաքուր պաշարները ըստերկրների (մլն. դոլար)<sup>75</sup>

Երկիրը	Ընդամենը ներդրումներ	այդ թվում՝ ուղղակի	Տեսակարար կշիռը, %	
			ընդամենը ներդրում	այդ թվում՝ ուղղակի
Ընդամենը	5584.0	4051.9	100	100
Ռուսաստանի Դաշնության	2110.1	1771.8	37.79	43.73
Կիպրոս	654.3	230.2	11.72	5.68
Գերմանիա	341.4	195.3	6.13	4.82

Աղյ ու սակ 2.3.2-ի շարունակությունը

Արգենտինա	339.9	256.6	6.09	6.33
Նիդերլանդներ	330.4	112.3	5.92	2.77
Ֆրանսիա	297.2	291.6	5.32	7.20
ԱՄՆ	202.6	183.8	3.63	4.54
Լիբանան	178.3	172.2	3.19	4.25
Շվեյցարիա	168.3	160.3	3.01	3.95
Միացյալ Թագավորություն	158.1	129.4	2.83	3.19
այլ	803.4	548.4	14.37	13.54

2014թ.-ի դրությամբ ՀՀ-ում իրականացված օտարերկրյա ներդրումների ամենամեծ պաշարը թե՛ ընդհանուր և թե՛ ուղղակի ներդրումներում ունեցել է Ռուսաստանը, որին բաժին է ընկել ընդհանուր ներդրումների շուրջ 38%-ը, իսկ ուղղակի ներդրումների շուրջ 44%-ը: Գերմանիան գլխավորապես ներդրել է հիմնային մետաղների արտադրության ոլորտում, Կիպրոսը՝ հանքարդյունաբերության, հիմնային մետաղների արտադրության և մեծածախ առևտրի ոլորտներում, ԱՄԷ-ն՝ մանրածախ առևտրի և էլեկտրական սարքավորանքի արտադրության, իսկ Կանադան՝ սննդամթերքի և ծխախոտային արտադրատեսակների արտադրության ոլորտներում: Գյուղատնտեսության ոլորտում ներդրում կատարող երկիր է հանդիսացել Արգենտինան:

<sup>75</sup> [www.mineconomy.am/uploads/20150304161143332.pdf](http://www.mineconomy.am/uploads/20150304161143332.pdf)

Ագրարային ոլորտում օտարերկրյա ներդրումների լավագույն օրինակ է հանդիսանում արգենտինահայ գործարար Էդուարդո Էռնեկյանի նախաձեռնությամբ իրականացվող «Տիեռաս դե Արմենիա» («Յայ աստանի հողեր») ծրագիրը:

«Տիեռաս դե Արմենիա» ՓԲԸ-ը Յայ աստանում իր գործունեությունը սկսել է 2004թ. նոյեմբերից<sup>76</sup>: Ընկերությունն իր գործունեությունը ծավալում է Արմավիրի մարզի Բաղրամյանի տարածաշրջանում: Ընկերության նպատակը ՀՀ-ում խաղողագործության զարգացումն է: Այդ նպատակին հասնելու համար առաջնաերթ խնդիր էր ոռոգման ջրի ապահովումը: Իրականացված ներդրումների շնորհիվ ընկերության տարածքում կառուցվել է երկու ջրամբար՝ 90 հազ. խմ. և 105 հազ. խմ. ընդհանուր ծավալով՝ խաղողի առաջին (400 հա) և երկրորդ (150 հա) այգիները ջրով ապահովելու համար: Այս համակարգը մեղմացնում է ոռոգման ռիսկերը, քանի որ ՋՕԸ-ների կողմից ջրի առաջարկը չի համապատասխանում ընկերության պահանջներին: Ջրամբարների հատակը մեկուսացնելու համար օգտագործվել է Յայ աստանում բոլորովին նոր տեխնոլոգիա՝ գետտեքսիլ գործվածքի և բարձր խտության պոլիէթիլենային թաղանթի համադրությամբ՝ ջրի կորուստները կանխելու նպատակով: Ամբողջ հողատարածքը ոռոգվում է կաթիլային համակարգով, ինչը հնարավորություն է տալիս ապահովել բարձր արդյունավետություն, ջրի և էլեկտրաէներգիայի զգալի խնայողություն: Ընկերությունը առաջնային կարևորություն է տալիս մարդկային ներուժի արդյունավետ օգտագործմանը: Աշխատանքի վարձատրությունն ուղղակիորեն կախված է յուրաքանչյուր աշխատողի ապահոված ցուցանիշներից:

Այնուամենայնիվ, գյուղատնտեսության ոլորտում իրականացված ներդրումները կազմում են ընդհանուր ներդրումների չնչին մասնաբաժինը, ինչը վկայում է ոլորտի ցածր շահութաբերության և օտարերկրյա ներդրողների համար ոչ գրավիչ լինելու մասին: Ուստի, այս առումով կարևորվում է օտարերկրյա ներդրումների խթանման համակարգի ձևավորումը, որը կնպաստի

<sup>76</sup> Ավետիսյան Ս. «Յայ աստանի գյուղատնտեսությունը և ագրովերամշակումը», Եր.: «Լիմոնշ» հրատ., 2010, էջ 43-46

օտարերկրյա ներդրումների հոսքին երկիր: Այս տեղ կարևորվում է միջազգային փորձի ու սուսնասիրությունը:

Վերջին տասնամյակների ընթացքում երկրների միջև ուժեղացել է օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավման համար մղվող մրցապայքարը, ինչը պայմանավորված է գլոբալիզացիոն գործընթացներով<sup>77</sup>: Ներդրումների խթանման համար կառավարությունները ծախսում են զգալի ֆինանսական միջոցներ՝ հույս ունենալով, որ դրանք կնպաստեն տնտեսական աճին, արտադրական հզորությունների արդիականացմանը, աշխատանքի արտադրողականության բարձրացմանը<sup>78</sup>:

Ներդրողների հետ համագործակցության նպատակով ստեղծվում են հատուկ լիազորված հաստատություններ՝ ներդրումային գործակալություններ, որոնք նպաստում են բյուրոկրատական քաշքշուկների, նախագծերի իրացման ժամանակ տրանզակցիոն ծախսերի նվազեցմանը: Ներդրումների խթանման գործակալությունների միջազգային ասոցիացիայի անդամ են հանդիսանում 170 գործակալություններ 130 երկրներից<sup>79</sup>:

Չնայած տնտեսագետների կարծիքը ներդրումային գործակալությունների գործունեության տնտեսական արդյունավետության վերաբերյալ միանշանակ չէ, այնուամենայնիվ բազմաթիվ հետազոտություններում նրանց մեծամասնությունը գտնում է, որ ներդրումային գործակալությունները նպաստում են օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավմանը: Ներդրումային գործակալություններն իրականացնում են ՕՌԻՆ-ների ներգրավման միջոցառումների մի ամբողջական համակարգ, հետևաբար բավականին դժվար է գնահատել առանձին միջոցառման ազդեցությունը վերջնական արդյունքի վրա:

<sup>77</sup> Հարությունյան Չ. Օտարերկրյա ներդրումների ներգրավման խթանումը և համատեղ ձեռնարկատիրություն զարգացման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում / «Ազրոգիտություն», գիտական ամսագիր N11-12, 2013թ. էջ 576

<sup>78</sup> Писаренко А.Г. Инвестиционное агентство как важный элемент в модернизации отечественной экономики / Доклад, представленный в рамках сессии «Проблемы развития мировой экономики» Второго Российского экономического конгресса. – Суздаль. 2013.

<sup>79</sup> [www.waipa.org](http://www.waipa.org)

Ուելլ Լ սը և Վինտը Նշում են, որ այդ միջոցառումները պետք է ուղղված լինեն ազգային պատկերի ձևավորմանը, ներդրումների ստեղծմանը, առկա և հնարավոր ներդրողներին ծառայությունների մատուցմանը<sup>80</sup>:

Տնտեսագետներ Չարլտոնը և Դեյվիսը իրենց հետազոտության մեջ հանգում են այն եզրակացությանը, որ ՏՀԶԿ անդամ երկրներում ներդրումային գործակալությունների ակտիվ գործունեությունը՝ ուղղված ներդրումների ներհոսքի խթանմանը առանձին (թիրախային) ճյուղեր, 41%-ով ավելացնում են ՕՈՒՆ-ների ներհոսքը համեմատած մյուս ճյուղերի հետ<sup>81</sup>:

Մորրիսետը և Էնդրյու-Ջոնսոնը եզրակացնում են, որ զարգացող երկրներում ներդրումային գործակալությունների կողմից ներդրումների խթանման ծախսերի 10%-ով ավելացումը հանգեցնում է ՕՈՒՆ-ների ներհոսքի 2.5%-ով ավելացմանը: Նրանց հաշվարկներով, ներդրումային գործակալությունների կողմից ծախսերի 60 հազ. դոլարով ավելացումը բերում է օտարերկրյա ներդրումների 2.5 մլն. դոլարով ավելացմանը: Հեղինակներն այս հաշվարկները կատարել են բարենպաստ ներդրումային կլիմայով միջին վիճակագրական երկրների համար<sup>82</sup>:

Տարբեր երկրներում ներդրումային գործակալություններն իրենց գործունեությունն իրականացնում են որոշակի ուղղություններով: Օրինակ, Շվեդական ներդրումային գործակալությունը (Invest in Sweden Agency) իր գործունեությունը կենտրոնացնում է ներդրումների ներհոսքի խթանմանը տնտեսության մրցակցային առավելություններ ունեցող ոլորտներ, մասնավորապես՝ ավտոմոբիլաշինություն, սննդի արդյունաբերություն, առողջապահություն, տեղեկատվական տեխնոլոգիաներ, միկրոէլեկտրոնիկա, բնական ռեսուրսների արդյունահանում, փայտամշակող արդյունաբերություն<sup>83</sup>:

<sup>80</sup> Wells L., Wint A. "Marketing a country: promotion as tool for attracting foreign investment", FIAS Occasional Paper No.1 (Washington D.C.: Foreign Investment Advisory Services). 1990. p. 10

<sup>81</sup> Charlton A., Davis N. "Does Investment Promotion Work?", The Berkley Electronic Journal of Economic Analysis and Policy: Vol. 7, Issue 1, Article 42, 2007. p. 16

<sup>82</sup> Morisset J., Andrews-Johnson K., "The Effectiveness of Promotion Agencies at Attracting Foreign Direct Investment", FIAS Occasional Paper 16, 2004, p. 13

<sup>83</sup> Jensen N. "Nation-States and the Multinational Corporation: A Political Economy of Foreign Direct Investment", 2008. p. 35



Սինգապուրի ներդրումային գործակալության մոդելը իր վրա դրված գործառույթները հիմնականում իրականացնում է ներկայացուցչությանների միջոցով: 2011թ. սկզբին գործակալությունն ունեցել է պաշտոնական ներկայացուցչությաններ 11 երկրներում: Օտարերկրյա կապիտալի ներգրավման համար գործակալության ներկայացուցչությունները հնարավոր օտարերկրյա ներդրողներին ներկայացնում են համագործակցության տնտեսական շահավետությունը:

Որոշ երկրներ վարում են ներդրումների ներգրավման պասիվ քաղաքականություն: Օրինակ, Ավստրիական ներդրումային գործակալությունը (Austrian Business Agency) ներդրումային առաջարկներ է հրապարակում միջազգային տնտեսագիտական ամսագրերում, գործարար կապեր է հաստատում միջազգային կազմակերպությունների ղեկավարության հետ:

Հաշվի առնելով զարգացած երկրներում ներդրումային գործակալությունների գործունեության դրական փորձը, անհրաժեշտ ենք համարում ՀՀ-ում ևս նման կառույցի ձևավորումը: Վերջինիս խնդիրները պետք է լինեն՝

- նպաստել օտարերկրյա ներդրումների ներգրավմանը,
- մասնակցություն ներդրումային համաժողովներին և ցուցահանդեսներին,
- ներդրումային նախագծերի վերաբերյալ գովազդի հրապարակում,
- ներդրումային հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվության ներկայացում տարբեր երկրներում,
- հնարավոր ներդրողներին տնտեսության ճյուղերի մրցակցային առավելությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում,
- ներդրումային նախագծերի իրագործման հետ կապված փաստաթղթերի տրամադրման գործընթացին աջակցություն,
- հետններդրումային ծառայությունների տրամադրում,
- ներդրումային քարոզարշավի իրականացում,
- օրենսդրական նախաձեռնությունների և քաղաքական առաջարկների իրականացում:

Ներդրումային գործակալությունները ձևավորվում են տարբեր մոդելների հիման վրա: Մոդելներից յուրաքանչյուրն ունի իր առավելություններն ու թերությունները: Ընդհանուր առմամբ, ներդրումային գործակալությունները կարող են հանդիսանալ նախարարության ստորաբաժանում կամ լինել անկախ կազմակերպություն: Այս երկու մոդելների առավելություններն ու թերությունները ներկայացված են աղյուսակներ 2.3.3-ում և 2.3.4-ում:

Աղյուսակ 2.3.3

Ներդրումային գործակալությունը նախարարության ստորաբաժանում է	
Առավելությունները	Թերությունները
<ul style="list-style-type: none"> <li>- Հատուկ օրենսդրության ընդունման անհրաժեշտության բացակայություն</li> <li>- Նախարարության կողմից ներդրումային քաղաքականության վրա ազդեցության հնարավորություն</li> <li>- Նախարարության մյուս ստորաբաժանումների հետ համագործակցության հնարավորություն</li> <li>- Բարձրաստիճան պաշտոնյաների ներգրավման հնարավորություն առանձին ներդրումային խնդիրների լուծման գործընթացին</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>- Ներդրումային գործակալության իրավունքների սահմանափակում նախարարության նորմատիվ-իրավական ակտերով</li> <li>- Գործնականում մասնավոր բիզնեսի հաջողակ կառավարիչների ներգրավման հնարավորություն բացակայություն</li> <li>- Ներդրումային գործակալության կողմից սեփական բյուջեի պլանավորման և օգտագործման ինքնուրույնություն բացակայություն</li> </ul>

Աղյուսակ 2.3.4

Ներդրումային գործակալությունը անկախ կազմակերպություն է	
Առավելությունները	Թերությունները

<ul style="list-style-type: none"> <li>- Գործակալ ու թյ ու նն ու նի հատուկ կարգավիճակ և սեփական բյ ու ջ ե</li> <li>- Գործակալ ու թյ ան գործու նե ու թյ ան կարգավորումն ավելի ճ կ ու ն է , առկա է մասնավոր բիզնեսի հաջողակ կառավարիչ ների ներգրավման հնարավորություն</li> <li>- Ներդրումային միջավայրի վրաներգործություն ավելի մեծ հնարավորություն</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>- Գործակալ ու թյ ու նը կարող է մեկուսանալ և չ կարողանալ ազդել կառավարության որոշումների վրա</li> <li>- Հատուկ օրենսդրության ընդունման անհրաժեշտություն</li> <li>- Կարող է լինել անարդյունավետ, քանի որ գործակալ ու թյ անը չ են տրվել ու բավարար իրավասություններ ներդրումային նախագծերի հաստատման և լիցենզիաների տրամադրման համար</li> </ul>
--	---

Ցանկացած ներդրումային գործակալ ու թյ ու ն պետք է ունենա իր կարգավիճակն ու լիազորությունների շրջանակը: Դրանց առանձնահատկությունները գլխավորապես պայմանավորված են տվյալ երկրի օրենսդրությամբ: Սակայն առկա են բոլոր երկրների ն բնորոշ որոշակի խնդիրներ, որոնք անհրաժեշտ է լուծել մինչև ներդրումային գործակալ ու թյ ան գործու նե ու թյ ան սկիզբը: Դա գործակալ ու թյ ան իրավունքների, իրավասությունների և պարտականությունների սահմանումն է: Ներդրումային գործակալ ու թյ ան իրավասությունները որոշվում են նրա ընթացիկ և ռազմավարական խնդիրներով: Գործակալ ու թյ ան իրավասությունների շրջանակի սահմանումը կարող է որոշակի առումով խնդրահարույց լինել, հատկապես երբ այն կրկնօրինակում է այլ պետական կառույցների գործառնություններ: Ընդ որում, իրավասությունների թե՛ չափազանց լայն, թե՛ չափազանց նեղ շրջանակը խոչընդոտներ է ստեղծում գործակալ ու թյ ան արդյունավետ գործու նե ու թյ ան համար:

Եթե ներդրումային գործակալ ու թյ ու նը ձևավորվում է նախարարության կազմում, ապա նրա իրավական կարգավիճակը

սահմանող նորմատիվ ակտերի ընդունում չի պահանջվում, իսկ ներդրումային նախարարության ունեցած լիազորությունները իրականացվում է գործակալության աշխատակազմի միջոցով: Մինչդեռ, եթե ներդրումային գործակալությունը ստեղծվում է որպես ինքնուրույն կազմակերպություն, ապա անհրաժեշտություն է առաջանում ձևավորել վերջինիս գործունեությունը կանոնակարգող հատուկ օրենսդրություն:

Ներդրումային գործակալության գլխավոր գործառույթը պետք է լինի օտարերկրյա ներդրումների ներգրավման խթանումը: Գործակալությունը պետք է ունենա համապատասխան ներքին կառուցվածք և համալրված լինի բարձր որակավորում ունեցող աշխատակազմով: Նախարարության կազմում գործելու պարագայում ներդրումային գործակալությունը պետք է ունենա հետևյալ կառուցվածքը՝

- ներդրումային գործակալության ղեկավար,
- հասարակության հետ կապերի բաժին, որի գործունեության նպատակը պետք է լինի ներդրողների ներգրավումը, գովազդը, արտասահմանյան լրատվամիջոցների հետ համագործակցությունը,
- ներդրողներին սպասարկման բաժին, որը պետք է իրականացնի ներդրողներին խորհրդատվական ծառայությունների մատուցումը:

Որպես ինքնուրույն կազմակերպություն գործելու դեպքում ներդրումային գործակալությունը պետք է ունենա հետևյալ կառուցվածքը՝

- գործադիր տնօրեն,
- ներդրումային ծրագրերի աջակցության բաժին, որի գործունեության նպատակը պետք է լինի գործող ներդրողների հետ համագործակցությունը, նոր ներդրումների խթանումը,
- իրավաբանական բաժին, որը պետք է իրականացնի իրավաբանական խորհրդատվության տրամադրում:

Ներդրումային գործակալության ֆինանսավորման իրականացման ձևը կախված է նրա կազմակերպական մոդելից: Նախարարության կազմում գործելու պարագայում ֆինանսավորումն իրականացվում է բյուջեից: Անկախ կազմակերպությունն լինելու պարագայում ֆինանսավորումը պետք է իրականացվի սեփական միջոցների հաշվին, սակայն կարճաժամկետառումով կարևորվում է նաև վերջինիս ֆինանսական աջակցության տրամադրման դերը: Ներդրումային գործակալության կենսունակությունն ապահովելու համար ֆինանսավորման ավանավորումն անհրաժեշտ է իրականացնել առնվազն 3 տարվա կտրվածքով: Այդ ժամկետը հանդիսանում է ամենաօպտիմալը նորաստեղծ գործակալության գործունեության արդյունքը ցուցադրելու համար:

Սեփական գործունեությունն իրականացնելու համար գործակալությունը պետք է մշակի ներդրումների խթանման ռազմավարություն, որը կարող է ներառել հետևյալ բաժինները՝

1. Ռազմավարության նպատակը:

Ռազմավարության նպատակների իրագործումը ենթադրում է տնտեսության ներդրումային միջավայրի բարելավում՝ առաջադիմական ներդրումային օրենսդրության և բարենպաստ հարկային ռեժիմի ձևավորում, առկա և հնարավոր ներդրողների, բիզնեսի պահանջներին բավարարող ենթակառուցվածքների ձևավորում:

2. Ներդրումային միջավայրի ուժեղ և թուլյլ կողմերի համեմատական վերլուծություն

Հնարավոր ներդրողների համար երկրի առավելությունների բացահայտման համար անհրաժեշտ է իրականացնել տնտեսության ուժեղ և թուլյլ կողմերի վերլուծություն: Նմանատիպ վերլուծության օրինակ է հանդիսանում տնտեսության ՈՒԹՅՍ վերլուծությունը, որը հնարավորություն է տալիս բացահայտել ուժեղ և թուլյլ կողմերը, հնարավորություններն ու սպառնալիքները, և միջոցառումներ ձեռնարկել ներդրումային միջավայրի բարելավման համար:

3. Ուղղակի ներդրումների ներգրավման հեռանկարների հիմնավորում:

Ուղղակի ներդրումները դիտարկվում են որպես տնտեսական աճի կարևորագույն խթաններ, քանի որ հանդիսանում են ոչ միայն նոր կապիտալ ներդրում, այլ նաև հիմք են ձևավորում նոր տեխնոլոգիաների, կառավարման և մարքեթինգի արդյունավետ ձևերի ներդրման համար: Ներդրողների որոնումը կարող է իրականացվել ճյուղային և աշխարհագրական հատկանիշներով: Անհրաժեշտ է առանձնացնել նաև թիրախային ներդրող երկրներին, ինչը հնարավորություն կընձեռի առավել արդյունավետ օգտագործել ներդրումային գործակալության գովազդային հնարավորությունները:

4. Ներդրումային միջավայրի բարելավման հիմնական ուղղությունների սահմանում:

Այդպիսի ուղղություններ կարող են հանդիսանալ՝

- ներդրումային գործընթացների կառավարման համակարգի կատարելագործում,
- նորամուծական գործունեության խթանում,
- ներդրումային օրենսդրության կատարելագործում,
- ներդրումային մարքեթինգի համակարգի ստեղծում,
- գործարար ենթակառուցվածքների ձևավորում:

Մեր կարծիքով, ՀՀ-ում ներդրումային գործակալության կազմավորման համար անհրաժեշտ է հիմք ընդունել առաջին մոդելը, այսինքն այն հանդիսանալ կառավարության ստորաբաժանում: Տվյալ դեպքում այդ կառույցը, մի կողմից ավելի վստահելի կլինի ներդրողների տեսանկյունից, մյուս կողմից, հանդիսանալով կառավարության մաս, օժտված կլինի նաև վարչական լծակներով: Սակայն համարում ենք, որ ավելի առաջադիմական է երկրորդ մոդելը: Ցանկալի է, որ շուկայական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց անցում կատարվի առաջին մոդելից դեպի երկրորդը:

### ԳԼՈՒԽ 3.

## **ՀՀ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼ ԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

### **3.1. Արտահանման կողմնորոշում ու նեցող արտադրանքների արտադրության զարգացման պետական աջակցություն**

Ցանկացած երկրի տնտեսության մեջ իր ուրույն տեղն ու դերը ունի գյուղատնտեսությունը: Այն կարևոր դերակատարում ունի նաև ՀՀ տնտեսության մեջ, որը 2014թ.-ի տվյալներով ապահովել է երկրի համախառն ներքին արդյունքի 18.5%-ը<sup>84</sup>, զբաղվածության 37.6%-ը<sup>85</sup> և ընդհանուր արտահանման 27.4%-ը<sup>86</sup>: Ուստի, հաշվի առնելով գյուղատնտեսության ոլորտի ռազմավարական նշանակությունն ու արտահանման մեջ ունեցած զգալի մասնաբաժինը, անհրաժեշտ է ուսումնասիրել այս ոլորտում արտահանման կողմնորոշում ու նեցող արտադրության ներկայիս վիճակը և արտադրվող արտադրանքի արտահանման խթանմանն ուղղված պետական քաղաքականությունը: Վերջին տարիներին արտահանման ընդհանուր ծավալների աճին զուգընթաց ավելացել է նաև գյուղատնտեսական արտադրանքի տեսակարար կշիռը արտահանման կառուցվածքում, իսկ ներմուծման մասնաբաժինը համեմատաբար կայուն է և տատանվել է 18-19%-ի սահմաններում (աղյուսակ 3.1.1):

ՀՀ պարենային ապրանքների արտահանման կառուցվածքում ամենամեծ տեսակարար կշիռն ունեն ռգելից ըմպելիքները, հատկապես՝ հայկական կոնյակը: Վերջինս արտահանման ամենամեծ ծավալներ ունեցող հայաստանյան արտադրատեսակներից է: ՀՀ մաքսային ծառայությունը կոնյակի արտահանման ծավալները դիտարկում է օղու, ռոմի, լիկյորի և ջինի խմբում՝ համաձայն

<sup>84</sup> Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2015, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2015. Էջ 234

<sup>85</sup> Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում 2015», ՀՀ ԱՎԾ, Երևան, 2015, Էջ 51

<sup>86</sup> «Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրի կառուցվածքը 2014թթ.», ՀՀ ԱՎԾ, Երևան, 2015

արտաքին տնտեսական  
անվանացանկի<sup>87</sup>:

գործունեության

ապրանքների

---

<sup>87</sup> Մելքումյան Մ. ՀՀ կոնյակագործության ոլորտի վերլուծությունը և արտահանման նոր շուկաների թիրախավորումը / Մելքումյան Մ. Ավետիսյան Մ. Հոկտեմբերյան Հ. // «Ֆինանսներ և Էկոնոմիկա» հանդես. N 3-4, 2013. Էջ 6



Գյուղատնտեսական ծագման ապրանքների տեսակարար կշիռը ՀՀ արտահանման և ներմուծման մեջ<sup>88</sup>

Ցուցանիշները	Չափի միավորը	Տարիները				
		2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.
Արտահանում, ընդամենը	մլն. դոլար	1041.1	1334.3	1380.2	1480.0	1547.3
Գյուղատնտեսական ծագման ապրանքների արտահանումը	մլն. դոլար	170.4	237.0	323.3	415.5	414.5
Տեսակարար կշիռը ընդամենը արտահանման մեջ	%	16.4	17.8	23.4	28.1	26.8
Ներմուծում, ընդամենը	մլն. դոլար	3748.9	4145.3	4261.2	4476.8	4401.6
Գյուղատնտեսական ծագման ապրանքների ներմուծում	մլն. դոլար	673.5	781.1	810.7	846.6	810.7
Տեսակարար կշիռը ընդամենը ներմուծման մեջ	%	18.0	18.8	19.0	18.9	18.4

Ըստ մաքսային վիճակագրության տվյալների 2012թ.-ի ընթացքում արտահանվել է 14.4 մլն. լիտր (վերահաշվարկված 100% սափրտի խտությամբ) կոնյակ, լիկյոր, օղի, ռոմ և ջին 169.9 մլն. դոլար մաքսային արժեքով: 2013թ.-ին արտահանման ծավալը կազմել է 14.1 մլն. լիտր 187.6 մլն. դոլար մաքսային արժեքով, իսկ 2014թ.-ին՝ 13.1 մլն լիտր՝ 164.9 մլն. դոլար մաքսային արժեքով<sup>89</sup>: Հայկական բրենդիի արտահանման ամենամեծ շուկան Ռուսաստանի Դաշնությունն է: Այս տերկրին 2013թ.-ին բաժին է ընկել բրենդիի արտահանման ընդհանուր ծավալի 81.4%-ը, իսկ 2014թ.-ին՝ 80%: ՌԴ արտահանման ծավալների կրճատման միտումը պահպանվել է նաև 2015թ., որը հիմնականում պայմանավորված է ռուսական ռուբլու արժեզրկմամբ և բնակչության գնողունակ պահանջարկի կրճատմամբ: ԵՄ երկրներում հայկական կոնյակի սպառման ծավալների ավելացմանը խոչընդոտող հիմնական գործոնը «հայկական

<sup>88</sup> «Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2014 թվականին (ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 2-նիշ դասակարգման)», ՀՀ ԱՎՃ, Երևան, 2015

<sup>89</sup> «Գինեգործության զարգացման ուսումնասիրություն ՀՀ Արարատի, Արագածոտնի, Արմավիրի և Կոտայքի մարզերում», ՀԳՏՏՀ, Երևան, 2010

կոնյակ» ապրանքային անվանման օգտագործման արգելքն է: Այն էՄ շուկայում ներկայացված է որպես «Արմենյան բրենդի», իսկ բրենդին համարվում է ավելի ցածր կարգ ունեցող խմիչք, քան կոնյակը: Մինչդեռ ռուսական ԱՊՅ երկրների շուկաներում կոնյակը ներկայացված է հենց «Հայկական կոնյակ» պիտակավորմամբ: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ ԱՊՅ երկրները դեռևս չեն միացել աշխարհագրական անվանումների պահպանման և իսաբոնյան համաձայնագրին: Հետագայում, այս երկրների և իսաբոնյան համաձայնագրին միանալը կհանգեցնի նրան, որ «Հայկական կոնյակը»-ը կփոխարինվի այլ՝ «Հայկական բրենդի» անվամբ, որը հնարավոր է բացասական ազդեցություն ունենա նշված շուկաներում հայկական կոնյակի վաճառքի ծավալների վրա: Ըստ փորձագետների, նախկին ԽՍՀՄ շուկայում արդեն առկա են «բրենդի» անվանմամբ խմիչքներ, որոնց գինը 2-3 անգամ էժան է հայկական կոնյակի գնից և սպառողին դժվար կլինի բացատրել, թե ինչու է հայկական «բրենդին» 2-3 անգամ թանկ այլ «բրենդիներից»<sup>90</sup>:

Արտահանման աշխարհագրության սահմանափակությունը և հիմնական գործընկեր երկրների տնտեսական դժվարությունները կարող են և ուրջ ազդեցություն գործել ՀՀ-ում կոնյակագործության հետագա զարգացման վրա: Ուստի ներկայումս և ուրջ հիմնախնդիր է արտահանման աշխարհագրության բազմազանեցումը և համապատասխան մարքեթինգային ռազմավարության իրականացումը: Այս տնտեսակետից վերջին տարիներին ուշադրություն է դարձվում Հարավ-արևելյան Ասիայի և Մերձավոր Արևելքի երկրներ այս ապրանքախմբի արտահանման ծավալների ավելացմանը: Միաժամանակ կոնյակագործության զարգացման ռազմավարության շրջանակներում որոշակի քայլեր են ձեռնարկվում ոլորտում առկա հիմնախնդիրների և ուժման և արտադրության ծավալների ավելացման ուղղությամբ: Փորձենք անդրադառնալ ոլորտի հիմնական խնդիրներին՝ հոլմքի ձեռքբերման փուլից մինչև արտադրանքի վաճառք:

Հոլմքի գնման փուլում առաջ եկող խնդիրներն են.

<sup>90</sup> «Գինու արտադրության վերաբերյալ հաշվետվություն», ՀԳՏՏՀ, Երևան, 2011. Էջ 29

- Մեծ ֆերմերային տնտեսությունների բացակայություն: Այսօր ՀՀ-ում գործում են շուրջ 340 հազար գյուղացիական տնտեսություններ, որոնց, համաձայն ԱՎԾ-ի տվյալների, բաժին է ընկնում արտադրվող խաղողի մեծ մասը: Այսպես, 2014թ.-ի տվյալներով ՀՀ-ում արտադրվել է 261.3 հազար տոննա խաղող, որից միայն 1.8 հազար տոննան է արտադրվել առևտրային կազմակերպությունների կողմից, իսկ մնացածը բաժին է ընկել գյուղացիական տնտեսություններին: Նման բաշխվածությունը որոշակի դժվարություններ է առաջացնում հումքի որակի հսկողության և մթերման փուլում:
- Հումքի ձեռքբերման հստակ մեխանիզմների բացակայություն: Հումք արտադրող և վերամշակող սուբյեկտների միջև կայուն գործընկերության և տևական պայմանագրային հարաբերությունների սահմանափակ դրսևորումները, խաղողի մթերման հիմնախնդիրների պատճառ են դառնում: Մասնավորապես՝ մթերման ընթացքի ձգձգումը բացասաբար է անդրադառնում հումքի որակի և գնի վրա, իսկ մթերված արտադրանքի դիմաց վճարումների երկարաձգումը ազդում է գյուղացիական տնտեսությունների բնականոն վերարտադրության վրա:
- Տարբեր տեսակի և որակի խաղողի գնի տարբերակման թափանցիկ համակարգի, հստակ չափորոշիչների և գնահատման տեխնիկական պայմանների անկատարությունը նույնպես ազդում են մթերման արդյունավետ կառավարման վրա:

Այս առումով առաջարկում ենք կատարել ագործել մթերման գործընթացի իրավապայմանագրային դաշտը, օրենքով պարտադրել գնման գործընթացի պայմանագրային հիմքերը, սահմանել խաղողի հումքի գնահատման հստակ չափորոշիչներ և նվազագույն երաշխավորված գներ:

Հարկ է նշել, որ հանրապետությունում առկա է խաղողի արտադրության ծավալների ավելացման թե՛ ինտենսիվ և թե՛ էքստենսիվ ուղիներ: Բարձրակարգ սորտերի ներդրման և մշակության բարելավման միջոցով, ըստ փորձագետների խաղողի

բերքատվությունը կարելի է 3-5 տարիների ընթացքում ավելացնել 1.3-1.5 անգամ<sup>91</sup>: Առկա են նաև խաղողի տարածքների ընդլայնման մեծ հնարավորություններ, բավական է ասել, որ 1986թ. հանրապետության խաղողի տարածքները կազմել են մոտ 33 հազ. հա, ներկայիս 17 հազ. հա-ի դիմաց<sup>92</sup>: Խաղողի համար պիտանի հազարավոր հեկտարներ կան Արարատյան հարթավայրում և Վայոց Ձորում, որտեղ ոռոգման ենթակառուցվածքի ստեղծման դեպքում կարելի է զբաղվել խաղողագործությամբ: Սակայն առկա գյուղացիական տնտեսությունների խաղողի այգիների փոքր չափերը թույլ չեն տալիս ստանալ այնքան եկամուտ, որ հնարավոր լինի ավելացնել այգիների տարածքները և որ ավելի դժվար է՝ հիմնել նոր այգիներ: Նոր այգիների հիմնումն ավելի խնդրահարույց է, քանի որ մոտավոր տվյալներով 1 հա խաղողի այգի հիմնելու և բերքատու տարիքի հասցնելու համար անհրաժեշտ է մոտ 15 հազ. ԱՄՆ դոլար, որը գյուղացիական տնտեսությունների ուժերից վեր է: Բացի այդ, խաղողագործությունում իրականացվող աշխատանքների մեքենայացման մակարդակը հանրապետության գյուղացիական տնտեսություններում շարունակում է մնալ բավականին ցածր մակարդակի վրա: Խաղողագործության աշխատանքներից հիմնականում մեքենայացված են այգեվարը և սրսկումները: Մնացած բոլոր աշխատանքները կատարվում են ձեռքի աշխատանքի միջոցով: Մեքենայացմանը խոչընդոտող հիմնական հանգամանքներ են համարվում խաղողի այգիների փոքր չափերը, այգիների անհարթությունները, մշակվող խաղողի սորտային բազմազանությունը, ներդրումներ կատարելու գյուղացիական տնտեսությունների սահմանափակ հնարավորությունները և այլն: Մինչդեռ մեքենայացման մակարդակի բարձրացումը կհանգեցնի խաղողագործության տնտեսական արդյունավետության բարձրացմանը: Այս խնդիրների լավագույն լուծումը կարող է հանդիսանալ գյուղատնտեսական կոոպերացիան: Գյուղացիական տնտեսությունների համատեղ գործունեությունը

<sup>91</sup> «Գինու առտադրության վերաբերյալ հաշվետվություն», ՀԳՏՏԶՀ, Երևան, 2011. Էջ 30  
<sup>92</sup> «Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները և համախառն բերքը 2014 թվականին», ՀՀ ԱՎԾ, Երևան, 2015, Էջ 8

կոոպերատիվների մեջ կնպաստի արտադրողականության բարձրացմանը ընդլայնված վերարտադրության ապահովմանը, կընձեռի գյուղատնտեսական տեխնիկա ձեռքբերելու ավելի լայն հնարավորություններ:

Կոնյակի արտադրության փուլի հիմնախնդիրներից է մեծաթիվ փոքր արտադրություններում որակի և տեխնոլոգիական պահանջների պատշաճ հսկողության բացակայությունը<sup>93</sup>: Ներկայումս հանրապետությունում գործում է խաղողի վերամշակման շուրջ 50 ձեռնարկություն, որոնցից միայն 12-ն են համեմատաբար խոշոր: Բացի այդ, որոշ գործարաններում օգտագործվող սարքավորումները 20-30 տարվա հնության են, բացակայում են ջերմային տնտեսությունները (խմորման ջերմաստիճանի պահպանում, ջերմափոխիչ սարքեր և այլն): Արտադրական տեխնոլոգիաների ոչ պատշաճ կերպով պահպանումը, մանրածախ առևտրում լայն տարածում գտած ցածրարժեք և կասկածելի որակ ունեցող նմուշները, լուրջ սպառնալիք են «Հայկական կոնյակ» բրենդի վարկանիշի համար: Մյուս կողմից շատ կարևոր է նաև արտադրանքի որակի, դիզայնի և գների անհամապատասխանությունը դրսում գոյություն ունեցող չափորոշիչներին: Վերջին տասնամյակում Հայաստանում հատկապես գինեգործության ոլորտում լուրջ քայլեր են կատարվել շշերի, դրանց ձևավորման և կոնյակի ու գինու որակի ուղղությամբ: Այդուհանդերձ, լուրջ դժգոհություններ կան, որ հայկական գինու բազմաթիվ տեսակներ ոչ շատ երկար ժամանակ պահելուց հետո, շշում նստվածք է առաջանում, ինչը վկայում է արտադրանքի ցածր որակի և միջազգային չափորոշիչներին անհամապատասխանության մասին<sup>94</sup>:

Որակի վերահսկման և իսկության հավաստագրման համար անհրաժեշտ է ստեղծել փորձագիտական լաբորատորիա, որը կոնյակի որակի պարբերական ստուգումների իրականացման հիման վրա կշնորհի որակի տարբերանշաններ: Նման լաբորատորիայի գործու-

<sup>93</sup> ՀՀ կոնյակագործության ոլորտային ռազմավարություն, 2011-2020. Էջ 4

<sup>94</sup> Խաչատրյան Ա. ՀՀ ագրոպարենային արտադրանքի արտահանման և ներմուծման վիճակն ու հաջվեկշռի վերլուծությունը / «Ֆինանսներ և Էկոնոմիկա» հանդես. N 12, 2012, էջ 16

նե ու թյան արդյունավետության ապահովման համար ցանկալի է որևէ միջազգային հեղինակավոր օպերատորի ներգրավումը:

Առկա են նաև կոնյակի և գինու արտադրության համար խաղողի գնման հակասություններ: Այսպես, կոնյակի արտադրության համար գնվող խաղողի շաքարայնության մակարդակը պետք է կազմի 16-19%, իսկ գինու արտադրության համար՝ ոչ պակաս քան 21%: Գինու արտադրության համար պահանջվող շաքարայնության հասնելու համար անհրաժեշտ է խաղողի բերքահավաքը սկսել կոնյակի համար հավաքվող խաղողից 15-20 օր հետո, իսկ ավելի բարձր որակական հատկանիշներով (ոչ ցածր 23%-ից) կամ հատուկ գինիներ (ոչ ցածր 26%-ից) արտադրելու համար 25-35 օր հետո<sup>95</sup>: Բնականաբար, խաղողագործ տնտեսության ներքին շտապում են օր առաջ հավաքել իրենց բերքը՝ խաղողի մշակման տնտեսության կարիքների համար կուտակված ծախսերը փակելու, ինչպես նաև կարկուտի ռիսկից ապահովելու, գողություններից պահպանելու համար: Բացի այդ, փոքր քանակությամբ կոնյակի արտադրողները խաղող վաճառող բազմազար սուբյեկտների առկայությունը թույլ չի տալիս մթերող կազմակերպության ներքին իրականացնել հումքի դիֆերենցիացիան և ստանալ շաքարայնության աստիճանի: Այս առումով խնդիրը հնարավոր է լուծել կատարելագործելով խաղողի մթերման գործընթացների իրավապայմանագրային դաշտը, մասնավորապես՝ խաղողի մթերումն իրականացնելով տնտեսության ներքին հետնախորք կնքված պայմանագրերի հիման վրա, որտեղ նշված կլինեն խաղողի սորտն ու մթերման ժամկետները:

Հանրապետության դինամիկ զարգացող ճյուղերից մեկը ծխախոտագործությանն է: Վերջին տարիներին ծխախոտի արտահանման ծավալների ավելացումը վկայում է ոլորտի զարգացման ներուժի և արտադրության տեխնոլոգիաների արդիականացման մասին: Համաձայն ՀՀ մաքսային ծառայության տվյալների 2011թ.-ին արտահանվել է 16.3 մլն. դոլար մաքսային արժեքով ծխախոտային արտադրանք, 2012թ.-ին՝ 41.8 մլն. դոլարի, 2013թ.-ին՝ 68 մլն. դոլարի, իսկ 2014թ.-ին այդ ցուցանիշը կազմել է 116.6 մլն.

<sup>95</sup> «Գինեգործության զարգացման ուսումնասիրության ՀՀ Արարատի, Արագածոտնի, Արմավիրի և Կոտայքի մարզերում», ՀԳՏՏՀ, Երևան, 2010. Էջ 33

դուլար, այսինքն չորս տարվա ընթացքում արտահանման ծավալները ավելացել են մոտ 7 անգամ<sup>96</sup>: Ծխախոտագործության զարգացմանը զուգընթաց ավելացել է նաև ծխախոտի ցանքատարածությունը: Վերջինս 2010թ. համեմատությամբ, 2014թ. ավելացել է 22%-ով կամ 418 հա-ից հասել է 510 հա-ի<sup>97,98</sup>: Ներկայումս ծխախոտի մշակությունը գերազանցապես իրականացվում է Տավուշի, Արարատի և Արմավիրի մարզերում:

Ծխախոտագործությունը համարվում է բավականին շահութաբեր ճյուղ, ուստի այս առումով կարևորվում է ծխախոտի ցանքատարածությունների ընդլայնումը չմշակվող հողատարածությունների հաշվին: Ոլորտում առկա հիմնական խնդիրները վերաբերում են ոռոգման համակարգի անկատարությանը, սերմերի որակին: Առավել հեռանկարային է կաթիլային ոռոգման համակարգի ներդրումը, որն առանձնանում է իր արդյունավետությամբ: Նման ոռոգման համակարգի ներդրման համար ցանկալի է իրականացնել արտոնյալ վարկերի տրամադրում \$երմերներին՝ կառավարության կողմից տոկոսադրույքի 6-10% սուբսիդավորմամբ<sup>99</sup>:

ՀՀ գյուղատնտեսության կարևոր ոլորտներից է ձկնաբուծությունը, որի արտադրանքի արտահանման ծավալները վերջին տարիներին զգալիորեն աճել են: Եթե 2011թ.-ին հանրապետությանից արտահանվել է 726 տոննա թարմ և պաղեցված ձուկ՝ 5.6 մլն. դուլար մաքսային արժեքով, ապա 2014թ.-ին արտահանման ծավալը կազմել է 2274.6 տոննա՝ 16.5 մլն. դուլար մաքսային արժեքով (աղյուսակ 3.1.2):

Աղյուսակ 3.1.2

Ձկան արտադրության և արտահանման ծավալները ՀՀ-ում<sup>100</sup>

<sup>96</sup> «Արտաքին առևտրով ՀՀ-ից արտահանված առավել բարձր մաքսային արժեք ունեցող ապրանքներ», 2012-2014թթ., ՀՀ Մաքսային ծառայություն

<sup>97</sup> «Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները և համախառն բերքը 2010 թվականին», ՀՀ ԱՎԾ, Երևան, 2011

<sup>98</sup> «Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները և համախառն բերքը 2014 թվականին», ՀՀ ԱՎԾ, Երևան, 2015

<sup>99</sup> Ավետիսյան Ս. Հոսիանսիսյան Ա. Արտահանման կողմնորոշում ունեցող գյուղատնտեսական արտադրության հիմնախնդիրները և լուծման ուղիները. - «Այլընտրանք» գիտական հանդես, N1, 2016թ. Էջ 201

<sup>100</sup> Աղյուսակը կազմված է ՀՀ գյուղատնտեսության նախարարության և մաքսային ծառայության տվյալների հիման վրա

Ցուցանիշը	Չափի միավոր	Տարեթիվը			
		2011	2012	2013	2014
Արտադրություն, այդ թվում՝	տոննա	6,814	8,850	11,520	13,950
սաղմունի	տոննա	3,802	4,800	6,440	771
թառախ	տոննա	911	1,636	2,170	2,972
այլ	տոննա	2,101	2,414	2,910	3,265
Արտահանում	տոննա	726	1,663	2,193	2,275
Արտահանում (մաքսային արժեքով)	հազ. դոլար	5,628	13,048	16,826	16,502

Ներկայումս հանրապետությունում առկա են 250 ձկնաբուծական տնտեսություններ, որոնց մեծ մասը փոքր տնտեսություններ են՝ 3 հա միջին մակերեսով: Ընդ որում, այդ տնտեսությունների 76%-ը կենտրոնացված է Արարատի և Արմավիրի մարզերում<sup>101</sup>: Ձկնաբուծարաններն ունեն որոշակի խնդիրներ՝ կապված կերերի և մանրածկան ձեռքբերման, ինտենսիֆիկացման տարաբնույթ մեթոդների կիրառման, ապրանքային ձկան վերամշակման, արտադրանքի արտահանման հետ:

Ձկան արտադրության ծավալների ավելացումը հնարավոր է իրականացնել երկու ճանապարհով՝

- ձկնաբուծարանների արտադրական հզորությունների ընդլայնման՝ նոր ավազանների կառուցում և նոր ձկնաբուծարանների հիմնում,
- կամ առկա արտադրական տարածքների հիման վրա արտադրողականության ավելացման:

Հաշվի առնելով Արարատյան հարթավայրում ձկնաբուծարանների կենտրոնացվածության, ձկնաբուծարանների առկա արտադրական հզորությունների շահագործման, ինչպես նաև ջրային ռեսուրսների շահագործման բարձր աստիճանը այս տարածաշրջանում ձկան արտադրության ավելացման նպատակահարմար

<sup>101</sup> «Հայաստանի Հանրապետության ձկնաբուծության ոլորտի ուսումնասիրություն», ՀԳՏՏՀ, Երևան, 2011. Էջ 39



մոտեցումն է ձկան անեցման ինտենսիվության բարձրացումը, ինչը կհանգեցնի արտադրողականության աճի՝ միաժամանակ կրճատելով մեկ կիլոգրամ ձկան արտադրության համար ծախսվող բնական ռեսուրսները՝ ջուրը և հողը՝ նախատեսված ավազանների (արտադրական տարածքների) համար:

Ինդուստրիալ ինտենսիֆիկացված ձկնաբուծության դեպքում, 1 ք.մ.-ից հնարավոր է ստանալ 100 կգ ձուկ: Արարատյան հարթավայրում այդ ցուցանիշը տատանվում է 5-10 կգ-ի սահմաններում: Ընդ որում՝ առկա են որոշ խոշոր ձկնաբուծարաններ, որոնք, կիրառելով ձկան անեցման ինտենսիֆիկացման մեթոդները, ներկայումս ստանում են մեկ քառակուսի մետրից 20 կգ ապրանքային ձուկ<sup>102</sup>:

Այսպիսով, կիրառելով ձկան անեցման ինտենսիֆիկացման մեթոդներ, մասնավորապես՝ ջրում թթվածնի հարստացման, ջրի փակ շրջապտույտի ապահովման, կերակրման արդյունավետ ռացիոնի ընտրության, ջրի ջերմաստիճանի կարգավորման և այլ մեթոդների օպտիմալ համադրությունը, Արմավիրում և Արարատում տեղակայված ձկնաբուծարանները կարող են ավելացնել տարեկան արտադրության միջին ծավալները 2 անգամ:

Ինտենսիֆիկացմանը խոչընդոտող հիմնական գործոնը անհատ տնտեսությունների մոտ ֆինանսական ռեսուրսների անբավարար մակարդակն է: Այս հիմնախնդրի լուծման լավագույն տարբերակը կոոպերացիան է, ինչը հնարավորություն կտա փոքր տնտեսություններին միավորվել կամ համագործակցել խոշոր տնտեսությունների հետ, ինչն էլ կդյուրինացնի մանրածկան և համակցված կերերի ձեռքբերման, ապրանքային ձկան արտահանման գործընթացները: Բացի այդ, կարևորվում է համալիր ծրագրի իրականացումը՝ ուղղված մանրածկան, կերերի, կենտրոնացված մատակարարմանը, արտահանման գործընթացի դյուրինացմանը, ինչը հնարավորություն կընձեռի օպտիմալացնել ձկան արտադրության վրա կատարվող ծախսերը, ստանալ ավելի ցածր ինքնարժեքով արտադրանք՝ գինը դարձնելով մրցունակ միջազգային շուկաներում:

<sup>102</sup> «Հայաստանի Հանրապետության ձկնաբուծության ոլորտի ուսումնասիրություն», ՀԳՏՏՀ, Երևան, 2011. Էջ 87-88

Վերջին տարիներին բանջարեղենի և արմատապտուղների արտահանման ծավալների աճը վկայում է այս ճյուղի հեռանկարային լինելու մասին: Հատկապես հետաքրքրություն են ներկայացնում ջերմոցային տնտեսությունները, որոնք հնարավորություն են տալիս բուսական արտադրանք ստանալ ամբողջ տարվա ընթացքում, բնակլիմայական պայմանների հետկապված նվազագույն ռիսկերով, միավոր տարածքից ստանալ կայուն և երաշխավորված բարձր բերք՝ ապահովելով ավելի բարձր եկամտաբերություն, որը ՀՀ նման սակավահող երկրի համար ունի կարևոր նշանակություն և կարող է դառնալ գյուղատնտեսության զարգացման ռազմավարական նշանակություն ունեցող ճյուղերից մեկը: 2014թ.-ին հանրապետության տարածքում շահագործվող ջերմոցային տնտեսությունների մակերեսը կազմել է 640 հա, իսկ 2015թ.-ին՝ 763.6 հա<sup>103</sup>: ՀՀ-ում գործող ջերմոցային տնտեսությունների մոտ 60%-ը մասնագիտացած է բանջարեղենի (մասնավորապես՝ լոլիկ, վարունգ, տաքդեղ և այլն) արտադրության մեջ, իսկ 40%-ը՝ ծաղիկների<sup>104</sup>:

Այսօր նոր ջերմատների հիմնումն ու շահագործումը բավականին մեծ ներդրումներ է պահանջում, որի հնարավորությունները գյուղացիական տնտեսությունների մեծ մասը չունեն: Այս առումով կարող է դրական լինել Ռուսաստանի փորձի կիրառումը, որտեղ մեծ քանակությամբ վարկային միջոցներ են տրամադրվում ջերմոցային տնտեսությունների զարգացման ծրագրերի համար՝ կառավարության կողմից տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորմամբ:

Ջերմոցային տնտեսությունների առջև ծառայած ամենամեծ խնդիրը էներգակիրների, մասնավորապես՝ գազի բարձր սակագներն են, որոնք խիստ բացասաբար են անդրադառնում արտադրանքի ինքնարժեքի վրա: ՀՀ-ում գազի ցածր սակագնի արտոնությունից կարող են օգտվել այն տնտեսությունները, որոնք անցնում են ամսական 10 հազար խ.մ. գազի ծախսի շեմը: Ջերմատների մեծ մասն ունի 1000 ք.մ.-ից փոքր մակերես, որոնց դեպքում գազի ծախսը չի անցնում այդ շեմը: Մեր կարծիքով, ջերմոցային տնտեսություններ-

<sup>103</sup> [www.minagro.am](http://www.minagro.am)

<sup>104</sup> ՀՀ-ում առկա ջերմոցային տնտեսությունների մասին հաշվետվություն. «ԵՐԵՔ ԱՐ ՍՏՐԱՏԵԳԻԱ» ՍՊԸ – Երևան, 2012. Էջ 8

րի համար պետք է գործի գազի հատուկ սակագին կամ պետք է իջեցվի 10 հազար խ.մ.-ի շեմը, ինչը հնարավորություն կընձեռի ստանալ ցածր ինքնարժեքով արտադրանք:

Ամփոփելով, կարող ենք նշել, որ այսօր Հայաստանի Հանրապետությունն ունի գյուղատնտեսական արտադրանքի և դրավերամշակման արդյունքում ստացվող ապրանքների արտահանման ծավալների ավելացման զգալի արտենցիալ: Այսօր գյուղատնտեսության բնագավառում մեր հիմնարար խնդիրը կայանում է նրանում, որ արտադրությունից մինչև իրացում շղթան կառուցված չէ: Եվ պետության աջակցությունը մշտապես ուղղված է եղել փոքր գյուղացիական տնտեսություններին, ինչը ցուցադրել է իր ոչ արդյունավետի ինելը<sup>105</sup>:

Արտահանումը խրախուսելու պետական աջակցությունը պետք է ուղղված լինի՝

- արտահանման նոր շուկաների բացահայտում, այդ շուկաների ուսումնասիրություն և արտադրողներին տեղեկատվության տրամադրում,
- արտերկրում կազմակերպվող ցուցահանդեսներին մասնակցության ծախսերի մասնակի փոխհատուցում,
- այլ երկրների հետ համաձայնագրերի կնքում՝ ուղղված ապրանքաշրջանառության ծավալների ավելացմանը,
- գիտահետազոտական աջխատանքների ֆինանսավորում, որոնք կարող են օգտագործվել արտահանվող արտադրանքի մրցունակության բարձրացման համար,
- որակի և անվտանգության վերահսկողության համակարգի ներդրման ծախսերի համաֆինանսավորում,
- ապրանքների արտահանման վարչական խոչընդոտների վերացում,
- արտահանման կողմնորոշում ունեցող հայրենական արտադրանքի արտադրական ներուժի, ձեռնարկությունների գիտական հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվության տարածում:

<sup>105</sup> Խաչատրյան Ա. Գյուղատնտեսական մթերքների արտադրության և արտահանման վիճակն ու բարելավման հնարավոր ուղիները ՀՀ-ում / «Ֆինանսներ և Էկոնոմիկա» հանդես. N 1-2, 2015, էջ 99

### **3.2. ՀՀ ագրարային ոլորտում ներդրումային միջավայրի բարելավման ֆինանսավարկային մեխանիզմների կատարելագործում**

Ներկայումս ագրարային ոլորտում իրականացվող ներդրումային քաղաքականությունն ունի մի շարք թերություններ, որոնք գլխավորապես պայմանավորված են գյուղատնտեսության զարգացման ռազմավարության շրջանակներում ներդրումային գործընթացի համալիր մոդելի բացակայությամբ:

Տեսական առումով դեռևս վիճելի է պետության կողմից ագրարային ոլորտի ներդրումային աջակցության սահմանների հարցը: Որոշ տնտեսագետների կարծիքով, առաջնային պետք է լինի սեփականության բազմաձևության հիմքի վրա ներդրումային գործընթացի աստիճանական ապակետորոնացումը, կազմակերպությունների սեփական միջոցների դերի բարձրացումը, անհատույց բյուջետային ֆինանսավորումից անցումը վերադարձելիության և վճարելիության սկզբունքով վարկավորմանը, բյուջետային ֆինանսավորման իրականացմանը գերազանցապես սոցիալական նշանակություն ունեցող ոլորտներում<sup>106</sup>:

Մյուս տեսակետը հիմնվում է շուկայական հարաբերությունների դանդաղ կազմավորման վրա: Համաձայն այս տեսության, պետությունը պարտավոր է կարգավորիչ ներգործություն իրականացնել ներդրումային գործընթացի վրա՝ գիտականորեն հիմնավորված գնագոյացման ապահովման, նպատակային պետական ֆինանսավորման, կապիտալ ներդրումների ինդիկատիվ պլանների մշակման, լիզինգային գործառնությունների ընդլայնման միջոցով<sup>107</sup>:

Անկախացումից հետո ՀՀ-ում գյուղատնտեսության պետական ֆինանսավորումը բազմիցս կրճատվել է: Տնտեսագետների մի մասը


<sup>106</sup> Постановление Правительства РФ от 26.02.99 № 228 О лизинге машиностроительной продукции в АПК РФ с использованием средств федерального бюджета//Российская газета. - 1999. - 16 марта. - № 49

<sup>107</sup> Закон СК от 30.12.97 № 56-3 О краевом бюджете СК на 1998 г.

դա որակում է որպես դրական երևույթ, որը վկայում է ներդրումների շուկայական կառուցվածքի ձևավորման մասին, որտեղ ներդրումների հիմնական աղբյուր է հանդիսանում մասնավոր հատվածը: Մինչդեռ տնտեսագետների մյուս խումբը գտնում է, որ նման երևույթը ոչ մի դեպքում դրական որակել չի կարելի, քանի որ այն վկայում է պետության սնանկության մասին:

Մեր կարծիքով, ագրարային ոլորտում ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված պետական աջակցությունը ոչ միայն ցանկալի է, այլև անհրաժեշտություն, քանի որ ՀՀ-ը հանդիսանում է անցումային տնտեսություն ունեցող երկիր և շուկայական մեխանիզմները լիարժեքորեն չեն գործում: Պետական քաղաքականությունը գլխավորապես պետք է ուղղված լինի ֆինանսավարկային մեխանիզմների կատարելագործմանը:

Ներդրումների հիմնական աղբյուրներից են հանդիսանում բանկային վարկերը: Բանկերի կողմից գյուղատնտեսության վարկավորումն իրականացվում է ինչպես սեփական միջոցներով, այնպես էլ տարբեր միջազգային ֆինանսական կազմակերպությունների և պետական ծրագրերի շրջանակներում պետության կողմից տրամադրվող ֆինանսական ռեսուրսներով:




Գծապատկեր 3.2.1. Առևտրային բանկերի կողմից

գյուղատնտեսության վարկավորման ծավալները  
(2000-2014թթ.)<sup>108</sup>

Ինչպես երևում է գծապատկեր 3.2.1-ից 2000-2005թթ. ընթացքում առևտրային բանկերի կողմից գյուղատնտեսության վարկավորման ծավալները գրեթե միևնույն մակարդակի վրա են գտնվել՝ կազմելով 7-11 մլրդ. ՀՀ դրամ: 2005թ.-ից սկսած վարկավորման ծավալները սկսել են արագ աճել՝ 2014թ.-ին հասնելով գրեթե 150.1 մլրդ. դրամի: Այս աճը հիմնականում պայմանավորված է եղել 2005-2008թթ. արձանագրված բարձր տնտեսական աճով, բանկային համակարգի զարգացմամբ և պետության կողմից գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման ծրագրի իրականացմամբ:

Հարկ է նշել, որ առևտրային բանկերի կողմից գյուղատնտեսության վարկավորումը ուսումնասիրվող ողջ ժամանակահատվածի համար գերազանցապես իրականացվել է արտարժույթով: Արտարժույթով վարկավորման ծավալների մեծ մասնաբաժինը պայմանավորված է երկու հանգամանքով՝ ազգային արժույթի արժեզրկման բարձր տեմպերով և արտարժույթով տրամադրվող վարկերի համեմատաբար մատչելի տոկոսադրույքով:



<sup>108</sup> Գծապատկերը կառուցված է ՀՀ Կենտրոնական բանկի 2000-2014 թվականների տարեկան տեղեկագրերի հիման վրա


Գծապատկեր 3.2.2. Առևտրային բանկերի կողմից

գյուղատնտեսության վարկավորման ծավալները՝  
ըստ արժույթի (2000-2014թթ)<sup>109</sup>

Ինչպես երևում է գծապատկեր 3.2.2-ից, մինչև 2008թ.-ը դրամով և արտարժույթով վարկավորման ծավալների միջև խզումը բավականին փոքր է եղել: Այդ խզումը էապես մեծացել է 2009-2010 և 2014 թվականների ընթացքում, որը գլխավորապես պայմանավորված է եղել 2009թ.-ի սկզբին դրամի՝ 20% և 2014թ.-ի վերջին՝ շուրջ 15% արժեզրկմամբ: Գյուղացիական տնտեսության ներկայացուցիչների համար, որոնց եկամտի աղբյուրը դրամն է, արտարժույթով վարկերը զգալի ռիսկ են պարունակում: Հատկապես միջնաժամկետ և երկարաժամկետ վարկերի դեպքում արտարժույթի փոխարժեքի տատանումը և ՀՀ դրամի արժեզրկումը կարող են կործանարար ազդեցություն ունենալ՝ հանգեցնելով անվճարունակության:

Ըստ Կենտրոնական բանկի տվյալների, գյուղատնտեսական ոլորտին տրամադրված վարկերի ընդհանուր գումարը 2014թ. վերջի դրությամբ կազմել է ֆինանսական կառույցների կողմից տրամադրված վարկային պորտֆելի 8.5%-ը: 2011, 2012 և 2013 թվականների տարեվերջի դրությամբ գյուղատնտեսությանը տրամադրված վարկերի տեսակարար կշիռները համապատասխանաբար կազմել են՝ 7.3, 7.5 և 8.1 տոկոս (գծապատկեր 3.2.3):

<sup>109</sup> Գծապատկերը կառուցված է ՀՀ Կենտրոնական բանկի 2000-2014 թվականների տարեկան տեղեկագրերի հիման վրա



Գծապատկեր 3.2.3. Առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ընդամենը տրամադրված վարկերի և գյուղատնտեսության ոլորտում տրամադրված վարկերի ծավալները 2011-2014 թվականներին<sup>110</sup>

Գծապատկեր 3.2.3-ից երևում է, որ 2011-2014թթ. ընթացքում գյուղատնտեսության վարկավորման թե բացարձակ ծավալը և թե ընդհանուր վարկավորման մեջ ունեցած տեսակարար կշիռը աճ են արձանագրել: Դա բացատրվում է ՀՀ կառավարության կողմից «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագրի ու ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարության իրագործմամբ:

Այնուամենայնիվ, գյուղատնտեսության ոլորտի վարկավորման ծավալները շարունակում են մնալ ցածր մակարդակի վրա, ուստի, պետական քաղաքականությունը մի կողմից պետք է ուղղված լինի բանկային համակարգում գյուղատնտեսական վարկավորման տեսակարար կշռի բարձրացմանը, մյուս կողմից՝ ոլորտին տրամադրվող վարկերի մեջ արտարժույթով վարկերի մասնաբաժնի կրճատմանը:

Այս առումով անհրաժեշտ է.

<sup>110</sup> Գծապատկերը կառուցված է ՀՀ Կենտրոնական բանկի «Առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների վարկերն ըստ ոլորտների (ամսական)» հաշվետվության հիման վրա



- առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների համար բարձրացնել ազգային արժույթով գյուղատնտեսական վարկավորման գրավչությունը՝ այդ նպատակով նրանց տրամադրելով արտարժույթային փոխարժեքների մեղմման և ապահովագրական մեխանիզմներ, որը հնարավորություն կտա նվազեցնել վարկերի չվերադարձման և արտարժույթային ռիսկերը,
- գյուղատնտեսության վարկավորման ծավալների ավելացման նպատակով առևտրային բանկերին և վարկային կազմակերպություններին տրամադրել էժան և երկարաժամկետ ֆինանսական միջոցներ: Նման ֆինանսական ռեսուրսների աղբյուրներ կարող են հանդես գալ միջազգային կառույցներից ստացվող էժան վարկերն ու դրամաշնորհները: Ընդ որում, հարկ է ապահովել շահագրգռված վարկատու կազմակերպությունների անխոչընդոտ մասնակցությունը գյուղատնտեսական վարկավորմանը առնչվող միջազգային ծրագրերին: Սա հնարավորություն կընձեռն նվազեցնել ագրարային ոլորտում գործող տնտեսավարողներին տրամադրվող վարկերի տոկոսադրույքները: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է ապահովել այդ միջոցների օգտագործման նպատակայնության և արդյունավետության մոնիտորինգի իրականացում: Պետք է պարտադրել վարկատու կազմակերպություններին որպես գրավ օգտագործել ոչ թե վարկառուների գույքը, այլ սպասվելիք համախառն արտադրանքը:
- շարունակել «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագիրը, բարձրացնել սահմանամերձ համայնքներին տրամադրվող վարկերի սուբսիդավորման մակարդակը: Ներկայումս այս ծրագրով վարկերը տրամադրվում են ընդամենը 2 տարի ժամկետով, ինչը հնարավորություն չի ընձեռնում տնտեսավարողներին իրականացնել կապիտալ ներդրումներ: Անհրաժեշտ է սահմանել նման վարկավորման ավելի մեծ

ժամկետ, ինչպես նաև, կախված վարկավորման ուղղությամբ, երկարաձգել նաև արտոնյալ ժամկետը:

- հաշվի առնելով գյուղատնտեսական արտադրության սեզոնայնությունը՝ վարկերի մարման ժամանակացույցը համապատասխանեցնել վարկառուների եկամուտների գոյացման ժամկետներին:
- վարկային պայմանագրում պարտադիր կերպով արտացոլել վարկի փաստացի տոկոսադրույքը: «Սպառողական կրեդիտավորման մասին» օրենքը պարտադրում է վարկային պայմանագրում արտացոլել փաստացի տոկոսադրույքը, մինչդեռ գյուղատնտեսական վարկավորման պարագայում նման պարտադրանք չկա: Առևտրային բանկերն ու վարկային կազմակերպությունները, օգտվելով այս հանգամանքից, ֆերմերներին չեն տեղեկացնում փաստացի տոկոսադրույքի մասին, ինչի հետևանքով ֆերմերները ստիպված են լինում հետագայում վճարել աստղաբաշխական գումարներ: Մինչդեռ օրենսդրական մակարդակով փաստացի տոկոսադրույքի արտացոլումը պարտադրելը կստիպի ֆինանսական կառույցներին ավելի թափանցիկ գործել: Այս առումով կարևորվում է նաև գյուղական շրջաններում ֆինանսական գրագիտության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացումը:
- ՀՀ Կենտրոնական բանկի և այլ շահագրգիռ մարմինների հետ համատեղ միջոցառումներ մշակել՝ ուղղված գյուղատնտեսական վարկավորմամբ զբաղվող մասնագիտական կառույցի ձևավորմանը, որը հնարավորություն կտա առևտրային բանկերի հետ զուգահեռ իրականացնել գյուղատնտեսության վարկավորումը՝ նպաստելով մրցակցության բարձրացմանը և վարկային պրոդուկտների վերջնական գնի նվազմանը:
- կարևորել ֆինանսական լիզինգի՝ որպես գյուղատնտեսական տեխնիկա ձեռքբերելու հիմնական եղանակի դերը: Այստեղ կարող է դրական լինել ռուսական փորձի ուսումնասիրությունը: Մասնավորապես՝ ՌԴ-ում

գործող «Ռոսագրոլ իզինգ» ԲԲԸ-ը իրականացնում է մատչելի տոկոսադրույքով և իզինգի տրամադրում: Գյուղատնտեսական իզինգի տոկոսադրույքը կազմում է ընդամենը 3.5%<sup>111</sup>:

Գյուղատնտեսական վարկերի բարձր տոկոսադրույքների հիմնական պատճառներից մեկը գյուղատնտեսական ապահովագրական համակարգի բացակայությունն է: Ինչպես հայտնի է, ի տարբերություն տնտեսության մյուս ճյուղերի, գյուղատնտեսությանը հանդիսանում է բարձր ռիսկային ճյուղ, ինչը պայմանավորված է բնակլիմայական պայմաններից կախվածությամբ: Այդ կախվածությունը զգալիորեն մեծ է բուսաբուծության ճյուղում, որտեղ վերջնական արտադրանքի ծավալները կարող են էապես տատանվել՝ կախված եղանակային պայմանների փոփոխությունից, կարկտահարությունից, բույսերի վնասատուներից և այլ բնական աղետներից:

Այն հայտ է, որ առանց պետական միջամտության և ակտիվ քաղաքականության անհնար է ագրարային ոլորտում ապահովագրական համակարգի ձևավորումը և կայացումը: Ուստի, կարևորվում է պետական աջակցությամբ ապահովագրական համակարգի ներդրումը, որը հիմք կհանդիսանա վարկային միջոցների տոկոսադրույքների նվազեցման և ոլորտի ներդրումային միջավայրի բարելավման համար: Այս առումով անհրաժեշտ է՝

- նախևառաջ իրականացնել ոլորտում առկա ռիսկերի գնահատում և դրա հիման վրա մշակել ապահովագրավճարների հաշվարկման մեխանիզմներ, այս ոլորտում ուսումնասիրել միջազգային փորձը,
- գյուղատնտեսության համատարած հաշվառման արդյունքների հիման վրա ձևավորել տվյալների բազա,
- ընդունել ագրարային ոլորտում ապահովագրական համակարգը կանոնակարգող օրենքներ, կատարել համապատասխան օրենսդրական փոփոխություններ և լրացումներ,

<sup>111</sup> [www.rosagroleasing.ru](http://www.rosagroleasing.ru)

- ՀՀ կառավարության միջնաժամկետ ծախսերի ծրագրում ներառել գյուղատնտեսական ապահովագրության պետական մասնակցության մեթոդաբանություն,
- մշակել և իրականացնել գյուղատնտեսական ապահովագրության պիլոտային ծրագիր:

Գյուղատնտեսության զարգացման և ոլորտի ներդրումային միջավայրի բարելավման տեսանկյունից կարևորվում է գյուղատնտեսական արտադրանքի երաշխավորված գների կիրառումը, ինչը հնարավորություն կընձեռի բարձրացնել ոչ միայն եկամուտների մակարդակը, այլ նաև ոլորտի գրավչությունը: Երաշխավորված գին անհրաժեշտ է սահմանել այն գյուղատնտեսական արտադրանքների համար, որոնց ինքնաբավության մակարդակը ցածր է: Երաշխավորված գները ամեն տարի պետք է ճշգրտվեն՝ հաշվի առնելով գնաճի տեմպերը: Տարվա ընթացքում \$երմերային տնտեսությունները ազատ են իրացնելու իրենց արտադրանքը շուկայական գնով, որը կարող է ցածր, բարձր կամ հավասար լինել երաշխավորված գնին: Երաշխավորված գնից ավելի ցածր գնով արտադրանքի իրացման դեպքում, գյուղացիական տնտեսությունները պետությունից կստանան հավելավճար այդ երկու գների տարբերության չափով:

Շուկայում գյուղատնտեսական արտադրանքի առաջարկն ու պահանջարկը և գնային կարգավորումը կարելի է իրականացնել ապրանքային ինտերվենցիաների և ինտերվենցիոն գնումների միջոցով:

Պետական ինտերվենցիոն գնումները հարկ է իրականացնել գյուղատնտեսական արտադրանքի և հումքի գների կարգավորման և գյուղատնտեսական ապրանքարտադրողների եկամուտների աջակցության նպատակով: Պետական ինտերվենցիոն գնումներն իրականացվում են, երբ իրացվող գյուղատնտեսական արտադրանքների գներն իջնում են սահմանված նվազագույն մակարդակից:

Ապրանքային ինտերվենցիաներն իրականացվում են պետության կողմից գնված ապրանքների վաճառքի միջոցով, երբ իրացվող գյուղատնտեսական արտադրանքի գները գերազանցում են

սահմանված առավելագույն մակարդակը: Գյուղատնտեսական արտադրանքների նվազագույն և առավելագույն գները սահմանվում են պետական իշխանության մարմինների կողմից: Գնային կարգավորումը պետք է իրականացվի նաև մաքսային քաղաքականության միջոցով:

Ներդրումային միջավայրի բարելավման մեխանիզմներում կարևորվում է հարկային քաղաքականության կատարելագործումը: Յարկ է նշել, որ ներկայումս ՀՀ գյուղատնտեսության ոլորտում վարվում է բավականին մեղմ հարկային քաղաքականություն: Գործում են միջարք օրենքներ, որոնք որոշակի արտոնություններ են տրամադրում ոլորտում գործող կազմակերպություններին:

2001թ.-ին ընդունված և հետագայում որոշակի փոփոխությունների ենթարկված՝ «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնց ներմուծումն ազատված է ավելացված արժեքի հարկից» ՀՀ օրենքով նախատեսվում է ԱԱՀ-ից ազատել գյուղատնտեսության ոլորտում օգտագործվող ռեսուրսների, գյուղատնտեսական կենդանիների, մշակաբույսերի սերմացուների, տնկանյութերի, թունաքիմիկատների, պարարտանյութերի, ջերմոցների ներմուծումը<sup>112</sup>: Միևնույն ժամանակ, «Ավելացված արժեքի մասին» ՀՀ օրենքը սահմանում է նույնանուն ապրանքների ներքին շրջանառության ազատումը ԱԱՀ-ից<sup>113</sup>:

ՀՀ կառավարության 2015թ. «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումները, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերը, հումքը և նյութերը ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնության կիրառման համար անհրաժեշտ պայմանները հաստատելու և լիազորմարմին ճանաչելու մասին» որոշման ներդրումային նպատակով ներմուծվող և ներդրումային նախագծի տեխնիկական չափանիշներին համապատասխանող

<sup>112</sup> ՀՀ օրենքը «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնց ներմուծումն ազատված է ավելացված արժեքի հարկից» ընդունված 29.06.2001

<sup>113</sup> ՀՀ օրենքը «Ավելացված արժեքի հարկի մասին» ընդունված 14.05.1997

սարքավորումները, դրանց մասերը, ինչպես նաև հուլմքն ու այլ նյութերը ազատվում են մաքսատուրքից: Մաքսատուրքի այս արտոնութայնությանից օգտվելու համար ձեռնարկատերը կառավարութայնության պետք է ներկայացնի հայտ, որում պետք է ներառվեն ներդրումային ծրագիրը, տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ և համալրող մասերի, հուլմքի և նյութերի ցանկը, ծրագրով նախատեսվող արտադրվելիք արտադրանքի ծավալները, ներդրումային ծրագրի իրականացման արդյունքում ստեղծվող նոր աշխատատեղերը և միջին աշխատավարձը:

Բացի այս արտոնութայնությունները, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքով նախատեսվում է ներդրումային ծրագրերի շրջանակներում ներմուծվող ապրանքների գծով ԱԱՀ-ի վճարման ժամկետի հետաձգում՝

1. հայտարարագրման օրվանից մեկ տարի ժամկետով, եթե ներմուծված ապրանքների մաքսային արժեքը պակաս է 70 մլն. դրամից,
2. հայտարարագրման օրվանից երկու տարի ժամկետով, եթե ներմուծված ապրանքների մաքսային արժեքը կազմում է 70 մլն. դրամից,
3. հայտարարագրման օրվանից երեք տարի ժամկետով, եթե ներմուծված ապրանքների մաքսային արժեքը գերազանցում է 300 մլն. դրամը:

Այնուամենայնիվ, գտնում ենք, որ հարկային արտոնութայնությունները որոշակի վերանայման կարիք ունեն: Ներկայումս ԱԱՀ արտոնութայնությանից օգտվում են բոլոր գյուղատնտեսական արտադրանք արտադրողները: Մեր կարծիքով, հարկավոր է այս արտոնութայնությունը տրամադրել միայն գերփոքր և փոքր արտադրողներին: Իսկ գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող միջին և խոշոր ձեռնարկատիրական սուբյեկտներին տեղափոխել համապատասխանաբար՝ շրջանառության հարկի և ԱԱՀ-ի համակարգ: Այսպիսով, ԱԱՀ-ի արտոնութայնությանից կօգտվեն սոցիալապես անապահով խմբերը: Արտոնութայնության ստացող ձեռնարկությունների շրջանակի կրճատման արդյունքում ստացվող լրացուցիչ հարկային մուտքերը ցանկալի է ուղղել հասցեական

ձևով տրամադրվող սուբսիդիաների ծավալի մեծացմանը՝ դրանով իսկ պետության աջակցությունը դարձնելով առավել թիրախային և արդյունավետ:

Հարկ է նշել, որ հարկային քաղաքականության բացասական կողմերից մեկը հարկային օրենսդրությունում կատարվող հաճախակի փոփոխություններն են: Հարկ վճարողների և ներդրողների համար կանխատեսելի հարկային միջավայր ձևավորելու նպատակով հարկային օրենսդրությունը պետք է լինի կայուն, չպետք է կատարվեն հաճախակի փոփոխություններ, իսկ այդուհանդերձ կատարվող փոփոխություններն ու լրացումները կիրառվեն ընդունումից ուղղակի ժամանակ անց:

### **3.3. Ազրարային ոլորտում նորամուծական գործունեության խթանում**

Ներկայումս ազրարային ոլորտի կազմակերպությունների գերակշիռ մասը գտնվում է բավականին բարդ ֆինանսատնտեսական դրության մեջ: Ոլորտում դեռևս ամբողջովին չի հաղթահարվել վնասաբերությունը, արտադրանքի ինքնարժեքը նախկինի պես շարունակում է բարձր մնալ, մեծ է ժամկետանց կրեդիտորական պարտքերի մասնաբաժինը: Բարձր է արտադրության միջոցների մաշվածության աստիճանը, իսկ դրանց նորացման հնարավորությունները բացակայում են: Ճյուղում մեծամասամբ կիրառվում են հնացած տեխնոլոգիաներ, մշակաբույսերի ցածր բերքատու տեսակներ և գյուղատնտեսական կենդանիների ցածր մթերատու ցեղատեսակներ, արտադրության կազմակերպման և կառավարման անարդյունավետ մեթոդներ:

Բավականին ցածր է նորամուծական գործունեության ակտիվությունը ազրարային ոլորտում, ինչը բացատրվում է նորամուծական գործունեության խթանման արդյունավետ մեխանիզմների, շուկայական տնտեսությանը համապատասխանող գիտատեխնիկական համակարգի բացակայությամբ: Սահանգեցնում է գյուղատնտեսական արտադրանքի ինքնարժեքի բարձրացմանը և մրցունակության նվազմանը, խոչընդոտում է գյուղական տարածքների սոցիալ-տնտեսական զարգացմանը:

Նորամուծական գործունեությունը ագրարային ոլորտում նշանակում է նոր տեխնոլոգիաների, նոր տեխնիկայի, մշակաբույսերի նոր սորտերի, կենդանիների նոր ցեղատեսակների, նոր պարարտանյութերի և բույսերի պաշտպանության միջոցների, նոր բուժանյութերի, արտադրության կազմակերպման, ֆինանսավորման և վարկավորման նոր մեթոդների կիրառում<sup>114</sup>: Ագրարային ոլորտում նորամուծական գործունեության հիմնական ուղղությունները ներկայացված են աղյուսակ 3.3.1-ում:

---

<sup>114</sup> Шайтан Б. И. Инновации в АПК и роль службы сельскохозяйственного консультирования// Материалы Международной научно-практической конференции «Инновационная деятельность в АПК: опыт и проблемы» (13–14 января 2005 г.). – М., 2005. с. 207



Ագրարային ոլորտում նորամուծական գործունեության  
հիմնական ուղղությունները<sup>115</sup>

Նորամուծության ուղղությունը	Նորամուծության տեսակը
1	2
Սելեկցիոն-գենետիկական	<ol style="list-style-type: none"> <li>1. Գյուղատնտեսական մշակաբույսերի նոր սորտեր և հիբրիդներ</li> <li>2. Գյուղատնտեսական կենդանիների և թռչունների նոր ցեղատեսակներ</li> <li>3. Հիվանդությունների, վնասատուների, անբարենպաստ կլիմայական պայմանների նկատմամբ կայուն բուսատեսակների և կենդանիների ստացում</li> </ol>
Տեխնոլոգիական և արտադրական	<ol style="list-style-type: none"> <li>1. Նոր տեխնիկայի կիրառում</li> <li>2. Գյուղատնտեսական մշակաբույսերի աճեցման նոր տեխնոլոգիաներ</li> <li>3. Պարարտանյութերի նոր տեսակներ</li> <li>4. Բույսերի պաշտպանություն նոր միջոցներ</li> <li>5. Մթերքի արտադրության և պահպանման նոր էներգափնայող տեխնոլոգիաներ</li> </ol>
Կազմակերպատնտեսական	<ol style="list-style-type: none"> <li>1. Կոոպերացիայի զարգացում</li> <li>2. Տեխնիկական սպասարկման և ռեսուրսներով ապահովման նոր ձևեր</li> <li>3. Ագրոպարենային համալիրում կազմակերպման և կառավարման նոր ձևեր</li> <li>4. Նորամուծությունների մարքեթինգ</li> <li>5. Նորամուծական խորհրդատվական համակարգի ստեղծում</li> </ol>


<sup>115</sup> Иванов В. А. Методологические основы инновационного развития агропромышленного комплекса // Экономические и социальные перемены: факты, тенденции, прогноз. – 2008. – № 2 (2). – с. 55.

Աղյուսակ 3.3.1-ի շարունակությունը

1	2
Սոցիալական	<ol style="list-style-type: none"> <li>1. Գիտատեխնիկական ապահովման կադրային համակարգի ձևավորում</li> <li>2. Ագրարային ոլորտի աշխատողների աշխատանքային պայմանների բարելավում</li> <li>3. Ագրոտուրիզմի զարգացում</li> </ol>
Տեղեկատվական	<ol style="list-style-type: none"> <li>1. Գյուղատնտեսական արտադրության գործընթացների համակարգչայնացում</li> <li>2. Գյուղական տարածքներում համացանցի հասանելիություն</li> </ol>
Բնապահպանական	<ol style="list-style-type: none"> <li>1. Հողօգտագործման բարելավում</li> <li>2. Ծրջակամիջավայրի պահպանություն</li> </ol>

Հարկ է նշել, որ նորամուծական գործունեությունը խոչընդոտող հիմնական գործոններն են ֆինանսական ռեսուրսների անբավարարությունը, նորամուծությունների թանկությունը և բարձր տնտեսական ռիսկը: Դրությունը վատթարացնում են տեխնոլոգիական և տեխնիկական նորամուծությունների օգտագործման խթանման համակարգի բացակայությունը, հարկային և ֆինանսավարկային համակարգի անկատարությունը: ՀՀ ագրարային ոլորտի ինովացիոն զարգացման վրա ազդող գործոնները ներկայացված են գծապատկեր 3.3.1-ում:

Ագրարային ոլորտում պետական քաղաքականությունը պետք է ուղղված լինի նորամուծական գործունեության խթանմանը, ինչը կբարձրացնի ոլորտի գրավչությունը, կնպաստի ներդրումների խթանմանը, և վերջնական առումով՝ տնտեսական զարգացմանը: Ագրարային ոլորտում նորամուծական գործունեության խթանման պետական համակարգի ձևավորման անհրաժեշտությունը գլխավորապես պայմանավորված է նրանով, որ գյուղատնտեսական կազմակերպություններում նորամուծությունների ներդրումը կրում է պասիվ բնույթ՝ պայմանավորված այն հանգամանքով, որ գիտական նորույթների ստեղծումը կատարվում է ոլորտից դուրս:



Նորամուծական գործունեության պետական խթանման համակարգի հիմնական մեթոդներն են՝

- ուղղակի պետական խթանում, որը ենթադրում է բյուջետային և արտաբյուջետային ֆինանսական ռեսուրսների բաշխման միջոցով նորամուծական ենթակառուցվածքների ձևավորում,

- անուղղակի պետական խթանում, որն իրականացվում է պետության հարկային, արտոնագրային, ապահովագրական, արտոնյալ վարկավորման քաղաքականության միջոցով<sup>116</sup>:

Ուղղակի մեթոդները անմիջականորեն խթանում են գիտական նվաճումների, նորամուծական ծառայությունների առաջարկը, իսկ անուղղակի մեթոդները՝ դրանց նկատմամբ պահանջարկը:

Հիմնվելով զարգացած շուկայական տնտեսությունն ունեցող երկրների փորձի վրա՝ կարելի է նշել, որ նորամուծական գործունեության խթանումը պետության կողմից գլխավորապես իրականացվում է անուղղակի մեթոդների միջոցով<sup>117</sup>: Մինդելիի կարծիքով, պետական աջակցության անուղղակի մեթոդների առավելությունը կայանում է նրանում, որ նորամուծությունների խթանման միջնորդավորված համակարգը ուղղակի ֆինանսավորման համեմատ նվազ ծախսատար է և մինչև ոչ ժամանակ հնարավորություն է ընձեռում ընդգրկել նորամուծական գործունեությունն իրականացնող սուբյեկտների ավելի լայն շրջանակ<sup>118</sup>:

Նորամուծական գործունեության խթանման անուղղակի մեթոդներից կարևորագույնը, մեր կարծիքով, իրենց արտադրատնտեսական գործունեությունում նորամուծական տեխնոլոգիաներ կիրառող ձեռնարկությունների և նորամուծությունների մշակմամբ զբաղվող կազմակերպությունների արտոնյալ վարկավորումն է:

Ագրարային ոլորտում նորամուծական գործունեության խթանման անուղղակի համակարգը ներկայացված է գծապատկեր 3.3.2-ում:

<sup>116</sup> Дохолян С. В., Умавов Ю. Д. Инновационные подходы к повышению эффективности использования ресурсного потенциала агропромышленного комплекса // Ежеквартальный научно-практический журнал Проблемы развития АПК региона. – 2011. – № 4 (8). – С. 73–74.

<sup>117</sup> Кулагин А. С., Леонтьев Л. И. О стимулировании инновационной деятельности, «Недвижимость и инвестиции. Правовое регулирование». – 2002. – № 1 (10).

<sup>118</sup> Основы инновационного менеджмента: теория и практика: учеб. пособие / Под ред. А. К. Казанцева, Л. Э. Миндели. – М.: «Экономика», 2004. с. 127



Գծապատկեր 3.3.2. Ագրարային ոլորտում նորամուծական գործունեության խթանման անուղղակի համակարգը

Ագրարային ոլորտում նորամուծական գործունեության պետական աջակցության ուղղության ներքին պետք է լինեն՝

- արտադրության տեխնիկական վերազինման համար բարենպաստ պայմանների ստեղծում, հայրենական և արտասահմանյան առաջավոր գիտատեխնիկական նվաճումների ներդրում, ներքին և արտաքին շուկաներում մրցունակ արտադրանքի արտադրության խթանում,
- գիտատեխնիկական ոլորտում շուկայական հարաբերությունների ձևավորում, որը կնպաստի գիտության նվաճումների ռացիոնալ օգտագործմանը, գիտելիքների և տեխնոլոգիաների տարածմանը, գիտատեխնիկական նվաճումների առևտրայնացմանը,
- բյուջետային ֆինանսական ռեսուրսների, պետական տնտեսական աջակցության այլ ձևերի և արտաբյուջետային միջոցների ուղղում դեպի գերակա ճյուղի ինովացիոն զարգացում,
- նոր աշխատատեղերի ստեղծում ինովացիոն ձեռնարկատիրության ոլորտում,
- ներդրումների խթանման համար պայմանների ստեղծում:

Ագրարային ոլորտում նորամուծական գործունեության ֆինանսավորման կատարելագործման ուղիներն են՝

1. Գիտատեխնիկական հետազոտությունների շարունակական բյուջետային ֆինանսավորման իրականացում:
2. Նորամուծությունների և մրցունակ արտադրանքի ֆինանսավորում: Որպես ֆինանսավորման աղբյուր կարող են հանդես գալ ինչպես արտաբյուջետային միջոցները, այնպես էլ վարկավորումը, պայմանով, որ անհաջողության դեպքում վարկերի մարումն իրականացվելու է բյուջետային միջոցների հաշվին:
3. Պետական բյուջեից ֆինանսավորման իրականացում արագ հատուցման սկզբունքով, ինչը ենթադրում է, որ բյուջետային միջոցները ներդրվում են արդեն իսկ գործող ինովացիոն նախագծերի մեջ: Արագ հատուցում ասելով հասկանում ենք ներ-

դրված միջոցների արագ վերադարձ կամ ոչ նյութական էֆեկտի ձեռքբերում, որը անուղղակիորեն կնպաստի ոլորտի զարգացմանը:

4. Պետական ինովացիոն քաղաքականության իրականացում կարգավորման ոչ թե ուղղակի (որի հիմնական ձևը հանդիսանում է պետատվերի շրջանակում որևէ տեխնոլոգիական հետազոտության իրականացումը), այլ անուղղակի մեթոդների միջոցով: Քանի որ առևտրային կազմակերպությունները մեծամասամբ շահագրգռված չեն հիմնարար հետազոտությունների ֆինանսավորմամբ՝ արդյունքների անորոշության պատճառով, պետական անուղղակի կարգավորման նպատակը պետք է լինի ներդրողների համար գիտատեխնիկական հետազոտությունների ֆինանսավորման պայմանների ստեղծումը: Այս կարգավորումը հնարավոր է իրականացնել հարկային, վարկային, մաքսային արտոնությունների տրամադրման միջոցով:

5. Ինովացիոն նախագծերի իրականացման պետական ներդրումային պորտֆելի ձևավորում՝ հնարավոր ներդրողների շրջանում տեսնդերների, մրցույթների և աճուրդների իրականացման միջոցով: Հնարավոր ներդրողները պետք է ապացուցեն, որ տվյալ ինովացիոն արտադրանքը կգտնի իր սպառողին, իսկ կապիտալ ներդրումները կհատուցվեն սեղմ ժամկետներում: Նման ֆինանսավորման սխեմայի իրագործման համար անհրաժեշտ է մշակել երկու նոր մեխանիզմ՝ ինովացիոն նախագծերի հավաստագրում և ներդրողներին պետական երաշխիքների տրամադրում: Ինովացիոն նախագծի հավաստագրումը հավաստում է նրա որակը և սահմանում է պետական աջակցության չափը, հնարավորություն է ընձեռում իրականացնել ներդրողների ներգրավման աճուրդներ: Նախագծերի հավաստագրումը զգալիորեն բարձրացնում է ներդրողների վստահությունը նրանց նկատմամբ և միևնույն ժամանակ հիմքեր է ստեղծում բանկային վարկերի տոկոսադրույքի նվազման համար: Մասնավոր ներդրողներին պետական երաշխիքների տրամադրումը ենթադրում է պետության կողմից մասնակի հատուցում՝ հավաստագրում անցած ինովացիոն նախագծի ձախողման դեպքում: Երաշխիքների ֆինանսավորումն ապահովելու համար անհրաժեշտ է ձևավորել պետական երաշխիքային ֆոնդ:

6. Ինովացիոն նախագծերի ապահովագրության արդյունավետ համակարգի ձևավորում: Որպես ապահովագրության խրախուսում պետությունը կարող է փոխհատուցել ապահովագրավճարների մի մասը:

7. Ինովացիոն նախագծերի ֆինանսական ռեսուրսների ներգրավման շուկայական մեթոդների նպատակահարմարություն: Որպես գլխավոր հնարավոր ներդրողներ այդ դեպքում հանդես են գալիս վերամշակող ձեռնարկությունները: Նրանց կողմից նոր, կատարելագործված կամ ձևափոխված արտադրանքի վերամշակման ֆինանսավորումը իրականացվում է կամ ներֆիրմային հարաբերությունների շրջանակներում, երբ նորամուծությունների մշակումը իրականացվում է տվյալ կազմակերպության ստորաբաժանումների կողմից, կամ կնքված պայմանագրերի հիման վրա:



## ԵԶՐԱԿԱՑՈՒ ԹՅՈՒՆՆԵՐ

1. Ագրարային ոլորտի արդյունավետ գործունեությունը ենթադրում է անհրաժեշտ ծավալով նյութական և դրամական ռեսուրսների (ներդրումների) ներգրավման հնարավորություն: Ընդ որում, ագրարային ոլորտի կազմակերպություններին ֆինանսավորման միջազգային և խորհրդային ժամանակաշրջանի փորձերի ուսումնասիրությունը ցույց է տալիս այդ գործընթացի պետական կարգավորման անհրաժեշտությունը: Դա պայմանավորված է ոլորտի ռիսկայնությամբ, ցածր եկամտաբերությամբ, բնակլիմայական պայմաններից կախվածությամբ, պարենային անվտանգության ապահովման անհրաժեշտությամբ, գյուղատնտեսական և այլ ապրանքատեսակների գների դիսպարիտետի առաջացմամբ:

2. Ագրարային ոլորտի պետական կարգավորումն իրականացվում է տնտեսական, վարչական և ինստիտուցիոնալ մեթոդներով: Ծուկայական տնտեսության վարման ներկայիս փուլում գյուղատնտեսությունը պահանջում է կարգավորման տնտեսական լծակների արդյունավետ կիրառություն, ինչը հնարավորություն կտա, ներազդելով տնտեսվարողների տնտեսական շահերի վրա, խթանել ոլորտի զարգացումը: Տնտեսական կարգավորումն իրականացվում է հարկային և գնային կարգավորումների միջոցով: Գնային կարգավորումը ներառում է երաշխավորված գների սահմանում, ինտերվենցիոն գնումների և ապրանքային ինտերվենցիաների իրականացում:

3. Չարգացած երկրների փորձը ցույց է տալիս, որ գյուղատնտեսությունը տնտեսության մյուս ճյուղերի համեմատ առավել մեծ չափերով է ենթարկվում պետական կարգավորման: Գյուղատնտեսության զարգացումը գրեթե անհնար է ապահովել առանց պետության համակողմանի աջակցության, որը հիմնականում պետք է ուղղված լինի արտադրողների շահերի պաշտպանությանը, գյուղի սոցիալ-տնտեսական զարգացման ապահովմանը և բնապահպանական միջոցառումների իրականացմանը: ՀՀ պարագայում աջակցության այս կամ այն մեթոդը ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնել բյուջետային միջոցների սղությունը, որի պատճառով զարգացած երկրներում օգտագործվող ուղղակի աջակցության մի

շարք մեթոդներ պարզապես կիրառելի չեն: Մինչդեռ անուղղակի մեթոդների կիրառումը հնարավորություն կընձեռի առավել արդյունավետ օգտագործել առկա սահմանափակ ռեսուրսները:

4. ՀՀ ագրարային ոլորտի, և ընդհանրապես տնտեսության ներդրումային միջավայրի համակողմանի ուսումնասիրությունը թույլ է տալիս բացահայտել նրա ուժեղ և թույլ կողմերը: Ուժեղ կողմերն են՝ գործունեություն ծավալելու համար խոչընդոտները քիչ են, բացակայում են արտահանման մաքսատուրքերը, ներդրումներն օրենսդրորեն պաշտպանված են, առկա է հողի մասնավորեցման հնարավորություն: Մինչդեռ թույլ կողմերը կապված են քաղաքական անկայունության, ստվերային տնտեսության մեծ չափերի, կոռուպցիոն ռիսկերի առկայության, ֆինանսական ռեսուրսների անմատչելիության, գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրության համակարգի բացակայության հետ: Ներդրումային միջավայրի բարելավման համար անհրաժեշտ է սահմանել ագրարային ոլորտում ներդրումների ներգրավման հստակ ռազմավարություն, ձևավորել ներդրումների ներգրավման տեսանելի և ազդեցիկ քաղաքականություն:

5. Ագրարային ոլորտում իրականացվում են պետական աջակցության մի շարք ծրագրեր, որոնք ֆինանսավորվում են պետական բյուջեից և կառավարության պահուստային ֆոնդից: Այդ աջակցության հիմնական նպատակը գյուղատնտեսության ոլորտում գործող տնտեսվարողների համար գործունեության պայմանների ստեղծումն է: Սակայն, ըստ էության, այդ ծրագրերի մեծ մասը նպաստում է ոչ այնքան ոլորտի զարգացմանը, որքան տնտեսական աճի խթանմանը: Այսինքն, պետական աջակցության ծրագրերը բավարար հիմքեր չեն ստեղծում ոլորտի երկարաժամկետ զարգացման համար: Պետական աջակցության ծրագրերի մի մասն էլ շրջանցում է իրական շահառուին և տրամադրվում գյուղատնտեսությանը ծառայություններ մատուցող կազմակերպությունների, որոնց գործունեության արդյունավետությունը գնահատելու համար պատշաճ թափանցիկություն չի ապահովվում: Մինչդեռ պետական աջակցության ծրագրերը, հաշվի առնելով բյուջեային միջոցների սղությունը, պետք է առավել ազույնս հասցեական լինեն:

6. ՀՀ ագրարային ոլորտի ներդրումային միջավայրի բարելավման կարևորագույն նախադրյալներից է օտարերկրյա ներդրումների ներգրավման համար բարենպաստ պայմանների ստեղծումը: Այս ուղղությամբ իրականացվող միջոցառումները պետք է նպաստեն կանխատեսելի և ոչ խտրական նորմատիվ-իրավական բազայի, կայուն մակրոտնտեսական միջավայրի ձևավորմանը: Օրենսդրական առումով, ՀՀ-ում օտարերկրյա ներդրումների համար սահմանված են բավականին նպաստավոր պայմաններ, սակայն միայն դրանք բավարար չեն արտաքին ներդրումների խթանման համար: Մեր կողմից առաջարկվել է ստեղծել ներդրումային գործակալության երկու մոդել՝ առաջինը որպես նախարարության գերատեսչության, երկրորդը՝ անկախ կազմակերպություն: Ներդրումային գործակալության խնդիրները պետք է լինեն օտարերկրյա ներդրումների ներգրավման խթանումը, մասնակցությունը ներդրումային համաժողովներին և ցուցահանդեսներին, ներդրումային նախագծերի գովազդումը, հետններդրումային ծառայությունների մատուցումը:

7. Պետությունը պետք է ակտիվ դերամասնակցություն և նենա գյուղատնտեսական ապրանքների արտահանմամբ զբաղվող ձեռնարկությունների աջակցության գործում: Բարենպաստ պայմաններ պետք է ստեղծվեն նման գործունեությամբ զբաղվելու և այդ ոլորտում գործող կազմակերպությունների քանակի ավելացման համար: Առանձնակի ուշադրություն պետք է դարձվի այն ապրանքատեսակներին, որոնց գծով ՀՀ-ը ունի մրցակցային առավելություններ: Այդպիսի ճյուղերից են հանդիսանում կոնյակազործությունը, գինեգործությունը, ծխախոտագործությունը, ձկնաբուծությունը, ջերմոցային տնտեսություններում բանջարեղենի արտադրությունը: Կոնյակազործության և գինեգործության ոլորտում պետության քաղաքականությունը պետք է ուղղվի խաղողի հումքի մթերման իրավապայմանագրային դաշտի կատարելագործմանը, խաղողի տեսակի և որակի գնի տարբերակման թափանցիկ համակարգի ներդրմանը, իրացման նոր շուկաների ձևավորմանը: Ծխախոտագործության ոլորտում պետական աջակցությունը ցանկալի է ուղղել տոկոսադրույքի 6-10% սուբսիդավորմամբ

վարկերի տրամադրմանը՝ կաթիլային և անձրևային ոռոգման համակարգերի ներդրման համար: Ձկնաբուծության ոլորտում պետական աջակցությունը պետք է նպատակաուղղված լինի կոոպերացիայի զարգացմանը, ինչը փոքր ձկնաբուծարաններին հնարավորություն կընձեռի օպտիմալացնել արտադրության ծախսերը:

8. Ագրարային ոլորտի առջև ծառայած խնդիրների լուծման, մրցակցության բարձրացման տեսանկյունից առանձնահատուկ կարևորվում է գյուղացիական տնտեսությունների համատեղ գործունեությունը՝ կոոպերացիան: Կոոպերատիվների գործունեությունը ուղղված է գյուղացիական տնտեսությունների եկամուտների ավելացմանը, արտադրողականության բարձրացմանը, նոր տեխնոլոգիաների ներդրմանը, համատեղ ջանքերով գյուղտեխնիկայի, պարարտանյութերի, թունաքիմիկատների, ձեռքբերմանը, արտադրանքի իրացմանը, ֆինանսական ծառայությունների մատչելիության ապահովմանը: Կոոպերացիայի խթանման քաղաքականությունը պետք է հանդիսանա ագրարային ոլորտում վարվող պետական քաղաքականության բաղկացուցիչ մասը, որն ուղղված կլինի բարենպաստ իրավական դաշտի ձևավորմանը և կատարելագործմանը, կոոպերատիվների վարկավորման պարզեցմանը, լիզինգի կիրառման համար նպաստավոր պայմանների ստեղծմանը:

9. ՀՀ ագրարային ոլորտի ներդրումային միջավայրի բարելավման տեսանկյունից կարևորվում է վարկային մեխանիզմների կատարելագործումը: Ներկայումս առևտրային բանկերի կողմից տրամադրվող վարկերի տոկոսադրույքները շարունակում են բարձր մնալ, իսկ վարկերի գերակշիռ մասն էլ տրամադրվում է արտարժույթով, ինչը զգալի արտարժույթային ռիսկ է պարունակում ագրարային ոլորտի կազմակերպությունների համար: Պետական տնտեսական քաղաքականությունը պետք է ուղղվի առևտրային բանկերի կողմից ազգային արժույթով վարկավորման գրավչության բարձրացմանը, առևտրային բանկերին էժան և երկարաժամկետ ֆինանսական միջոցներով ապահովմանը, գյուղատնտեսության վարկավորմամբ զբաղվող մասնագիտացված կառույցի ձևավորմանը: Ներկայումս ՀՀ կառավարության

գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորման ծրագրով վարկերը տրամադրվում են ընդամենը երկու տարի ժամկետով, ինչը համարում ենք անբավարար ներդրումների իրականացման համար: Անհրաժեշտ է վերանայել տոկոսադրույքների սուբսիդավորման ժամկետը, ինչպես նաև առավելագույն սահմանաչափը:

10. Ագրարային ոլորտում ներդրումային գործունեության խթանման տեսանկյունից կարևորվում է նորամուծական գործունեության խթանման համակարգի ներդրումը: Նորամուծական գործունեության պետական աջակցության հիմնական ուղղույթն ենք պետք հանդիսանան՝ արտադրության տեխնիկական վերազինման համար բարենպաստ պայմանների ստեղծում, հայրենական և արտասահմանյան առաջավոր գիտատեխնիկական նվաճումների ներդրում, ներքին և արտաքին շուկաներում մրցունակ արտադրանքի արտադրության խթանում:

### **ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒ ԹՅԱՆ ՑԱՆԿ**

1. ՀՀ օրենքը «Ավելացված արժեքի հարկի մասին» ընդունված 14.05.1997 [113]
2. ՀՀ օրենքը «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնց ներմուծումն ազատված է ավելացված արժեքի հարկից» ընդունված 29.06.2001 [112]
3. ՀՀ օրենքը «Օտարերկրյա ներդրումների մասին» ընդունված 31.07.1994 [72]
4. ՀՀ կառավարության 2 փետրվարի 2012 թվականի N 75-Ն որոշումը ՀՀ հողօգտագործողներին մատչելի գներով դիզելային վառելանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագիրը հաստատելու և ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը գումար հատկացնելու մասին [59]
5. ՀՀ կառավարության 6 փետրվարի 2014 թվականի N 150-Ն որոշումը ՀՀ հողօգտագործողներին 2014 թվականի գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի ձեռքբերման նպատակով

պետական աջակցության ծրագիրը հաստատելու, «ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքում և ՀՀ կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի N 1414-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու, ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը գումար հատկացնելու և ՀՀ կառավարության 2013 թվականի օգոստոսի 22-ի N 906-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին [57]

6. ՀՀ կառավարության 6 փետրվարի 2014 թվականի N 151-Ն որոշումը ՀՀ հողօգտագործողներին 2014 թվականի գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով դիզելային վառելանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագիրը հաստատելու, ՀՀ կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի N 1414-Ն որոշման մեջ լրացում կատարելու, ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը գումար հատկացնելու և ՀՀ կառավարության 2013 թվականի օգոստոսի 29-ի N 935-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին [53]
7. ՀՀ կառավարության 7 փետրվարի 2013 թվականի N 84-Ն որոշումը ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը գումար հատկացնելու մասին [60]
8. ՀՀ կառավարության 22 դեկտեմբերի 2011 թվականի N 1802-Ն որոշումը ՀՀ հողօգտագործողներին մատչելի գներով ազոտական պարարտանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագիրը հաստատելու, ՀՀ պետական բյուջեում վերաբաշխում, ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N 1748-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և գումար հատկացնելու մասին [55]
9. ՀՀ կառավարության 24 հունվարի 2013 թվականի N 82-Ն որոշումը ՀՀ հողօգտագործողներին 2013 թվականի գարնան գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով ազոտական պարարտանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագիրը հաստատելու մասին [56]
10. ՀՀ կառավարության 31 մարտի 2011 թվականի N 349-Ն որոշումը ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N 1748-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և ՀՀ 2011

- թվականի պետական բյուջեից ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը գումար հատկացնելու մասին [62]
11. ՀՀ կառավարության որոշումը ՀՀ հողօգտագործողներին 2015 թվականի գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագիրը հաստատելու, ՀՀ 2015 թվականի պետական բյուջեում վերաբաշխում և ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1515-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին [58]
  12. ՀՀ կառավարության N 2310-Ն որոշումը գյուղատնտեսության սուբսիդավորման ուղղությունների և մեխանիզմների մասին հայեցակարգը հաստատելու մասին [18]
  13. ՀՀ կոնյակագործության ոլորտային ռազմավարություն, 2011-2020 [93]
  14. «Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում 2015», ՀՀ ԱՎԾ, Երևան, 2015 [85]
  15. «Արտաքին առևտրով ՀՀ-ից արտահանված առավել բարձր մաքսային արժեք ունեցող ապրանքներ», 2012-2014թթ., ՀՀ Մաքսային ծառայություն [96]
  16. «Գինեգործության զարգացման ուսումնասիրություն ՀՀ Արարատի, Արագածոտնի, Արմավիրի և Կոտայքի մարզերում», ՀԳՏՏՀՀ, Երևան, 2010 [89, 95]
  17. «Գինու արտադրության վերաբերյալ հաշվետվություն», ՀԳՏՏՀՀ, Երևան, 2011 [90, 91]
  18. «Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները և համախառն բերքը 2010 թվականին», ՀՀ ԱՎԾ, Երևան, 2011 [92, 97]
  19. «Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները և համախառն բերքը 2014 թվականին», ՀՀ ԱՎԾ, Երևան, 2015 [98]
  20. Հայաստանի 2002, 2006, 2010, 2014 և 2015 թվականների վիճակագրական տարեգրքեր, ՀՀ ԱՎԾ [3, 84]

21. «Յայ աս տանի Յանրապետոլ թյ ան ար տաքի ն առևտրի կառուցվածքը 2011-2014թթ», ՅՅ ԱՎԾ, Երևան, 2015 [86]
22. «Յայ աս տանի Յանրապետոլ թյ ան ար տաքի ն առևտուրը 2014 թվականին (ըստ ար տաքի ն տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 2-նիշ դասակարգման)», ՅՅ ԱՎԾ, Երևան, 2015 [88]
23. «Յայ աս տանի Յանրապետոլ թյ ան ձկնաբուծության ոլորտի ուսումնասիրությունը», ՅԳՏՏՅՅ, Երևան, 2011 [101, 102]
24. Յայ աս տանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի (ՅԳՏՏՅՅ) գործունեության կանոնակարգ [68]
25. Յայ աս տանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի կատարած ներդրումների վերաբերյալ հաշվետվությունը, Երևան, 2015 [71]
26. «Յայ աս տանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի (ՅԳՏՏՅՅ) և ՅԳՏՏՅՅ ծրագրերի գնահատման» հաշվետվությունը, «ԵՐԵՔ ԱՐ ՍՏՐԱՏԵԳԻԱ» ՍՊԸ – Երևան, 2014 [69, 70]
27. ՅՅ 2011-2014 թվականների պետական բյուջեների կատարման վերաբերյալ հաշվետվությունները [26, 51, 61, 64]
28. ՅՅ 2015 թվականի պետական բյուջեի նախագիծ [51]
29. ՅՅ Կենտրոնական բանկի 2000-2014 թվականների տարեկան տեղեկագրեր [108, 109]
30. ՅՅ Կենտրոնական բանկի «Առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների վարկերն ըստ ոլորտների (ամսական)» հաշվետվությունը [110]
31. ՅՅ-ում առկա ջերմոցային տնտեսությունների մասին հաշվետվությունը. «ԵՐԵՔ ԱՐ ՍՏՐԱՏԵԳԻԱ» ՍՊԸ – Երևան, 2012 [104]
32. «Ներդրումային բարեփոխումների քարտեզ», Վերլուծական հաշվետվությունը Էկոնոմիկայի նախարարության համար. – Երևան, 2015 [47, 74]
33. «Պարենային ապահովությունը և աղքատությունը» 2013-2015 թվականների հաշվետվությունները, ՅՅ ԱՎԾ [2, 54]
34. Ավետիսյան Ս. «Յայ աս տանի գյուղատնտեսությունը և ագրովերամշակումը», Եր.: «Լիմոլշ» հրատ., 2010, 238 էջ [52, 76]



35. Ավետիսյան Ս. ՀՀ ագրարային ոլորտի պետական կարգավորման արդի խնդիրները / Չարգացման ժամանակակից մարտահրավերներ. ՀՊՏՀ 24-րդ գիտաժողովի նյութեր. – Եր.: «Տնտեսագետ», 2015. - 536 էջ [66]
36. Բայադյան Ա. Ֆինանսական միջոցների կազմավորման, օգտագործման և բարելավման ուղիները ՀՀ ագրարային ոլորտում / Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016. - 184 էջ [50]
37. Ավետիսյան Ս. Հովհաննիսյան Ա. Արտահանման կողմնորոշում ունեցող գյուղատնտեսական արտադրության հիմնախնդիրները և լուծման ուղիները. - «Այլընտրանք» գիտական հանդես, N1, 2016թ. - էջ 198-204 [99]
38. Խաչատրյան Ա. Գյուղատնտեսական մթերքների արտադրության և արտահանման վիճակն ու բարելավման հնարավոր ուղիները ՀՀ-ում / «Ֆինանսներ և Էկոնոմիկա» հանդես. N 1-2, 2015. - էջ 98-100 [105]
39. Խաչատրյան Ա. ՀՀ ագրոպարենային արտադրանքի արտահանման և ներմուծման վիճակն ու հաշվեկշռի վերլուծությունը / «Ֆինանսներ և Էկոնոմիկա» հանդես. N 12, 2012. - էջ 16-18 [94]
40. Հարությունյան Չ. Օտարերկրյա ներդրումների ներգրավման խթանումը և համատեղ ձեռնարկատիրության զարգացման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում / «Ագրոգիտություն», գիտական ամսագիր N 12, 2013. - էջ 575-580 [77]
41. Հովհաննիսյան Ա. Ագրարային ոլորտի պետական աջակցության մեթոդները զարգացած երկրներում և դրանց կիրառման հնարավորությունները ՀՀ-ում - «Ագրոգիտություն», գիտական ամսագիր N9-10, 2015. - էջ 349-352 [19]
42. Հովհաննիսյան Ա. «ՀՀ ագրարային ոլորտի ներդրումային միջավայրի բարելավման ուղիները» - «Ագրոգիտություն», գիտական ամսագիր N1-2, 2016. - էջ 11-15 [41]
43. Մելքումյան Մ. ՀՀ կոնյակագործության ոլորտի վերլուծությունը և արտահանման նոր շուկաների թիրախավորումը / Մելքումյան Մ. Ավետիսյան Մ. Հովակիմյան Յ. // «Ֆինանսներ և Էկոնոմիկա» հանդես. N 3-4, 2013. [87]

44. Շիրիսյան Յ. Ներդրումային միջավայրի բարելավման նախադրյալները Հայաստանի Հանրապետությունում / «Ֆինանսներ և Էկոնոմիկա» հանդես. N 7, 2011. - Էջ 18-20 [49]
45. Закон СК от 30.12.97 № 56-3 О краевом бюджете СК на 1998 г. [107]
46. Постановление Правительства РФ от 26.02.99 № 228 О лизинге машиностроительной продукции в АПК РФ с использованием средств федерального бюджета//Российская газета. - 1999. - 16 марта. - № 49 [106]
47. Донченко А.С. Государственная поддержка сельскохозяйственного производства на региональном уровне: Метод, рекомендации. СибНИИЭСХ. Новосибирск, 2009. - 85 с. [14]
48. Евдокимова Т.Г. Теория и практика управления ценами. Санкт-Петербург. 2004. Издательский дом «Нева». - 208 с. [11]
49. Забутый А. Сельское хозяйство Израиля. Hannoversches Jahrbuch Band 3: Ганновер. 2012. - 24с. [36]
50. Максимова В.Ф. Реальные инвестиции / Московская финансово-промышленная академия. М.: МФПА, 2005. - 69 с. [40]
51. Нечитайло А. А. Особенности российской экономики в переходный период. – Самара: Изд-во СГАУ. 2010. – 72 с. [15]
52. Норт Д. Институты, институциональные изменения и функционирование экономики. М.: Начала, 1997. - 237 с. [12]
53. Основы инновационного менеджмента: теория и практика: учеб. пособие / Под ред. А. К. Казанцева, Л. Э. Миндели. – М.: «Экономика», 2004. - 518 с. [118]
54. Трейси М. «Сельское хозяйство и продовольствие в экономике развитых стран: введение в теорию, практику и политику», пер. с англ.. Экономическая школа, 1995. - 421 с. [1]
55. Черняков Б.А. Калифорнийская модель аграрного сектора США. М.:Изд-во ЭРД, ВИАПИ им.А.А.Никонова, 2007. - 396 с. [34]
56. Шумпетер Й.А. «Теория экономического развития». М.: Прогресс, 1982. 401с. [65]
57. Алексеева С.А. Отечественный и зарубежный опыт финансовой поддержки сельского хозяйства / Вестник Финансового университета. – N 3, 2010. - с. 34-41. [32]
58. Гриценко Г.М. Опыт государственной поддержки сельхозтоваропроизводителей в аграрном регионе (на примере Алтайского края) / Экономика, труд, управление в сельском хозяйстве. 2010. - N 2. - с. 28-32 [13]

59. Дохолян С. В., Умавов Ю. Д. Инновационные подходы к повышению эффективности использования ресурсного потенциала агропромышленного комплекса // Ежеквартальный научно-практический журнал Проблемы развития АПК региона. – 2011. – № 4 (8). – с. 73– 76. [116]
60. Иванов В. А. Методологические основы инновационного развития агропромышленного комплекса // Экономические и социальные перемены: факты, тенденции, прогноз. – 2008. – № 2 (2). – с. 50–59. [115]
61. Козырь М.И. Государственное регулирование сельского хозяйства и агропромышленного комплекса в Российской Федерации. / Аграрное и земельное право. 2008. N 9. - с. 4-20. [6]
62. Котов Р.М. Государственная поддержка сельского хозяйства на региональном уровне : монография – Кемерово: ИИО Кемеровского ГСХИ, 2012. – 168 с. [8]
63. Котов Р.М. Сравнительная характеристика систем государственного регулирования и поддержки сельского хозяйства в зарубежных странах. Сборник научных трудов НГТУ; Новосиб. гос. техн. ун-т. Новосибирск, 2007. - Вып. 3(49). - с. 113-118. [16]
64. Кошкарев И.А. Необходимость и пути устранения ценовых диспропорций в зерно-продуктовом подкомплексе. Экономика сельскохозяйственных и перерабатывающих предприятий. 2007. N 2. – 68 с. [10]
65. Кулагин А. С., Леонтьев Л. И. О стимулировании инновационной деятельности, «Недвижимость и инвестиции. Правовое регулирование». – 2002. – № 1 (10). [117]
66. Кучин С.А. Мировой опыт финансовой поддержки аграрного сектора экономики и возможность его адаптации в России / Управление экономическими системами (электронный журнал). – 2012. – 8(44) [20]
67. Луговнина С. М. Направления государственного регулирования инвестиционной деятельности в АПК России / Вестник Казанского технологического университета. 2006. – N 6. - с. 128-133 [17].
68. Писаренко А.Г. Инвестиционное агентство как важный элемент в модернизации отечественной экономики / Доклад, представленный в рамках сессии «Проблемы развития мировой экономики» Второго Российского экономического конгресса. – Суздаль. 2013. [78]
69. Савченко Е. Государственная поддержка АПК. Достижение науки и техники АПК. 2001. - № 1. - с. 2-6. [9]

70. Скрынник Е. Основные направления развития сельского хозяйства России. / Экономика сельского хозяйства России. 2010. N 7. - с. 31-32. [4]
71. Снигирева Г. Д. Формирование механизма регулирования агропромышленного комплекса / Современные проблемы науки и образования. – N 5. 2013. [5]
72. Урсов В. Ф. Государственное регулирование и саморегулирование в системе организационно-экономического механизма АПК регионального уровня. / Экономика сельскохозяйственных и перерабатывающих предприятий. 2001. N 5. - с. 20-23.[7]
73. Шайтан Б. И. Инновации в АПК и роль службы сельскохозяйственного консультирования// Материалы Международной научно-практической конференции «Инновационная деятельность в АПК: опыт и проблемы» (13–14 января 2005 г.). – М., 2005. [114]
74. Bjarnason M., The Political Economy of Joining the European Union. Iceland's Position at the Beginning of the 21st Century, Reykjavik, 2010. - 283 p. [30]
75. Charlton A., Davis N. "Does Investment Promotion Work?", The Berkley Electronic Journal of Economic Analysis and Policy: Vol. 7, Issue 1, Article 42, 2007. - 44 p. [81]
76. Coffey E. Agricultural Finance: Getting the Policies Right.: Food and Agriculture Organization of the United Nations (FAO), 1998. - 71p. [39]
77. Down to earth: straightforward finance for farms and rural businesses. – 2015. 12 p. [29]
78. Farm Commodity Programs in the 2008 Farm Bill, 2008. [33]
79. Gay S.H. Recent evolution of the EU Common Agricultural Policy (CAP): state of play and environmental potential. – MEACAP, 2005. - 58p. [23]
80. German Agriculture Facts and Figures. – Berlin. 2010. 40 p. [28]
81. Jensen N. "Nation-States and the Multinational Corporation: A Political Economy of Foreign Direct Investment", 2008. - 224p. [83]
82. Morisset J., Andrews-Johnson K., "The Effectiveness of Promotion Agencies at Attracting Foreign Direct Investment", FIAS Occasional Paper 16, 2004. - 108p. [82]
83. Niemi J., Ahlstedt J., Finnish Agriculture and Rural Industries, Helsinki, 2014. 98p. [31]
84. Overview of CAP Reform 2014-2020 / Agricultural Policy Perspectives Brief N5. – 2013. - 10p. [27]
85. Schwab K. "The Global Competitiveness Report 2014-2015", World Economic Forum. 2014. [44, 45]

86. Schwab K. "The Global Competitiveness Report 2015-2016", World Economic Forum. 2015. [43, 44, 45]
87. The Common Agricultural Policy – A story to be continued Luxembourg: Publications Office of the European Union, 2012. - 20p. [22]
88. The EU explained: Agriculture, European Union, 2014, 16p. [21]
89. Wells L., Wint A. "Marketing a country: promotion as tool for attracting foreign investment", FIAS Occasional Paper No.1 (Washington D.C.: Foreign Investment Advisory Services). 1990. - 72p. [80]
90. [stats.oecd.org/glossary/detail.asp?ID=864](http://stats.oecd.org/glossary/detail.asp?ID=864) [24]
91. [www.agroekonomika.ru/problemy-selskogo-khozyaistva-indii](http://www.agroekonomika.ru/problemy-selskogo-khozyaistva-indii) [37]
92. [www.armef.com/hy/news/meknabanutyun/hayastany-3-ketov-barelavel-emrcunakutyuny/](http://www.armef.com/hy/news/meknabanutyun/hayastany-3-ketov-barelavel-emrcunakutyuny/) [42]
93. [www.doingbusiness.org/data/exploreeconomies/armenia](http://www.doingbusiness.org/data/exploreeconomies/armenia) [46]
94. [www.europa.eu/rapid/press-release\\_MEMO-13-631\\_en.htm](http://www.europa.eu/rapid/press-release_MEMO-13-631_en.htm) [25]
95. [www.freda.am](http://www.freda.am) [67]
96. [www.kazakhemb.org.il/?CategoryID=228&ArticleID=1239](http://www.kazakhemb.org.il/?CategoryID=228&ArticleID=1239) [35]
97. [www.lawinrussia.ru/node/112027](http://www.lawinrussia.ru/node/112027) [38]
98. [www.minagro.am](http://www.minagro.am) [63, 103]
99. [www.mineconomy.am/uploads/20150304161143332.pdf](http://www.mineconomy.am/uploads/20150304161143332.pdf) [75]
100. [www.rosagroleasing.ru](http://www.rosagroleasing.ru) [111]
101. [www.transparency.org](http://www.transparency.org) [48]
102. [www.waipa.org](http://www.waipa.org) [79]

# ՀԱՎԵԼ ՎԱՃՆԵՐ

Հիմնական միջոցների ֆինանսավորման աղբյուրները և կառուցվածքը

	Ընթացիկ գինը, մլն դրամ					Տեսակարար կշիռը, %				
	2011	2012	2013	2014	2015	2011	2012	2013	2014	2015
պետական բյուջե	18,789.7	16,126.5	15,955.0	7,752.6	15,038.3	8.73	5.20	7.66	4.20	9.58
համայնքների միջոցներ	792.4	150.3	47.3	5,351.5	24.2	0.37	0.05	0.02	2.90	0.02
միջազգային վարկեր	16,510.3	130,227.4	5,661.8	11,932.7	64.7	7.67	41.95	2.72	6.47	0.04
<i>այդ թվում՝</i>										
<i>Համաշխարհային բանկի վարկեր</i>	9,520.8	9,628.7	2,370.8	749.3	64.7	4.42	3.10	1.14	0.41	0.04
<i>Չարգացման և վերականգնողական բանկի վարկեր</i>	2,651.5	2,288.7	-	1,430.2	-	1.23	0.74	-	0.78	-
<i>Ասիական զարգացման բանկի վարկեր</i>	4,338.0	737.4	3,291.0	2,997.0	-	2.01	0.24	1.58	1.62	-
<i>Գերմանիայի զարգացման բանկի վարկեր</i>	-	67.7	-	6,756.2	-	-	0.02	-	3.66	-
<i>այլ</i>	-	117,504.9	-	-	-	-	37.85	-	-	-
մարդասիրական օգնության միջոցներ	6,485.2	760.8	8,151.2	161.1	3,102.3	3.01	0.25	3.91	0.09	1.98
կազմակերպությունների միջոցներ	111,190.8	92,122.5	56,107.5	65,706.8	55,778.3	51.64	29.68	26.95	35.62	35.53
բնակչության միջոցներ	61,534.1	71,022.9	122,299.1	93,587.0	83,002.4	28.58	22.88	58.73	50.73	52.86
<b>Ընդամենը</b>	<b>215,302.5</b>	<b>310,410.4</b>	<b>208,222.8</b>	<b>184,491.7</b>	<b>157,010.2</b>	<b>100.00</b>	<b>100.00</b>	<b>100.00</b>	<b>100.00</b>	<b>100.00</b>
<i>որից՝</i>										
<b>գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն</b>	<b>327.7</b>	<b>4,413.1</b>	<b>8,036.6</b>	<b>2,084.8</b>	<b>1,836.1</b>	<b>0.15</b>	<b>1.42</b>	<b>3.86</b>	<b>1.13</b>	<b>1.17</b>

Կապիտալ ներդրումների ֆինանսավորման աղբյուրները և կառուցվածքը

	Ընթացիկ գինը, մլն. դրամ					Տեսակարար կշիռը, %				
	2011	2012	2013	2014	2015	2011	2012	2013	2014	2015
պետական բյուջե	84,636.2	73,790.5	67,510.5	59,770.7	62,439.1	17.60	15.71	15.26	13.80	13.66
համայնքների միջոցներ	29,620.3	21,752.2	11,980.8	19,877.9	9,138.4	6.16	4.63	2.71	4.59	2.00
միջազգային վարկեր	33,122.7	37,977.1	34,163.1	37,543.1	47,597.5	6.89	8.09	7.72	8.67	10.41
<i>այդ թվում՝</i>										
Համաշխարհային բանկի վարկեր	21,999.4	15,931.6	11,398.5	6,091.5	17,062.1	4.58	3.39	2.58	1.41	3.73
Չարգացման և վերականգնողական բանկի վարկեր	1,337.5	4,747.5	2,491.1	6,255.5	3,227.2	0.28	1.01	0.56	1.44	0.71
Ասիական զարգացման բանկի վարկեր	5,994.3	1,915.7	11,364.5	20,867.6	18,022.3	1.25	0.41	2.57	4.82	3.94
Գերմանիայի զարգացման բանկի վարկեր	2,590.2	10,501.0	6,751.3	2,651.5	1,117.2	0.54	2.24	1.53	0.61	0.24
այլ	1,201.3	4,881.3	2,157.7	1,677.0	8,168.7	0.25	1.04	0.49	0.39	1.79
մարդասիրական օգնության միջոցներ	34,333.6	8,242.5	9,211.8	7,212.0	13,095.0	7.14	1.75	2.08	1.66	2.86
կազմակերպության ներքին միջոցներ	221,889.1	231,217.1	188,446.6	199,966.7	208,785.9	46.15	49.23	42.61	46.16	45.67
բնակչության միջոցներ	77,237.6	96,689.5	130,971.1	108,839.0	116,152.9	16.06	20.59	29.61	25.12	25.40
<b>Ընդամենը</b>	<b>480,839.5</b>	<b>469,668.9</b>	<b>442,283.9</b>	<b>433,209.4</b>	<b>457,208.8</b>	<b>100.00</b>	<b>100.00</b>	<b>100.00</b>	<b>100.00</b>	<b>100.00</b>
<i>որից՝</i>										
<b>գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնորսության</b>	<b>31,399.8</b>	<b>13,723.6</b>	<b>6,984.2</b>	<b>8,927.9</b>	<b>15,198.2</b>	<b>6.53</b>	<b>2.92</b>	<b>1.58</b>	<b>2.06</b>	<b>3.32</b>



ՀԳՏՏԶՀ ներդրումային գործունեության արդյունքում փաստացի տրամադրված և ստացված միջոցները (մլն. դրամ)

h/h	Հոդվածի անվանում	Տրամադրված գումար	Մնացորդներ առ 01/04/2015թ.	Որից, մայր գումար	Կուտակված սուկոսներ և շահաբաժիններ առ 01/04/2015թ.	Հաշվարկված սուբյեկտներ և սուբսուբյեկտներ առ 01/04/2015թ.	ՀԳՏՏԶՀ կողմից ստացված վճարումներ առ 01/04/2015թ.	Այդ թվում մայր գումարի մարումներ և ներդրման ետգնում
<b>Իրականացված ներդրումներ</b>								
1	«Ակվառե Խավտոմատիկա» ՓԲԸ	200.0	342.4	200.0	128.8	13.6	30.1	-
2	«Փյունիկ ՏԹԸ» ՓԲԸ	200.0	-	-	-	-	290.0	200.0
3	«Մեդրոն պահածոների գործարան» ՓԲԸ	50.0	63.5	50.0	13.5	-	9.0	-
4	«Զիզ Թաուն» ՓԲԸ	115.0	247.3	115.0	80.9	51.4	-	-
5	«365 Գրուպ» ՓԲԸ	200.0	255.3	200.0	49.7	5.6	20.0	-
6	«Ագրոլոգ» ՓԲԸ	20.0	27.3	20.0	5.3	2.0	4.8	-
7	«Հարպրոդ» ՓԲԸ	200.0	385.4	200.0	138.2	47.2	20.0	-
8	«Արալեռ ՏՈՏ» ՓԲԸ	90.0	116.6	90.0	25.0	1.6	2.0	-
9	«ՍԻՍ Նատուրալ» ՓԲԸ	200.0	210.3	200.0	10.0	0.3	36.0	-
10	«Արգնի մսամթերք» ՓԲԸ	100.0	100.6	100.0	0.6	-	0.6	-
<b>Տրամադրված փոխառության, այդ թվում՝</b>								
1	«Մեդրոն պահածոների գործարան» ՓԲԸ	40.0	33.6	30.0	3.6	-	23.3	10.0
		48.0	57.8	48.0	8.9	0.9	3.5	-
2	«Զիզ Թաուն» ՓԲԸ	48.0	-	-	-	-	54.6	48.0
3	«Արալեռ ՏՈՏ» ՓԲԸ	110.0	113.6	110.0	3.6	-	2.0	-
		50.0	57.5	50.0	6.0	1.5	9.9	-

4	«ՍԻՍ Նառուրալ» ՓԲԸ	200.0	172.5	169.0	3.5	-	78.9	31.0
5	«Արզնի մսամթերք» ՓԲԸ	70.0	72.0	70.0	2.0	-	-	-

